

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ»
ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

*Հրատարակվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական
խորհրդի երաշխավորությամբ*

Լրատվական գործունեության իրականացնող՝
«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ, գրանցման վկայական
222.210.1449896՝ տրված 04.07.2025թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար

Լ. Դավթյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ «ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ
КОМПЛЕКС МВД РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»
научно-методический журнал
«ЗАЩИТНИК ЗАКОНА»

*Издается по рекомендации Научного совета
Образовательного комплекса МВД Республики Армения*

**ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И
ВКЛЮЧЕН В ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И
ИЗДАНИЙ, В КОТОРЫХ ПУБЛИКУЮТСЯ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ
ДИССЕРТАЦИЙ НА СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК**

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова, 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Лилит Давтян

FOUNDER AND PUBLISHER:
“MIA EDUCATIONAL COMPLEX OF RA” STATE NON-PROFIT ORGANIZATION
“BULWARK OF LAW” scientific-methodical journal
*It is published with the warranty of the Scientific Council
of the MIA Educational Complex of RA*

**THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN
RA’S MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE’S IN
THE ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST**

Address: 0004, Yerevan, 29 Admiral Isakov Avenue,

Official web-cite: www.edupolice.am

E-mail: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary L. Davtyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան**,
Գլխավոր խմբագրի տեղակալ – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտահետազոտական և նորարարությունների գծով աշխատանքները համակարգող պրոռեկտոր **Էմիլ Մարգարյան**,
Պատասխանատու քարտուղար - ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի առաջատար մասնագետ **Լիլիթ Դավթյան**:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան**,

Իրավաբանական գիտությունների դոկտոր **Գրիգոր Բաղիրյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ, ի.գ.թ., դոցենտ, ուստիկանության գնդապետ **Գագիկ Գրիգորյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան**,

ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության պետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան**,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ **Ռաֆիկ Խանդանյան**,

ՀՀ վարչական դատարանի նախագահ, ի.գ.թ. **Կարեն Զարիկյան**,

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Զոն Հայրապետյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ.,

դոցենտ **Դավիթ Թումասյան**,

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան**,

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան**,

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան**,

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ուստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ուստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով**,

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ուստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ **Անդրեյ Անիսին**:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - ректор Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян**

Заместитель главного редактора - проректор по научно-исследовательской и инновационной работе Образовательного комплекса МВД РА **Эмиль Маргарян**

Ответственный секретарь - ведущий специалист отдела научных исследований, инноваций и развития образования Образовательного комплекса МВД РА **Лилит Давтян**.

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА

Проректор по координации учебной работы Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян**

Доктор юридических наук **Григор Бадилян**

Начальник полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент, полковник полиции **Гагик Григорян**

Начальник отдела организации, контроля и обеспечения непрерывного образования Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Артак Мнацаканян**

Заместитель начальника полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Артак Ованнисян**

Начальник Юридического управления МВД РА, кандидат юридических наук **Руслан Марандян**

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент **Рафик Ханданян**

Председатель Административного суда РА, кандидат юридических наук **Карен Зарикян**

Судья Уголовного суда общей юрисдикции РА г.Ереван, кандидат юридических наук **Джон Айрапетян**

Преподаватель кафедры уголовного права и уголовного судопроизводства полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА на договорной основе, кандидат юридических наук, доцент **Давид Тумасян**

Советник председателя Конституционного суда РА, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор **Ашот Хачатрян**

Ректор Академии юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян**

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Ованнес Кочарян**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД России, генерал-майор полиции, доктор технических наук, профессор **Олег Булгаков**

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Александр Парадников**

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор **Максим Бавсун**

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философских наук, доцент **Андрей Анисин**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Գոհար

ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ,
ԴԻԱՆՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ.....7

Առաքելյան Նարինե

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....21

Դավթյան Մելանյա

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....34

Համբարյան Արթուր

ԳՐԱՎԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ (ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ).....50

Մանուկյան Մարտին

ՊԱՌԱՄԵՆՏԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿԱՇԻՌ.....66

Մամիկոնյան Կարեն

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՐԳԱ
ՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....77

Մնացականյան Արտակ, Մահալյան Հասմիկ

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....88

Նալբանդյան Անահիտ

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ
ՆԱԽԱԴԵՊԻ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ.....98

Վարդերեսյան Շուշանիկ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆՎՐԱՍԱՐՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....107

Ֆանարջյան Լիլիթ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ.....119

Акимжанов Ерик

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ В СФЕРЕ ПРОТИВОДЕЙСТВИЯ ДОМАШНЕМУ НАСИЛИЮ:
ОПЫТ КАЗАХСТАНА И ЗАРУБЕЖНЫХ СТРАН.....134

Бондаренко Анна

ПСИХОЛОГИЧЕСКИЕ И ПОВЕДЕНЧЕСКИЕ ПАТТЕРНЫ ЛИЧНОСТИ,
СКЛОННОЙ К ПРОЯВЛЕНИЮ СЕМЕЙНО-БЫТОВОГО НАСИЛИЯ.....142

Гюрджян Гайк

РОЛЬ ОБРАЗОВАНИЯ И ПРОСВЕЩЕНИЯ В ФОРМИРОВАНИИ НЕТЕРПИМОСТИ
К ДОМАШНЕМУ НАСИЛИЮ СРЕДИ МОЛОДЕЖИ.....149

Денисова Анна

РОССДИСЦИПЛИНАРНЫЙ ПОДХОД: ВЗАИМОДЕЙСТВИЕ ПЕДАГОГОВ,
ПСИХОЛОГОВ И СОЦИАЛЬНЫХ РАБОТНИКОВ.
МОДЕЛИ ЭФФЕКТИВНОГО СОТРУДНИЧЕСТВА ДЛЯ ЗАЩИТЫ ДЕТЕЙ.....156

Заббарова Ильнара

ВЛИЯНИЕ КУЛЬТУРНЫХ НОРМ НА ВОСПРИЯТИЕ И ПРОФИЛАКТИКУ
ДОМАШНЕГО НАСИЛИЯ В РАЗНЫХ СТРАНАХ.....165

Ивасюк Ольга

К ПРОБЛЕМЕ ПРЕДУПРЕЖДЕНИЯ СЕМЕЙНО-БЫТОВОГО НАСИЛИЯ:
ТЕОРЕТИЧЕСКИЙ И ПРАКТИЧЕСКИЙ АСПЕКТ.....171

Калинина Светлана

ПОЛНОМОЧИЯ ПОЛИЦИИ В ОСУЩЕСТВЛЕНИИ МЕР
ПРОФИЛАКТИКИ СЕМЕЙНО-БЫТОВОГО НАСИЛИЯ.....179

Косяченко Владимир, Демирчиев Гусейнали

АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВЫЕ МЕХАНИЗМЫ ПРОФИЛАКТИКИ
И ПРЕСЕЧЕНИЯ ПРАВОНАРУШЕНИЙ В СФЕРЕ БЫТА НАСЕЛЕНИЯ.....186

Маргарян Эмиль

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С ВРЕМЕННОЙ ПОДДЕРЖКОЙ ЖЕРТВ
ДОМАШНЕГО И БЫТОВОГО НАСИЛИЯ.....193

Михайлова Елена

АНАЛИЗ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ КРИЗИСНЫХ ЦЕНТРОВ,
ДЛЯ ЖЕНЩИН, НАХОДЯЩИХСЯ В ТРУДНОЙ ЖИЗНЕННОЙ СИТУАЦИИ.....208

Рыбалка Елена

РОЛЬ СОТРУДНИКОВ ОРГАНОВ ВНУТРЕННИХ ДЕЛ В РАННЕМ ВЫЯВЛЕНИИ СЕМЕЙНОГО
НЕБЛАГОПОЛУЧИЯ И ПРОФИЛАКТИКЕ БЕЗНАДЗОРНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ.....213

Серова Диана

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ МЕР ПО ПРОФИЛАКТИКЕ НАСИЛИЯ
В СФЕРЕ СЕМЕЙНО-БЫТОВЫХ ОТНОШЕНИЙ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ.....220

Сисакян Лилиана

РАЗВИТИЕ ИНСТИТУТА ПЕРЕСМОТРА СУДЕБНОГО АКТА
ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ И НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ
В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ.....226

Стащенко Станислав

РОЛЬ УЧАСТКОВОГО УПОЛНОМОЧЕННОГО ПОЛИЦИИ
В ПРОТИВОДЕЙСТВИИ СЕМЕЙНО-БЫТОВОМУ НАСИЛИЮ
(АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОЙ АСПЕКТ).....236

Тумасян Давид

СЕМЕЙНОЕ И БЫТОВОЕ НАСИЛИЕ В ОТНОШЕНИИ ДЕТЕЙ:
ЗАКОНОДАТЕЛЬСТВО И ПРАКТИКА В РА.....242

**ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ,
ԴՐԱՆՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ,
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ**

Գոհար Ադոնց

*ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական
վարչությունների գործունեության վերահսկողության
գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ, Ռուս-Հայկական (Մլավոնական)
համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ Եվրոպական համալսարան,
միջազգային հարաբերությունների և իրավագիտության
ֆակուլտետ, դասախոս
DOI:10.63925/18294847-2025.op20-01*

Անոտացիա: Կանխավարկածները մարդուն տալիս են մեզ շրջապատող իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների հետ մարդկային կապերի, մարդու և առարկաների միջև հարաբերակցության բացահայտման հնարավորություն: Կանխավարկածները մարդկությանն ուղեկցել են պատմության ողջ ընթացքում, և դրանց ակունքները կարելի է տեսնել սովորույթներում և ավանդույթներում: Մարդու գիտակցության մեջ որոշ առարկաներ անխուսափելիորեն համահարաբերակցվում են մյուսների, երբեմն նաև՝ տարասեռ առարկաների հետ, որոնց միջև ձևավորվում է որոշակի կապ, և որը կրում է կա՛մ պատճառահետևանքային, կա՛մ համադրական բնույթ: Կանխավարկածների հասկացության մասին խոսելիս նախ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում «կանխավարկած» եզրույթը:

Մի շարք գիտնականներ անդրադարձել են կանխավարկածի հասկացության սահմանմանը. թեև դրա միանշանակ սահմանումն այդպես էլ մինչ օրս իրավաբանական գիտության մեջ առկա չէ: Այդ սահմանումներն զգալիորեն տարբերվում են միմյանցից, սակայն ունեն նաև որոշակի ընդհանուր հատկանիշներ: Գրեթե բոլոր հեղինակների տված սահմանումներում կարմիր գծով անցնում է այն միտքը, որ կանխավարկածը էմպիրիկ փորձի վրա հիմնված եզրահանգում կամ դատողություն է, որը ճանաչվում է հավաստի և ճշմարիտ, քանի դեռ այն չի հերքվել: Այսպիսով՝ ցանկացած կանխավարկած՝ փորձի արդյունքների ընդհանրացում է, որի միջոցով արտահայտվում են փաստերի միջև՝ որոշակի ժամանակահատվածում դրսևորված կայուն, հաճախ կրկնվող կապերը: Միաժամանակ, քանի որ կանխավարկածն անհերքելի փաստ չէ, ապա տրամաբանական է, որ կանխավարկածի դեպքում հաճախ նկատվող վերոգրյալ կայուն կապերից՝ կարող են լինել շեղումներ:

Վերոգրյալ դիրքորոշումների ընդհանրացման հիման վրա հոդվածում ներկայացվել է կանխավարկածի հնարավոր սահմանումը: Այն է՝

Կանխավարկածը մեծ հավանականություն ունեցող փաստերի կամ իրադարձությունների մասին ենթադրություն է, որը երկարատև կայուն էմպիրիկ փորձի արդյունքում համարնդհանուր ճանաչվում է ճշմարտացի և չի առաջացնում հակառակի մասին ողջամիտ ենթադրություն, ինչպես նաև փաստեր կամ իրադարձություններ, որոնք համարվում են ճշմարտացի՝ հակառակի մասին վկայող ապացույցների բացակայության պատճառով:

Բանալի բառեր՝ կանխավարկած, կանխավարկածի հասկացություն, նախապատվություն, սահմանում:

Կանխավարկածները մարդուն տալիս են մեզ շրջապատող իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների հետ մարդկային կապերի, մարդու և առարկաների միջև հարաբերակցության բացահայտման հնարավորություն: Կանխավարկածները մարդկությանն ուղեկցել են պատմության ողջ ընթացքում, և դրանց ակունքները կարելի է տեսնել սովորույթներում և ավանդույթներում: Մարդու գիտակցության մեջ որոշ առարկաներ անխուսափելիորեն համահարաբերակցվում են մյուսների, երբեմն նաև՝ տարասեռ առարկաների հետ, որոնց միջև ձևավորվում է որոշակի կապ, և որը կրում է կա՝մ պատճառահետևանքային, կա՝մ համադրական բնույթ¹:

Այս ամենով պայմանավորված՝ մարդկային գիտակցության մեջ առաջանում են իրեն շրջապատող առարկաների և երևույթների վերաբերյալ իր պատկերացումները, գաղափարներն ու համոզմունքները, որոնք մարդն արտահայտում է կանխավարկածների օգնությամբ:

Մտածողության և ճանաչողական գործընթացում, այդ թվում նաև գաղափարական մտածողություն ձևավորելիս, կանխավարկածի կարևոր դերը պայմանավորված է նրանով, որ մարդկանց կյանքում առարկաների և երևույթների ճանաչումը տեղի է ունենում կանխատեսվող գիտելիքին առնչվող իմացաբանական և արժեքաբանական դրույթների ազդեցության ներքո: Ավելին, ելնելով այն գաղափարից, որ կանխավարկածի հիմքն առարկաների և երևույթների որոշակի օրինաչափությունների վերաբերյալ մեր պատկերացումները, համոզմունքներն ու գաղափարներն են, ապա ստացվում է, որ տարբեր իրավիճակներում որևէ օրինաչափություն տեսնելու, այդ թվում նաև դրա գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է միջոց, որպիսին կանխավարկածն է, որն իր հիմքում արդեն իսկ կրում է այդ օրինաչափությունը, այդ օրինաչափության վերաբերյալ մարդկային մտածողության մեջ ձևավորված արժանահավատ գիտելիքը:

Կանխավարկածների հասկացության մասին խոսելիս նախ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում «կանխավարկած» եզրույթը:

¹ Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>

Ստուգաբանորեն կանխավարկած եզրույթը մի քանի իմաստ ունի՝

1) վաղաժամ օգտագործում, նախնական օգտագործում.²

2) ենթադրություն, ակնկալիք, հույս, ձգտում.³

3) առարկությունների կանխատեսում, դրանց նախօրոք հերքում.⁴

4) նախապաշարմունք.⁵

5) հաստատականություն.⁶

Իրավաբանական մեծ բառարանում «կանխավարկած» եզրույթը բացատրվում է, որպես հավաստի ենթադրություն, քանի դեռ հակառակն ապացուցված չէ»:⁷

Լատիներեն-ռուսերեն մեկ այլ բառարանում «կանխավարկած»-ը բացատրվում է որպես մտադրություն, նախազգուշացում, նախապաշարմունք, երազկոտություն, ակնածանք, չափից ավելի վստահություն, ամբարտավանություն⁸: Ներկայումս այս եզրույթն ավելի հաճախ օգտագործվում է «ենթադրություն» իմաստով:

Այսպիսով՝ Ֆ.Ա. Բրոքհաուսի և Ի.Ա. Եֆրոնի բառարանում «կանխավարկած»-ը մեկնաբանվում է որպես «դրույթներ, որոնք հաստատում են փաստերի կամ իրադարձությունների առկայությունը՝ առանց դրանց գոյության լիարժեք ապացույցների: Դրանք անհրաժեշտ են այնտեղ, որտեղ հնարավոր չէ հասնել երևույթների ամբողջական ապացուցման, և ստիպված ենք լինում բավարարվել միայն հավանական եզրակացություններով»⁹:

1939 թվականին հրատարակված «Ռուսաց լեզվի բացատրական բառարան»-ի հեղինակները «կանխավարկած» եզրույթը ևս սահմանում էին որպես հավանական նախադրյալների վրա հիմնված ենթադրություն:

Մի շարք գիտնականներ անդրադարձել են «կանխավարկած» հասկացության սահմանմանը, թեև դրա միանշանակ սահմանումն այդպես էլ մինչ օրս իրավաբանական գիտության մեջ առկա չէ: Այսպես, դեռևս հռոմեական իրավունքից հայտնի «կանխավարկած» եզրույթը կիրառվել է տարբեր առումներով: Մասնավորապես Ֆ.Մ. Դիդինսկին, վերլուծելով հռոմեական իրավունքի աղբյուրները, արձանագրել է, որ «կանխավարկած» ասելով հասկանում ենք «յուրացում», «նախապատվություն»¹⁰: Մեկ այլ հեղինակ Վ.Կ. Բաբանը կանխավարկածը սահմանում

² St' u Толковый словарь русского языка. Т. III. - М.: Гос. изд-во иностр. и нац. словарей, 1939. - էջ 735;

³ St' u Кондаков, Н. И. Логический словарь / Н. И. Кондаков. - М.: Наука, 1971. - էջ 414.

⁴ St' u Ожегов, С. И. Словарь русского языка / С. И. Ожегов. - М.: Изд-во «Советская энциклопедия», 1972. - էջ 535.

⁵ St' u Латинско-русский лексикон. - М.: Изд-во иностр. словарей, 1960. - էջ 370.

⁶ St' u Энциклопедический словарь. Изд-ли Ф. А. Брокгауз

⁷ St' u Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Д. Зорькина, В.Е. Крутских. М.: ИНФРА-М, 1999. էջ 535.

⁸ St' u Латинско-русский лексикон. - М.: Изд-во иностр. словарей, 1960. - էջ 370.

⁹ St' u Энциклопедический словарь. Изд-ли Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. - Т. XXV. - СПб.: Типолитограф. И. А. Ефрона, 1898. - էջ 52.

¹⁰ St' u Дыдинский Ф.М., Латинско-русский словарь к источникам римского права. Изд. тип. К. Ковалевского, Варшава, 1896, էջ 354, Дворецкий И.Х., Корольков Д.Н., Латинско-русский словарь. М.: Изд. Госиздат, 1949, էջ 697:

է որպէս իրավական նորմերում ամրագրված իրավական փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ ենթադրություններ¹¹, Ա.Կ. Մերգունը կարծում է, որ ապացուցողական կանխավարկածն օրենքով սահմանված ենթադրություն է առ այն, որ որոշակի փաստ գոյություն ունի, եթե ապացուցված են դրան առնչվող որոշ այլ փաստեր¹², Յու.Կ. Օսիպովը տալիս է կանխավարկածի մեկ այլ սահմանում. «յուրաքանչյուր ենթադրություն որոշակի եզրակացություն է, որն արվում է որոշակի փաստերի գոյության մասին որոշ արդեն իսկ հայտնի փաստերի հիման վրա»¹³ Մեկ այլ հեղինակ Յա.Լ. Շտուտինը պնդում է, որ կանխավարկածը «տրամաբանական հնարք է, որը թույլ է տալիս դատարանին օրենքով նախատեսված դեպքերում, կամ երբ դա բնական ձևով բխում է օրենքի իմաստից, փնտրվող փաստի գոյությունը կամ բացակայությունը ճանաչել իրական՝ առանց դա մատնանշող կողմից ապացույց պահանջելու, ինչպէս նաև այն դնել դատական ակտի հիմքում, եթե այդ իրավական փաստը, սոցիալական պրակտիկայի վրա հիմնված ենթադրությամբ, հանդիսանում է ապացուցողական փաստի (փաստերի) ուղղակի հետևանք կամ պատճառ և միաժամանակ չի հերքվել դատավարության ընթացքում»¹⁴

Մեկ այլ հայ հեղինակ Գ.Վիրաբյանն իր հեղինակած հոդվածում արձանագրել է, որ գոյաբանական առումով կանխավարկածը ձևավորվում է շրջապատող աշխարհի երևույթների, փաստերի, գործընթացների, իրադարձությունների, գործողությունների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների նկատմամբ սուբյեկտի համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների հիման վրա և պայմանավորված է այդ առարկաները, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունները տեսնելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ է տալիս պնդելու, որ արդեն ճանաչողական գործունեության մեջ կանխավարկածը կատարում է իմացաբանական դեր¹⁵

Մի կողմից՝ ճանաչողական գործընթացը կարծես չի պահանջում վերջնական անհերքելի ճշմարտության սահմանում, սակայն մյուս կողմից էլ՝ վերջինիս համար անհրաժեշտ են որոշակի ելակետային դրույթներ, որոնք ձևավորում են, կամ որոնց միջոցով մենք արտահայտում ենք շրջապատող աշխարհի առարկաների նկատմամբ վերաբերմունքը: Վերջիններիս վերաբերյալ այդ կերպ վերաբերմունքն իմացաբանական առումով արտահայտվում է կանխավարկածների՝ անհրաժեշտ ճշմարտության «փոխարինիչների» կամ որ նույնն է՝ կանխադրույթների միջոցով¹⁶

¹¹Տե՛ս Бабаев В.К. Презумпции в советском праве. Горький, 1974. էջ 14.

¹²Տե՛ս Гражданский процесс / Под ред. М.С. Шакарян. М., 1993. էջ 187.

¹³Տե՛ս Гражданский процесс / Отв. ред. проф. Ю.К. Осипов. М., 1996. էջ 173.

¹⁴Տե՛ս Штутин Я.Л. Предмет доказывания в гражданском процессе. М., 1963. էջ 86.

¹⁵Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը Որպէս Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>

¹⁶Տե՛ս Гусева С.В., Место и роль презумпций в структуре юридического знания: философский анализ: дисс. канд. филос. наук. Саратов, 2009, էջ 58:

Կանխավարկածը նկարագրում է ինչ-որ իրականություն, որը կրում է պայմանական բնույթ և կիրառվում է որպես ճշմարտություն, քանի դեռ հակառակը չի ապացուցվում:¹⁷

Կանխավարկածները հետազոտության առարկա են ոչ միայն իրավագիտության, այլև փիլիսոփայության, հոգեբանության, տրամաբանության և մի շարք այլ գիտությունների համար, որի պատճառով էլ մինչ օրս առկա չէ միասնական սահմանում. կարծիքները տարբեր են կանխավարկածների բովանդակության, բնույթի, տեսակների և դրանց դասակարգման հարցերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, «կանխավարկած» եզրույթը, դրա տարբեր գիտության ճյուղերում (սոցիոլոգիայի, փիլիսոփայության, քաղաքագիտության, պատմության, իրավունքի և այլն) կիրառմանը զուգահեռ, ուսումնասիրվում և գործածվում է հիմնականում որպես իրավական կատեգորիա:

Փիլիսոփայական տեսանկյունից դիտարկելիս կարելի է եզրակացնել, որ կանխավարկածները ոչ միայն մասնավոր իրավական գործիքներ են, այլ նաև դրանց միջոցով կարելի է հասկանալ որոշակի հասարակության շերտերի իրավագիտակցության առանձնահատկությունները: Ընդ որում՝ կանխավարկածը հստակ արտացոլում է հասարակությունում առկա այս կամ այն տիպի աշխարհայացքը, շրջապատում առկա երևույթների և առարկաների նկատմամբ վերաբերմունքը և, ընդհանրապես, հասարակությունում գերակշռող գաղափարական մոտեցումները:

Կանխավարկածների առանձնահատկությունն այն է, որ վերջիններս ունեն բարձր հավանականության հատկանիշ: Կանխավարկածի առկայության դեպքում պարտադիր է հիմնական փաստի հայտնաբերման և ենթադրվող փաստի ձևավորման միջև պատճառահետևանքային կապը, այսինքն՝ պարտադիր է, որպեսզի ենթադրվող փաստի, այլ կերպ ասած՝ կանխավարկած հանդիսացող փաստի առաջացման պատճառ դառնա հիմնական, արդեն իսկ հաստատված փաստը: Վերոգրյալի կապակցությամբ՝ ակնհայտ է, որ ենթադրվող, որևէ ապացույցով չհաստատված փաստը դեռևս անհայտ փաստն է, որն էլ, ըստ էության, հիմնական փաստի գոյությունից բխող նոր փաստն է: Արդեն իսկ գոյություն ունեցող հիմնական փաստը կամ փաստերը կարող են հաստատվել ապացույցներով կամ այլ կանխավարկածներով: Կարևոր առանձնահատկությունն այն է, որ հիմնական փաստը կամ փաստերը, որոնցից դուրս են բերվում այլ փաստեր, արդեն իսկ հաստատված են ճանաչողական գործընթացի միջոցով: Դեռևս չհաստատված կանխավարկած հանդիսացող փաստի մասին որոշակի եզրակացությունը ենթադրվում է կամ բխում է արդեն իսկ տարբեր գործընթացների արդյունքում հաստատված կամ բացահայտված փաստից, և դրա մասին եզրակացության հանգեղու համար ապացույց չի պահանջվում:

«Կանխավարկած» եզրույթը «ենթադրություն» իմաստով լայնորեն կիրառվում է ինչպես գիտության մեջ, այնպես էլ մարդկանց ամենօրյա գործունեության մեջ: Հարկ է նշել, որ թեև կանխավարկածը հաճախ հավասարեցվում է «ենթադրություն» եզրույթին,

¹⁷ Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը Որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>:

սակայն բոլոր ենթադրությունները կանխավարկածներ չեն: Որոշ փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ ինչ-որ իրադարձություն կամ երևույթ տեղի կունենա. օրինակ՝ արևի ժամանակ անձրև եկավ, ուստի երկնքում ծիածան կհայտնվի, սակայն ծիածանի առաջացման մասին ենթադրությունը կանխավարկած չէ: Այլ կերպ ասած՝ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր հավասարության նշան դնել ենթադրության և կանխավարկածի միջև:

Կանխավարկածին բնորոշ է այն, որ երկարատև դիտարկումների արդյունքում բացահայտվում է փաստերի միջև առկա կայուն կապը, հետևաբար, որևէ փաստի առաջացում ենթադրում է նաև վերջինիս առնչվող մեկ այլ փաստի գոյություն, որ հատուկ ապացուցում չի պահանջում: Կանխավարկածը կարող է նաև ձևավորվել բացասական կերպով, այսինքն՝ եթե որևէ փաստ բացակայում է, ապա բացակայում է նաև առաջինին առնչվող մեկ այլ փաստ: Օրինակ՝ եթե անձը չի հասել քրեական պատասխանատվության սահմանված տարիքի, ապա դա ենթադրվում է, որ վերջինս չի գիտակցում իր արարքի հակաիրավականությունը:¹⁸

«Կանխավարկած» հասկացությունը, դիտարկելով տրամաբանության տեսանկյունից, պետք է նշել, որ յուրաքանչյուր կանխավարկած ունի հիպոթետիկ բնույթ, քանի որ այն հաստատված կամ բացահայտված չէ որևէ ապացույցով, այլ բխում է որևէ այլ դրույթից: Օրինակ՝ «եթե կա Ա-ն, ապա մեծապես հավանական է, որ կա նաև Բ-ն»: Հիպոթետիկությունը դրսևորվում է ոչ միայն հաստատական երևույթներում, այլ նաև բացասական դատողություններում, օրինակ՝ «Եթե չկա Ա, ապա, ամենայն հավանականությամբ, չկա նաև Բ»: Քրեադատավարական տեսանկյունից բացասական հիպոթետիկ կանխավարկածները կարող են դրսևորվել որևէ փաստի ապացուցվածության գնահատման դեպքերում. օրինակ՝ եթե ապացույցներ հավաքելու՝ օրենքով սահմանված կարգն էականորեն խախտված է, ապա այս կերպ հաստատված հանգամանքները, ամենայն հավանականությամբ, չեն համապատասխանում իրականությանը: Սակայն հատկանշական է, որ որևէ բնույթի կանխավարկած քրեադատավարական նորմերում ձևակերպված չի որպես ենթադրություն կամ հավանական երևույթ, այլ որպես փաստ կամ կանոն:

Կանխավարկածների մասին խոսելիս նաև անհրաժեշտ է դրանք տարբերակել հարակից հասկացություններից, ինչպիսիք են հիպոթեզը, աքսիոման և ֆրիկցիաները:

Այսպես, աքսիոման ճշմարտություն է, որն ապացուցման կարիք չունի: Ի տարբերություն աքսիոմայի՝ կանխավարկածի հերքումը չի բացառվում: Աքսիոմայի ճշմարտացիությունը բխում է միայն փորձից, և դրանում հավանականության աստիճանը գրեթե հավասարեցվում է զրոյի¹⁹:

¹⁸ Տե՛ս Дрягин Михаил Александрович, ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, էջ

¹⁹ Տե՛ս Ойгензихт, В. А. Презумпции в советском гражданском праве / В. А. Ойгензихт. - Душанбе: Изд-во «Ирфон», 1976. էջ 12.

ՅԱ. Լ. Շտուտինն արքսիոման ներկայացնում էր որպես ակնհայտ ճշմարտություն, որում բացակայում են բացառությունները, իսկ կանխավարկածը՝ որպես ակնհայտ ճշմարտություն, որի համար բացառություններ են անհրաժեշտ: Միևնույն ժամանակ, նա արքսիոման անվանում էր հանրաճանաչ փաստ՝ ընդձեռնով, որ հանրաճանաչություն՝ չի նշանակալանում անվիճելիություն:²⁰

Հիպոթեզը փաստերը, երևույթները և դրանց պատճառները բացատրելու համար նախատեսված տրամաբանական տեխնիկա է: Այն սկզբնական ենթադրություն է, որը հետագայում փորձերի միջոցով հաստատվում է, հերքվում կամ փոփոխվում է՝ հիմնվելով հենց այդ փորձերի արդյունքների վրա:

Հետևաբար, կանխավարկածը հիպոթեզից տարբերվում է իր իմացաբանական դերով, որի նպատակն է կանխորոշել սուբյեկտի վերաբերմունքը շրջապատող աշխարհի առարկաների նկատմամբ:²¹ Այսինքն՝ կանխավարկածի տարբերությունը հիպոթեզից այն է, որ կանխավարկածը ոչ թե ենթադրություն է, որը հետագայում հաստատվում, հերքվում կամ փոփոխվում է, այլ որոշակի օրինաչափությունից ենթադրվող, բխող դատողություն է, որն էլ հիմնված է որոշակի օրինաչափության վրա:

Ակնհայտ է, որ եթե որևէ փաստ արդեն հաստատվել է, ապա այն արդեն իսկ կարող է դրվել որևէ որոշման հիմքում, և դրա իսկությունն այլևս ստուգման կարիք չունի, հետևաբար, նման դեպքում նաև բացակայում է կանխավարկածների անհրաժեշտությունը: Սակայն այն դեպքերում, երբ կարիք կա նոր գիտելիք ձեռք բերելու, նոր փաստեր հաստատելու, կանխավարկածները մեծ դերակատարում ունեն, քանի որ դրանց միջոցով լրացվում է այդ բացը: Հաստատուն, ստուգված գիտելիքի բացը հնարավոր է լրացնել կանխավարկածների օգնությամբ, քանի դեռ մեկ այլ հաստատուն գիտելիքով, փաստով չի հերքվել կանխավարկածը:

Յա. Լ. Շտուտինը նշել է, որ հիպոթեզը երբեմն հանդես է գալիս որպես վարկած, երբեմն՝ որպես ենթադրություն, բայց այն դատարանի կողմից երբեք չի կարող ընդունվել որպես ճշմարտություն՝ առանց դրանք հիմնավորող ապացույցների՝ ի տարբերություն իրավական կանխավարկածի, որը դատարանի կողմից կարող է ընդունվել որպես ապացույց, քանի դեռ այն չի հերքվել ողջամիտ ապացույցներով:²²

Վ.Կ. Բաբանը կանխավարկածի և հիպոթեզի մեջ տարբերությունը տեսնում է հերքման պայմանների և պատճառների առաջացման, դրա բնույթի և հետևանքների, ինչպես նաև նորմերում արձանագրման մեջ: Նրա կարծիքով՝ հիպոթեզն առաջանում է, երբ դեռ ամեն ինչ այնչափ փորձարկված չէ, որպեսզի առաջ քաշվեն թեորիաներ, իսկ կանխավարկածները գործնականում մշտական հաստատում են գտնում: Ըստ Վ. Կ.

²⁰ Ст' у Штутин Я.Л. Предмет доказывания в советском гражданском процессе: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1964. էջեր 87, 89.

²¹ Ст' у Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը Որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>:

²² Ст' у Штутин, Я. Л. Указ. раб. - С. 87, 89. В пер. с лат. «третьего не дано, или-или» (Современный словарь иностранных слов. - СПб.: Дуэт, 1994. - էջ 740).

Բաբանի՝ հիպոթեզը հիմնված է խիստ գիտական ենթադրության վրա, իսկ կանխավարկածը հաճախ հիմնված է ամենօրյա փորձի վրա, հիպոթեզը մեր գիտելիքների հետագա շարժման համար պայման է, դրա ստուգելիությունը հարաբերական է, իսկ կանխավարկածը բացարձակ է, և, միաժամանակ, հերքված հիպոթեզը դադարում է գոյություն ունենալ, իսկ կանխավարկածն ընդհանուր առմամբ կարող է մնալ անսասան, թեև այն կարող է հերքվել կոնկրետ դեպքի շրջանակներում²³:

Մ.Ս. Ստրոգովիչը նույնիսկ կանխավարկածը, ավելի ճիշտ՝ դրա իմաստներից մեկը, նույնացնում է հիպոթեզի հետ՝ սահմանելով այն որպես փաստի հավանականության վրա հիմնված ենթադրություն:

Երբեմն կանխավարկածները բարդ է տարբերակել այսպես կոչված ֆիկցիաներից: Այնուամենայնիվ, նրանք ունեն էական տարբերություններ, և այս կատեգորիաների տարբերակումը ևս կարևոր նշանակություն ունի:

Վ.Ի. Կամինսկայան գրել է, որ կանխավարկածն ստեղծվում է բանականությամբ, իսկ ֆիկցիան՝ երևակայությամբ²⁴: Ֆիկցիայի դեպքում ակնհայտ կեղծ դատողություններն ընկալվում են որպես ճշմարիտ, մինչդեռ կանխավարկածին բնորոշ է ճշմարտացիության բարձր հավանականության հատկանիշ, քանի որ այն դուրս է բերվում որոշակի հաստատուն օրինաչափությունից: Այս պատճառով էլ, կարծում ենք, Վ.Կ. Բաբանի կարծիքն այն մասին, թե և՛ ֆիկցիան, և՛ կանխավարկածը պայամնականորեն ընդունվում են որպես ճշմարտություն, հիմնավոր չէ²⁵: Կանխավարկածի դեպքում ակնհայտ կեղծ, ոչ ճշմարտացի դատողությունները չեն կարող ընդունվել և օգտագործվել:

Ամերիկյան մի շարք հեղինակներ, քննարկելով կանխավարկածների էությունը, նշում են, որ նախկինում, ըստ մեծամասնության, կանխավարկածը «ոչ մի բանի ապացույց չէ», և որպես հիմնավորում՝ վկայակոչվում էին դատարանի նախկին որոշումները, մասնավորապես՝ *Scarpelli v. Washington Water Power Company-ի գործով*²⁶՝ պնդելով, որ ենթադրությունն ապացույցի հետ երբևէ չպետք է մի նժարի վրա դրվի, և երբ հակառակ կողմը ներկայացնում է *prima facie* ապացույց, կանխավարկածը կորցնում է իր ուժը և այլևս չի ծառայում իր նպատակին:²⁷

Ամերիկյան գրականության մեջ շատ կարևոր անդրադարձ է կատարվում նաև փաստի կանխավարկածին: Փաստի կանխավարկածը նկարագրվում է որպես մեկ փաստի առկայությունից մյուսի առկայությունը պարզելու գործընթաց՝ առանց որևէ օրենքի կիրառման օգնության:²⁸ Կանխավարկածը բխում է կոնկրետ գործի փաստական

²³ Տե՛ս Бабаев, В. К. Презумпции в советском праве. - Горький. ... էջեր 21, 22.

²⁴ Տե՛ս Каминская В. И. Учение о правовых презумпциях в уголовном процессе. - М.; Л.: Изд-во АН СССР, 1948. էջ 44.

²⁵ Տե՛ս Бабаев, В. К. Презумпции в советском праве. - Горький. էջ 32.

²⁶ Տե՛ս Wash. 18, 114 Pac. 870 (1911).

²⁷ Տե՛ս Wigmore. 5 WIGMORE, EVIDENCE (2d ed. 1923) § 2491, էջ 452.

²⁸ Տե՛ս GREENLEAF, EVIDENCE (16th Ed), §48.

հանգամանքներից՝ սովորական պատճառաբանության կամ դրանց բացատրության միջոցով, այլ ոչ թե օրենքի որևէ կանոնի ուժով:²⁹ Դա եզրակացություն է, որը, որպես կանոն, տվյալ փաստական հանգամանքներից ելնելով, կարող է անել ողջամիտ անձը:

Իրավաբանական գրականության մեջ տրված են կանխավարկածի տարբեր սահմանումներ:

Մասնավորապես.

- հանգամանքների կամ իրավիճակների բնական ընթացքից բխող եզրահանգումներ:³⁰

- մոտավոր ընդհանրացումներ, որոնք թույլ են տալիս բացատրություններ՝ հիմնված որոշակի հաջորդականությամբ կրկնվող երևույթների վերաբերյալ էմպիրիկ եզրակացությունների վրա:³¹

- էմպիրիկ ճշմարտություն՝ հիմնված հավանականության հիման վրա:³²

- ենթադրություն, որը ինդուկտիվ եզրակացության տեսակ է:³³

- փիլիսոփա-տրամաբանական կատեգորիա, որը ինդուկտիվ բնույթի ընդհանրացում է, որն ընդհանրացնում է կապերը, նմանատիպ երևույթները, որոնցից էլ ենթադրություն է արվում որոշակի տիպիկ իրավիճակում ինչ-որ երևույթի կամ ինչ-որ փաստի առկայության մասին: Կանխավարկածի ճշմարտացիության մասին եզրակացությունը հիմնվում է կյանքի փորձի վրա, և դրա ձևավորման մեթոդը համարվում է թերի ինդուկցիա, որը ենթադրում է կանխավարկածային ընդհանրացումների հավանականություն:³⁴

- ընդհանուր կանոն, որն արտացոլում է իրադարձությունների և փաստերի միջև կայուն և հաճախակի հանդիպող կապերը:³⁵

- դրույթ, որը ձևավորում է ամենատարածված, ամենահաճախ հանդիպող որևէ հարաբերություններ:³⁶

- ենթադրություն, որը հասկացվում է որպես ճշմարիտ, քանի դեռ հակառակն

²⁹ St' u Anderson v. Horlick's Malted Milk Co., 137 Wis. 569, 579, 119 N.W. 342 (1909).

³⁰ St' u Строгович, М. С. Учение о материальной истине в уголовном процессе / М. С. Строгович. - М., Л.: Изд-во АН СССР, 1947. - էջ 181.

³¹ St' u Каминская, В. И. Учение о правовых презумпциях в уголовном процессе / В. И. Каминская. - М., Л.: Изд-во АН СССР, 1948. - էջ 29.

³² St' u Левенталь, Я. Б. К вопросу о презумпциях в советском гражданском процессе / Я. Б. Левенталь // Советское государство и право. - 1949. - № 6. - էջ 55.

³³ St' u Штутин, Я. Л. Предмет доказывания в советском гражданском процессе / Я. Л. Штутин. - М.: Юрид. лит., 1963. - С. էջ 84.

³⁴ St' u Дрягин Михаил Александрович, ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, էջ 16

³⁵ St' u Теория доказательств в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1973. - էջ 343 ^автор параграфа И. Л. Петрухин).

³⁶ St' u Ожегов, С. И. Словарь русского языка / С. И. Ожегов. - М.: Изд-во «Советская энциклопедия», 1972. - էջ 535.

ապացուցված չէ: Ենթադրել՝ նշանակում է բարեխղճորեն, վստահորեն որոշ դատողություն համարել ճշմարիտ, քանի դեռ այն չի հերքվել.³⁷

- որոշակի փաստի առկայության կամ բացակայության մասին պայմանականորեն ճշմարիտ ճանաչված ենթադրություն:³⁸

Եզրակացություն:

Ինչպես երևում է, վերը նշված սահմանումներն զգալիորեն տարբերվում են միմյանցից, սակայն ունեն նաև որոշակի ընդհանուր հատկանիշներ: Գրեթե բոլոր հեղինակների տված սահմանումներում կարմիր գծով անցնում է այն միտքը, որ կանխավարկածը էմպիրիկ փորձի վրա հիմնված եզրահանգում կամ դատողություն է, որը ճանաչվում է հավաստի և ճշմարիտ, քանի դեռ այն չի հերքվել: Այսպիսով՝ ցանկացած կանխավարկած փորձի արդյունքների ընդհանրացում է, որի միջոցով արտահայտվում են փաստերի միջև որոշակի ժամանակահատվածում դրսևորված կայուն, հաճախ կրկնվող կապերը: Միաժամանակ, քանի որ կանխավարկածն անհերքելի փաստ չէ, ապա տրամաբանական է, որ կանխավարկածի դեպքում հաճախ նկատվող վերոգրյալ կայուն կապերից կարող են լինել շեղումներ:

Ըստ Մ. Ա. Դրյագինի՝ կանխավարկածի վերաբերյալ բոլոր տեսակետները ճիշտ են, եթե կանխավարկածն ընկալենք միայն որպես տրամաբանական հասկացություն, որպես ապացուցման մեթոդներից մեկը: Միննույն ժամանակ, ըստ նրա՝ կանխավարկածը նաև ավելի լայն հասկացություն է. եզրակացություն՝ ոչ միայն մասնավոր դրույթներից, այլ ոչ միայն էմպիրիկ, այլև տրամաբանական ու տեսական ընդհանրացումներից, համեմատությունների ու դատողությունների համադրումից:³⁹

Նրա կարծիքով՝ կանխավարկածը և ենթադրությունը նույնական հասկացություններ են, սակայն «ենթադրություն» ընդհանուր հասկացությունից առանձնանում է որոշակի տեսակ, որն էլ հենց իրավաբանական ենթադրությունն է: Այս ենթադրությանը տրվում է «կանխավարկած» պայմանական անվանումը, որը բնութագրում է միայն ենթադրության իրավական կողմը:

Անդրադառնալով Մ.Ա.Դրյագինի վերոգրյալ կարծիքին՝ կարծում ենք, որ կանխավարկածներն ու ենթադրությունները չեն տարբերվում նրանով, որ կանխավարկածներն այսպես ասած՝ իրավաբանական ենթադրություններն են: Իրավաբանական ենթադրությունները կարող են կանխավարկածների տեսակներից մեկը լինել, բայց քննարկվող եզրույթը շատ ավելի լայն է, քան միայն իրավաբանական ենթադրությունները:

³⁷ См. у Касумов, Ч. С. Презумпция невиновности в советском праве/Ч. С. Касумов. - Баку: ЭЛМ, 1984. - էջ 123.

³⁸ См. у Смирнов, А. В. Уголовный процесс / А. В. Смирнов, К. Б. Калиновский. - СПб.: Питер, 2004. - էջ 223.

³⁹ См. у Дрягин Михаил Александрович, ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, էջ.

Վերոգրյալ դիրքորոշումների ընդհանրացման հիման վրա ներկայացնենք կանխավարկածի մեր հնարավոր սահմանումը:

Կանխավարկածը բարձր հավանականություն ունեցող փաստերի կամ իրադարձությունների մասին ենթադրություն է, որը երկարատև կայուն էմպիրիկ փորձի արդյունքում համաընդհանուր ճանաչվում է ճշմարտացի և չի առաջացնում հակառակի մասին ողջամիտ ենթադրություն, ինչպես նաև փաստեր կամ իրադարձություններ, որոնք համարվում են ճշմարտացի՝ հակառակի մասին վկայող ապացույցների բացակայության պատճառով:

THE CONCEPT AND SIGNIFICANCE OF PRESUMPTIONS: THEIR PHILOSOPHICAL, LEGAL AND SOCIAL NATURE

GOHAR ADONTS

Investigator of particularly important cases of the General Department

for Control over Activity of Territorial Investigative Departments

Investigative Committee of RA, Applicant of PHD in department of

criminal law and criminal procedural law in Russian-Armenian (Slavonic) University

European University of Armenia, Faculty of international relations and law, lecturer

ANOTATION: Presumptions give a person the opportunity to reveal human connections with the objects that exist in the reality around us, the relationship between a person and objects. Presumptions have accompanied our society throughout history and their origins can be seen in customs and traditions. In human consciousness, some objects are inevitably correlated with others, sometimes also with heterogeneous objects, between which a certain connection is formed, and which is either causal or comparative in nature. When talking about the concept of presumptions, it is important to understand what the term “presumption” represents.

A number of scholars have referred to the definition of the concept of presumption, although its unequivocal definition is still not available in legal science. These definitions differ significantly from each other, but they also have certain common features. In the definitions given by almost all authors, the idea that a hypothesis is a conclusion or judgment based on empirical experience, which is recognized as reliable and true until it is not refuted, is crossed by a red line. Thus, any hypothesis is a generalization of the results of the experiment, through which the stable, often repeated connections between the facts, manifested in a certain period of time, are expressed. At the same time, since the hypothesis is not an undeniable fact, it is logical that there may be deviations from the above-mentioned stable connections, which are often observed in the case of a hypothesis.

Based on the generalization of the scholars' definitions, the author presents a possible definition of presumption.

Presumption is a hypothetetical assumption about facts or events with high probability, which as a result of long-term stable empirical experience is universally recognized as true and does not give rise to a reasonable assumption of the opposite, as well as facts or events that are considered true due to the absence of evidence to the contrary.

Key words` presumption, definition of presumption, hypothesis, definitions:

ПОНИМАНИЕ И ЗНАЧЕНИЕ ПРЕЗУМПЦИЙ, ИХ ФИЛОСОФСКОЙ, ПРАВОВОЙ И СОЦИАЛЬНОЙ ПРИРОДЫ

ГОАР АДОНЦ

Следователь по особенно важным делам по контролю над деятельностью территориальных следственных управлений Следственного комитета РА, Соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского (Славянского) университета Европейский университет РА, факультет международных отношений и юриспруденции, преподаватель

АННОТАЦИЯ.

Презумпции дают человеку возможность раскрыть, существующие в окружающей нас действительности связи человека с предметами, отношения между человеком и предметами. Презумпции сопровождали человечество на протяжении всей истории, и их истоки можно увидеть в обычаях и традициях. В сознании человека одни объекты неизбежно соотносятся с другими, иногда даже с разнородными объектами, между которыми образуется определенная связь, имеющая либо причинный, либо сравнительный характер. Говоря о концепции презумпции, важно понимать, что представляет собой термин «презумпция».

Ряд ученых обращались к определению понятия презумпции, хотя однозначного ее определения в юридической науке до сих пор нет. Эти определения существенно отличаются друг от друга, но имеют и некоторые общие черты. В определениях, данных почти всеми авторами, красной линией подчеркнуто представление о том, что презумпция — это вывод или суждение, основанное на эмпирическом опыте, которое признается достоверным и истинным до тех пор, пока оно не будет опровергнуто. Таким образом, любая презумпция представляет собой обобщение результатов эксперимента, посредством которого выражаются устойчивые, часто повторяющиеся связи между фактами, проявившиеся в определенный период времени. В то же время, поскольку презумпция не является неоспоримым фактом, логично, что могут быть отклонения от упомянутых выше устойчивых связей, которые часто наблюдаются в случае презумпции.

На основе обобщения изложенных определений в статье автор представил свое возможное определение презумпции. Так.

Презумпция – это предположение о фактах или событиях, которое имеет высокую вероятность, которое в результате длительного устойчивого эмпирического опыта общепризнано истинным и не вызывает разумного предположения об обратном, а также факты или события, которые считаются верным в связи с отсутствием доказательств обратного.

Ключевые слова: презумпция, гипотеза, определение, дефиниции презумпции

Հոդվածը գրվում է 01.09.2025
Ներկայացվել է տպագրության 05.09.2025

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գ. Վրիշրյան «Կանխավարկածը որպես Փիլիսոփայական-Իմացարանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>

Б.М.Волин и Д.Н.Ушаков, сост. В.В.Виноградов и другие. Толковый словарь русского языка. Т. III. - М.: Гос. изд-во иностр. и нац. словарей, 1939. - С. 1423

Н. И. Кондаков. Логический словарь. - М.: Наука, 1971.-С. 721

С. И Ожегов., Словарь русского языка.- М.: Русский язык; Издание 11-е, 1975 г.-стр. 846

С. И. Ожегов. - М.: Изд-во «Советская энциклопедия», 1972. - С. 535.

А.Я. Сухарева, В.Д. Зорькина, В.Е. Кругликов. Большой юридический словарь / М.: ИНФРА-М, 1999. С. 535.

Изд-ли Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. Энциклопедический словарь. - Т. XXV. - СПб.: Типолитограф. И. А. Ефрона, 1898. - С. 492

Ф.М. Дыдынский. - Латинско-русский словарь к источникам римского права / 2-е изд., испр. и доп. — Варшава : тип. К. Ковалевского, 1896. — [2], IV, С.466

И.Х., Дворецкий, Д.Н. Корольков - Латинско-русский словарь. М.: Изд. Госиздат, 1949, С.958:

В.К. Бабаев.- Презумпции в советском праве. Горький, 1974. С. 124.

М.С. Шакарян,- Гражданский процесс . М., 1993. С. 187.

Ю.К. Осипов. Гражданский процесс / М., 1996. С. 475.

Я.Л. Штутин. Предмет доказывания в гражданском процессе. М., 1963. С. 186.

С.В. Гусева. Место и роль презумпций в структуре юридического знания: философский анализ: дисс. канд. филос. наук. Саратов, 2009, С.157

В. И. Каминская, Учение о правовых презумпциях в уголовном процессе. - М., Л.: Изд-во АН СССР, 1948. - С. 132.

Я. Б. Левенталь, К вопросу о презумпциях в советском гражданском процессе,- Советское государство и право. - 1949. - № 6. - С. 64.

М.А. Дрягин,-“Презумпция Невинности В Российском Уголовном Судопроизводстве” Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, С.210

И. Л. Петрухин, - Теория доказательств в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1973. С.736

Չ. Ս. Կասумов, Презумпция невинности в советском праве/ - Баку: ЭЛМ, 1984. - С. 153.

А. В. Смирнов, К. Б. Калиновский, Уголовный процесс / - СПб.: Питер, 2004. - С. 272.

В. А. Ойгензихт, Презумпции в советском гражданском праве, - Душанбе: Изд-во «Ирфон», 1976. С.190

Judson F. Falknor, Notes on Presumptions, 15 Wash. L. Rev. & St. B.J. 71 (1940). Available at: <https://digital-commons.law.uw.edu/wlr/vol15/iss2/2>

J.H.Wigmore, EVIDENCE (2d ed. 1923) § 2491, p. 452.

S.GREENLEAF, EVIDENCE (16th Ed), §48.

David Kaiser, Presumptions of Law and of Fact, 38 Marq. L. Rev. 253 (1955). Available at: <https://scholarship.law.marquette.edu/mulr/vol38/iss4/5>

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նարինե Առաքելյան

ԵՂՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,

ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի

իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

DOI:10.63925/18294847-2025.op20-02

Յուրաքանչյուր իրավունքի բաղադրատարրերից մեկն այդ իրավունքով կարգավորվող հարաբերությունների բովանդակությունն է, որը ներառում է իրավունքի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը:

Տեսության մեջ իրավահարաբերության բովանդակության ուսումնասիրության հարցում տարբերակվում են նրա իրավաբանական և նյութական հայեցակետերը: Իրավահարաբերության բովանդակությունն իրավաբանական առումով սուբյեկտների իրավունքների և պարտականությունների համակցությունն է (սուբյեկտիվ իրավունքը և իրավաբանական պարտականությունը):

Սուբյեկտիվ իրավունքը տվյալ սուբյեկտի հնարավոր այն վարքագիծն է, որը նրան ընձեռված է տվյալ հարաբերությունը կարգավորող նորմով: Սուբյեկտիվ իրավունքն ընդգրկում է չորս իրավագործություն.

ա) իրավագործություն՝ ունենալու որոշակի բարիք (օրինակ՝ սեփականության իրավունք),

բ) իրավագործություն՝ որոշակի գործողություններ իրականացնելու,

գ) իրավագործություն, որը հնարավորություն է տալիս սուբյեկտին իրավահարաբերության մյուս մասնակցից պահանջելու՝ կատարել որոշակի իրավաբանական պարտականություններ (օրինակ՝ վարձատուն իրավունք ունի պահանջելու, որպեսզի վարձակալը կատարի իր պայմանագրային պարտականությունները),

դ) իրավագործություն՝ սուբյեկտիվ իրավունքի խախտման դեպքում դիմելու դատական պաշտպանության (օրինակ՝ եթե վարձակալը չի կատարում իր պարտականությունները, վարձատուն իրավագործ է դիմելու դատարան իր օրինական շահերը պաշտպանելու համար)¹:

¹ Տե՛ս Թելունց Մ.Մ., Բաբայան Գ.Ա., Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ՝ դասախոսություններ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների «Իրավագիտություն» մասնագիտությամբ ուսանողների համար, Երևան, Գորիս Էդիթ Պրինտ, 2015, ընդհանուր 128 էջ, հասանելի է <https://www.sarc.am/wp-content/uploads/2016/05/%D5%8A%D4%B5%D5%8F%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D4%B1%D5%86-%D4%B5%D5%8E-%D4%BB%D5%90%D4%B1%D5%8E%D5%88%D5%92%D5%86%D5%94%D4%BB-%D5%8F%D4%B5%D5%8D%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86.htm> հղումով 23.01.2025 թվականի դրությամբ:

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, օժտված լինելով օրենսդրորեն ամրագրված որոշակի իրավական հնարավորություններով, իրացնում են դրանք օրենքի շրջանակում և դրա վրա հիմնված պայմանագրի հիման վրա:

Պատահական չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)² այն իրավակարգավորման առկայությունը, ըստ որի՝ կողմերը կարող են կնքել քաղաքացիական օրենսդրությամբ չնախատեսված պայմանագիր, որը, սակայն, չպետք է հակասի օրենքին և խախտի այլ անձանց իրավունքները³:

Այսինքն՝ պայմանագրի կողմերը մեծամասամբ իրենք են որոշում միմյանց միջև կնքվող պայմանագրի տեսակը և յուրաքանչյուր կողմի իրավագործությունների և պարտականությունների շրջանակը: Դեռ ավելին, պայմանագրի պայմանների հստակ սահմանումն էական է նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ որպես ընդհանուր կանոն՝ դրանք առաջնահերթություն ունեն պայմանագրի կնքումից հետո ընդունված՝ օրենսդրությամբ սահմանված վարքագծի կանոնների նպատամբ⁴:

Այդ իսկ պատճառով պայմանագրով ձևակերպվող յուրաքանչյուր իրավունքի դեպքում անհրաժեշտ է, որ կողմերի համաձայնությամբ սահմանվող յուրաքանչյուր պայման, վարքագծի կանոն լինի հստակ և որոշակի, որը հնարավորություն կընձեռի պայմանագրի յուրաքանչյուր կողմին պատկերացնելու իր իրավագործությունների շրջանակը և կանխատեսելու իր վարքագծի հնարավոր հետևանքների առաջացումը:

Կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում թե՛ կառուցապատողը և թե՛ հողամասի սեփականատերն օգտվում են որոշակի իրավագործություններից, որոնց համապատասխանում են նաև որոշակի փոխադարձ պարտավորություններ, որոնք էլ ամրագրվում են կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրով:

Կառուցապատման իրավունք ունեցող անձին վերապահված իրավունքների էության և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Այսպես, առաջին իրավագործությունը, որն օրենսդիրը կառուցապատման իրավունք ունեցող անձին վերապահում է, շենք կամ շինություն, այսինքն՝ անշարժ գույք կառուցելու, վերակառուցելու կամ քանդելու իրավունքն է:

Նշված իրավունքը, սակայն, սահմանափակվում է որոշակի պարտականություններով, որոնք առավելապես պայմանավորված են կառուցապատման ոլորտի բարձր ռիսկայնությամբ, օրինակ՝ շինարարությունը համապատասխան թույլտվության հիման վրա և դրանում նշված պայմաններին համապատասխան կատարելը և այլն:

² ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է 05.05.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածները:

⁴ Օրենսգրքի 438-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը՝ բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Սա ոչ միայն իրավունք է, այլև կառուցապատման իրավունքի ձեռքբերմամբ հետապնդվող նպատակի իրականացման միջոց, որով կառուցապատողը, կառուցելով որոշակի շենք կամ շինություն, նպատակ է հետապնդում այն ծառայեցնելու իր ձեռնարկատիրական, գործարարական գործունեության արդյունավետ իրականացմանը: Կառուցելով որևէ ենթակառուցվածք՝ կառուցապատողը հնարավորություն է ստանում այն հետագայում օգտագործելու միջոցով իրականացնել իր գործունեությունն այնպիսի անշարժ գույքի տարածքում, որն ամբողջովին հարմարեցված կլինի տվյալ գործունեության արդյունավետ իրականացման համար, դա կարող է լինել, օրինակ, որևէ արտադրական նշանակության շենք կամ շինություն, կամ գործարան և այլն:

Կառուցապատման իրավունք ունեցող անձը կառուցապատման աշխատանքների իրականացման նպատակով կարող է իրավահարաբերությունների մեջ մտնել նաև մասնագիտացված կառուցապատողի հետ, որը կիրականացնի բուն շինարարական աշխատանքները: Հիմնականում նման դեպքերում կառուցապատողի և շինարարական գործողություններն իրականացնողի միջև կնքվում է շինարարական կապալի պայմանագիր:

Շինարարական կապալի կարգավորմանն ուղղված իրավակարգավորումներից հետևում է, որ այն դեպքում, երբ կառուցապատողը շինարարական կապալի պայմանագիր է կնքում՝ բուն շինարարական աշխատանքները տվյալ ոլորտում մասնագիտացված սուբյեկտի կողմից կատարելու նպատակով, ապա վերջինս պարտավորվում է նաև կապալառուի համար ստեղծել աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ պայմաններ, ընդունել դրա արդյունքը և վճարել պայմանավորված գինը:

Հետաքրքրական է, որ որոշ երկրներ այնքան են կարևորել շինարարական կապալին առնչվող հարցերը, որ դրանք կարգավորել են հատուկ իրավական ակտերով: Մասնավորապես՝ Հոլանդիայի օրենսդրությամբ շինարարության ոլորտում լայնորեն տարածված է պայմանագրում ընդհանուր դրույթներ ու պայմաններ նախատեսելը, որոնցից ամենատարածված և առավել հաճախ օգտագործվող դրույթները, որոնք օգտագործվում են շինարարական աշխատանքների համար, կոչվում են *Uniforme Administratieve Voorwaarden voor de uitvoering van werken en van technische installatiewerken 2012* (UAV 2012): UAV 2012-ը կարգավորում է հանձնարարողի և պրինցիպալի միջև գործող իրավահարաբերությունները՝ համաձայն «ավանդական մոդելի»: Այսինքն՝ հանձնարարողը կապալառուին տալիս է նախագիծ, իսկ կապալառուն աշխատանքները կատարում է՝ ըստ այդ նախագծի⁵:

Հետևաբար, կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը որոշակի իրավահարաբերությունների մեջ է մտնում նաև մասնագիտացված կառուցապատողի հետ, որի միջոցով իրականացվելու են բուն կառուցապատման աշխատանքները:

⁵ St 'u What are the rights, obligations and liabilities of contractors and principals in contracting work?, July 12, 2021, հասանելի է <https://lvh-advocaten.nl/en/artikelen/what-are-the-rights-obligations-and-liabilities-of-contractors-and-principals-in-contracting-work-2/> հղումով 20.01.2025 թվականի դրությամբ:

Օրենսդիրը, սահմանելով շենքեր կամ շինություններ կառուցելու, վերակառուցելու կամ դրանք քանդելու կառուցապատողի իրավունքը, չի սահմանում որևէ կարգավորում, որի միջոցով կողմերը կառաջնորդվեն կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի առարկան որոշելու հարցում: Այսինքն՝ կառուցապատման իրավունքով հողամասի սեփականատերը պարտավորվում է կառուցապատողի տիրապետմանը հանձնել իրեն պատկանող հողամասը՝ կառուցապատման իրավունքով շենքեր կամ շինություններ կառուցելու, վերակառուցելու կամ դրանք քանդելու նպատակով, սակայն չի սահմանում, թե ինչ տեսակի գույք պետք է կառուցի կառուցապատողը, ինչպիսի չափանիշներ, պահանջներ պետք է պահպանվեն՝ շինարարությունն իրականացնելիս, ինչպես նաև առկա չեն կարգավորումներ՝ շինարարական աշխատանքները մասնագիտացված կառուցապատողի հետ շինարարական կապալի պայմանագրի հիման վրա կնքելու և այլ հարցերի վերաբերյալ:

Կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ ներկայումս առկա կարգավորումները որոշակի չեն և կողմերին հնարավորություն չեն տալիս պայմանագիր կնքելու փուլում կանխատեսելու կառուցապատման իրավունքի իրացման ընթացքում որոշակի խնդիրների առաջացման ռիսկը: Ուստի, առաջարկում ենք ՀՀ օրենսդրությամբ նախատեսել, որ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրով պետք է հստակ նշվի կառուցապատողի, հողամասի սեփականատիրոջ իրավագործությունների և պարտականությունների շրջանակը, որը թե՛ կառուցապատողին և թե՛ հողամասի սեփականատիրոջը հնարավորություն կընձեռի կանխատեսելու իրենց իրավունքների իրացման հնարավոր ռիսկերը և միջոցներ ձեռնարկելու դրանց կանխարգելման կապակցությամբ:

Հաջորդ իրավունքը, որը վերապահված է կառուցապատման իրավունք ունեցող անձին կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում, **իր կողմից կառուցված գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունքն է:**

Հատկանշական է, որ այն գույքը, որի տիրապետման և օգտագործման իրավունքը պայմանագրով փոխանցվում է կառուցապատողին, պայմանագրի կնքման պահին կարող է ընդհանրապես գոյություն չունենալ:

Հետևաբար, եթե խոսքը վերաբերում է նոր կառուցվող գույքին, ապա ստացվում է, որ պայմանագրով կողմերը պայմանավորվում են որոշակի իրավագործություններ փոխանցել կառուցապատման իրավունք ստացող անձին դեռևս գոյություն չունեցող և ապագայում ստեղծվելիք գույքի նկատմամբ:

Ըստ էության՝ կառուցապատման իրավունք ունեցող անձը հնարավորություն է ստանում իրականացնելու սեփականության իրավունքի բաղադրիչ հանդիսացող որոշակի իրավագործություններ այնպիսի գույքի նկատմամբ, որը՝ փաստացի որպես անշարժ գույք, գոյություն ունի, սակայն իրավաբանորեն կարող է չհամարվել այդպիսին, քանի որ անշարժ գույքի հատկանիշ գույքին տրվում է այն համապատասխան մարմնում գրանցելուց հետո միայն:

Այս հարցը Ռումինիայի Հանրապետության օրենսդիրը կարգավորել է յուրահատուկ

կերպով: Մասնավորապես՝ Ռումինիայի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվել է սուպերֆիցիի իրավունքի երկու տեսակ: Հիմնական տեսակը, որը տեսության մեջ նաև կոչվում է սուպերֆիցիի իրավունքի ամբողջական տեսակ, բաղկացած է սուպերֆիցիարիուսի իրավունքից՝ ձեռք բերել և ունենալ գույքային իրավունք՝ շինության, շենքի կամ տնկարկների նկատմամբ, որոնք գտնվում են ուրիշին պատկանող հողամասի վրա: Այս հիպոթեզի դեպքում շինությունը պատկանում է այլ անձի, և սուպերֆիցիարիուսը ձեռք է բերում այն. փաստ, որը նշանակում է, որ այն ժամանակ, երբ ձևավորվում է սուպերֆիցի, իրավունքի բովանդակությունն արդեն ամբողջական է, որը ներառում է և՛ շինության նկատմամբ գույքային իրավունքը, և՛ հողամասի նկատմամբ օգտագործման իրավունքը:

Երկրորդ տեսակը, որը կոչվում է ոչ ամբողջական և նախնական իրավունք, բաղկացած է սուպերֆիցիարիուսի իրավունքից՝ կառուցելու շենքը, շինությունը կամ տնկարկը այլ անձի պատկանող հողամասում: Սա նշանակում է, որ սուպերֆիցիի ձևավորման ժամանակ այն ունի ոչ ամբողջական բովանդակություն, քանի որ շինությունը դեռևս գոյություն չունի, հետևաբար դեռ չի կարող խոսք լինել փաստացի շենքի, շինության կամ տնկարկի նկատմամբ գույքային իրավունքի մասին⁶:

Ռումինիայի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սուպերֆիցիի այս երկու տեսակները համապատասխանաբար կիրառելի են նաև կառուցապատման իրավունքի նկատմամբ, սակայն այն տարբերությամբ, որ մեր օրենսդրությամբ կառուցապատման իրավունքի մեկից ավելի տեսակներ նախատեսված չեն: ՀՀ օրենսդիրը սահմանել է կառուցապատման իրավունքի ձևավորման հնարավորություն ինչպես արդեն իսկ գոյություն ունեցող շենքերում և շինություններում, այնպես էլ որևէ գույքով չձանրաբեռնված հողամասում: Ուստի, անկախ պայմանագրով գույքի տիրապետման, օգտագործման մասին պայման նախատեսելուց, նույնիսկ եթե պայմանագրի կքնման պահին գույքը դեռևս կառուցված չէ, կառուցապատողի այդ իրավագործություններն առաջանում են օրենքի ուժով:

Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է նաև այդ իրավունքը **տնօրինել**՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդրի կողմից կառուցապատման իրավունքը հավասարեցվում է քաղաքացիական շրջանառության օբյեկտներին, քանի որ ինչպես շրջանառության մեջ գտնվող օբյեկտները կարող են ազատ տնօրինվել դրանց իրավատիրոջ կողմից, այնպես էլ կառուցապատման իրավունքը կարող է ազատ տնօրինվել կառուցապատողի կողմից և դառնալ քաղաքացիաիրավական պայմանագրի առարկա:

⁶ St 'u Cojan M. F., Brief considerations regarding the establishing of remedies for limitations brought to the right of property right by instituting a right of superficies, Law study, 2013, էջ 287 (հասանելի է https://scholar.google.com/scholar?hl=en&as_sdt=0%2C5&q=brief+considerations+regarding+the+establishing+of+remedies+for+limitations&btnG հղումով 01.11.2024 թվականի դրությամբ):

Ըստ Օ. Ակսենովայի՝ կառուցապատման իրավունքը կարող է օտարվել կամ գրավադրվել միայն դրա հիման վրա կառուցված շենքերի կամ շինությունների օտարման կամ գրավադրման հետ մեկտեղ, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է իրավունքների պետական գրանցման գրանցամատյանում:

Կառուցապատման իրավունքի նկատմամբ կարող է տարածվել նաև բռնագանձում, այդ թվում՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Իսկ հողամասի տնօրինման իրավունքը թե՛ մշտական հողօգտագործման և թե՛ կառուցապատման իրավունքի դեպքում պահպանում է սեփականատերը⁷:

Կառուցապատողի իրավագործությունների շրջանակում ընդգրկվում է նաև կառուցապատման իրավունքը **գրավադրելու** իրավունքը:

Կառուցապատման իրավունքի գրավատու կարող է լինել միայն այն անձը, ում պատկանում է կառուցապատման իրավունքը: Վերոնշյալը բխում է Օրենսգրքի 228-րդ հոդվածից, որի 3-րդ կետի համաձայն՝ իրավունքի գրավատու կարող է լինել այն անձը, ում պատկանում է գրավ դրվող իրավունքը: Այսինքն՝ հողամասի սեփականատերը չի կարող սեփական նախաձեռնությամբ գրավադրել իրեն պատկանող հողամասը ծանրաբեռնող կառուցապատման իրավունքը, այլ այն կարող է գրավադրվել միայն կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից:

Նման պարագայում հարց է առաջանում, թե որ⁸ն է դառնում կառուցապատման իրավունքի գրավի առարկան:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ)՝ բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների(...) և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով (Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին կետ):

Այսինքն՝ գրավի առարկա կարող է լինել պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն չկապված այնպիսի գույքային իրավունք, որի զիջելն այլ անձի արգելված չէ օրենքով: Նման իրավունքի գրավի դեպքում, Օրենսգրքի 256-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գրավի առարկան օտարման ենթակա իրավունքն է: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ ժամկետով տրված իրավունքը գրավի առարկա կարող է լինել միայն մինչև դրա գործողության ժամկետի ավարտը: Այսինքն՝ կառուցապատման իրավունքը կարող է գրավադրվել միայն այն ժամանակահատվածով, որքան ժամանակահատվածով այն նախատեսված է պայմանագրով:

ՀՀ օրենսդիրը հողամասի կառուցապատման իրավունքը դիտարկում է որպես հիփոթեքի տեսակ, մասնավորապես՝ Օրենսգրքի 260-րդ հոդվածում նշելով, որ հիփոթեք է համարվում նաև հողամասի կառուցապատման իրավունքի գրավը:

⁷ См. у Аксенова, О. В., Право постоянного землеуладения и право застройки в системе вещных прав, Ученые записки Казанского филиала “Российского государственного университета правосудия”, 2014, Т. 10, № 104 (հասանելի է https://elibrary.ru/download/elibrary_23883378_25892770.pdf հղումով 17.10.2024 թվականի դրությամբ):

Բավականին երկար ժամանակ հիփոթեքի անալոգը գոյություն ուներ նաև խորհրդային օրենսդրության մեջ: ՌՍՖՍՀ 1922 թվականի Քաղաքացիական օրենսգրքի 90-րդ հոդվածը նախատեսում էր շենքը և կառուցապատման իրավունքը գրավադրելիս գրավառուին այսպես կոչված գրավի վկայագիր տալը: Շենքերի գրավով կամ կառուցապատման իրավունքով ապահովված պահանջի փոխանցումը պետք է իրականացվեր գրավի ակտը փոխանցելու միջոցով, որի վրա կատարված էր փոխանցման մակագրություն⁸:

Հարկ է նշել, որ գրավը, ըստ էության, իրային իրավական ինստիտուտ է, և կառուցապատման իրավունքի գրավադրման դեպքում ստացվում է, որ գրավառուի մոտ առաջանում է իրային իրավունք իրային իրավունքի նկատմամբ, որը քաղաքացիաիրավական դոկտրինում որոշ տեսաբաններ բացառում են⁹:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գրավի ինստիտուտի առանձնահատկություններին, նշել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը՝ որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ)¹⁰:

Հարց է առաջանում՝ գրավի առարկան, ներառելով կառուցապատման իրավունքը, արդյո՞ք ընդգրկում է նաև դրանով ծանրաբեռնված գույքը կամ անավարտ շինարարության օբյեկտը, թե՛ ոչ:

Տեսության մեջ տեսակետ է հայտնվել, որ կառուցապատման իրավունքի՝ շենքի օտարման կամ գրավի դեպքում դրա ճակատագրին հետևելը և հակառակը՝ կառուցապատման իրավունքի հիման վրա կառուցված շենքի կառուցապատման իրավունքին հետևելը, գրավի կամ օտարման դեպքում, պայմանավորված են կառու-

⁸ Տե՛ս Алексеева Е.В., Комиссарова Е.Г., Микшис Д.В., Торкин Д.А., Труба А.Н., “Комментарий к Федеральному закону от 16 июля 1998 г. N 102-ФЗ “Об ипотеке (залоге недвижимости)”, (постатейный), էջ 67.

⁹ Տե՛ս Ковязин В. В., Лукьянова Н. Г., О праве застройки, Вестник СевКавГТИ, 2014, Вып. 17, էջեր 80-84.

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի թիվ ԵԿԴ/1159/02/17 գործով արտահայտած դիրքորոշումը:

ցապատման իրավունքի և տվյալ շինության ամուր իրավական կապով¹¹:

Համաձայն Ռուսաստանի Դաշնության Գերագույն արբիտրաժային դատարանի նախագահության 2005 թվականի հունվարի 28-ի N 90 տեղեկատվական նամակի 1-ին կետի՝ եթե հիփոթեքի առարկան եղել է անավարտ շինարարության օբյեկտը, ապա դրա շինարարության ավարտից հետո հիփոթեքը պահպանում է իր ուժը, և դրա առարկան դառնում է շինարարության ավարտի արդյունքում կառուցված շենքը (շինությունը):

Մինևույն ժամանակ, մեկնաբանված հոդվածում ուղղակիորեն նշվում է, որ բնակելի տան շինարարության ավարտից հետո անավարտ շինարարության և շինանյութի հիփոթեքը դադարում է: Երբ դադարում է անավարտ շենքի հիփոթեքը, մինևույն ժամանակ այն ծագում է ավարտված բնակելի շենքի նկատմամբ, քանի որ վարկառուն չի կատարել վարկի պարտավորությունը, և հիփոթեքը դադարեցնելու հիմքեր չկան:

Ընդ որում՝ եթե նպատակային վարկ կամ վարկ է տրամադրվում բնակելի շենքի կառուցման համար, ապա հիփոթեքի առարկան են դառնում անավարտ շինարարության օբյեկտները, շինանյութերը և սարքավորումները, որոնք նախատեսված են շինարարության համար¹²:

Այսինքն՝ ստացվում է, որ հիփոթեքի առարկան ընդգրկում է ոչ միայն կառուցապատման իրավունքը, այլև այդ իրավունքի օբյեկտը ևս, քանի որ կառուցապատման իրավունքի գրավադրման հիմքով հետագայում առաջացող հետևանքները տարածվում են նաև այդ իրավունքի օբյեկտի նկատմամբ:

Մասնավորապես՝ կառուցապատման իրավունքը կառուցապատող անձին հնարավորություն է տալիս տիրապետելու և օգտագործելու կառուցապատման իրավունքով իրեն տրամադրված հողամասի վրա կառուցվող գույքը:

Հետևաբար, երբ օտարվում է կառուցապատման իրավունքը, ենթադրվում է, որ օտարվում է նաև դրա բաղադրիչը հանդիսացող՝ կառուցապատվող շենքի կամ շինության տիրապետման և օգտագործման իրավունքը, հակառակ պարագայում՝ առանց շենքի նկատմամբ իրավունքների փոխանցման, միայն կառուցապատման իրավունքի տրամադրումը կդառնար ոչ թե կառուցապատման, այլ կառուցապատելու, շինարարություն իրականացնելու իրավունքի փոխանցում:

Հատկանշական է, որ ՀՀ օրենսդիրը կառուցապատման իրավունքի գրավը՝ որպես գույքային իրավունքի գրավ, համարելով հիփոթեքի տեսակ, միաժամանակ չի կարգավորում կառուցապատման իրավունքի հիփոթեքի սահմանման, դրա առարկայի, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ իրավունքների և այլ անհրաժեշտ հանգամանքների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ:

Մինչդեռ, նման պահանջների մանրամասն նախատեսումը, կառուցապատման

¹¹ Ст' у Круглова О. А., Право застройки чужого земельного участка: гражданско-правовые проблемы, дис. на. Соискание ученой степени кандидата юрид. Наук, М., 2014, էջ 117.

¹² Ст' у Алексеева Е.В., Комиссарова Е.Г., Микшис Д.В., Торкин Д.А., Труба А.Н., «Комментарий к Федеральному закону от 16 июля 1998 г. N 102-ФЗ «Об ипотеке (залоге недвижимости)», (постатейный), էջ 299.

իրավունքի առանձնահատկությունների հաշվառմամբ, էական նշանակություն ունի, քանի որ կառուցապատման իրավունքի գրավադրման դեպքում առավել անբարենպաստ պայմաններում է հայտնվում հողամասի սեփականատերը:

Այսպես. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի¹³ 39-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե օրենքով կամ հիփոթեքի պայմանագրով այլ բան նախատեսված չէ, հիփոթեքի պայմանագրի հիման վրա գրավի իրավունք գրանցելու հետ միաժամանակ գրանցվում է նաև սեփականատիրոջ կողմից գրավի առարկայի տնօրինման սահմանափակումը (...):

Այսինքն՝ տվյալ պարագայում որոշակի կերպով սահմանափակվում են նաև հողամասի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները: Մասնավորապես, այն դեպքում, երբ կառուցապատողը որոշակի հանգամանքների բերումով չկարողանա վճարել հիփոթեքի գումարը, օրինակ՝ սնանկ ճանաչվի, կամ կառուցապատողի մահվան դեպքում վերջինիս իրավահաջորդը չկարողանա վճարել հիփոթեքի գումարը, գրավառուն, որպես գումարը վճարելու պարտավորության ապահովում, հնարավորություն է ստանալու կիրառել Օրենսգրքի 248-րդ հոդվածով նախատեսված օրենսդրական կառուցակարգերը:

Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

Այսինքն՝ կառուցապատողի կողմից հիփոթեքի գումարը չմարելու պարագայում գրավառուն հնարավորություն է ստանալու բռնագանձում տարածելու կառուցապատման իրավունքի նկատմամբ: Ընդ որում՝ այդ իրավունքը կարող է գրավառուի կողմից օտարվել մեկ այլ անձի, կամ հենց ինքը՝ գրավառուն կարող է դառնալ կառուցապատման իրավունքի իրավատերը:

Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքը մեծապես հիմնված է կողմերի միջև առկա փոխադարձ վստահության վրա, այսինքն՝ կառուցապատման իրավունքն առավելապես ֆիդուցիար հատկանիշ ունի, ուստի հողամասի սեփականատերն ինքն է պարտավորված լինելու գրավով ապահովված պարտավորությունը վճարելու միջոցով հետ գնելու կառուցապատողին տրված կառուցապատման իրավունքը:

Այլ կերպ ասած՝ հողամասի սեփականատերը կրելու է որոշակի անբարենպաստ հետևանքներ կառուցապատողի կողմից գրավով ապահովված պարտավորությունը գրավառուի առջև չկատարելու պարագայում: Ուստի, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ներկա իրավակարգավորումը, ըստ որի՝ կառուցապատման իրավունք ունեցող

¹³ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 14.04.1999 թվականին, ուժի մեջ է մտել 06.05.1999 թվականին, ՀՀՊՏ 1999.05.06/11(77):

անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ (Օրենսգրքի 204¹-րդ հոդվածի 2-րդ կետ), հնարավորություն է տալիս կառուցապատման իրավունք ունեցող անձին այն գրավ դնելու՝ առանց հողամասի սեփականատիրոջ համաձայնության առկայության:

Հատկանշական է, որ նմանատիպ կարգավորում է առկա վարձակալության իրավունքի պարագայում: Մասնավորապես, Օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վարձակալության իրավունքի գրավը չի թույլատրվում՝ առանց գույքի սեփականատիրոջ համաձայնության:

Ընդ որում՝ Գերմանիայի Դաշնության օրենսդրությամբ նույնպես նախատեսված է, որ սուպերֆիցին կարող է օտարվել, փոխանցվել ժառանգությամբ, եթե հողամասի սեփականատիրոջ հետ այլ համաձայնություն առկա չէ¹⁴:

Այսինքն՝ սուպերֆիցիի օտարման կամ որևէ եղանակով փոխանցման պարագայում էական նշանակություն ունի նաև հողամասի սեփականատիրոջ համաձայնությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ կառուցապատման իրավունքի գրավի՝ որոշակի չափով հողամասի սեփականատիրոջ իրավունքներին միջամտելու փաստի հաշվառմամբ, կարծում ենք, առավել նպատակահարմար է ՀՀ օրենսդրությամբ նախատեսել, որ կառուցապատման իրավունքի գրավադրման պարագայում անհրաժեշտ է նաև հողամասի սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը: Վերոնշյալը թույլ կտա հողամասի սեփականատիրոջ համար առավել կանխատեսելի դարձնել կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում իր հողամասի ծանրաբեռնվածության աստիճանի, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ իր իրավունքների սահմանափակման հնարավորությունը:

Միաժամանակ, կարծում ենք, որ կառուցապատողին վերապահված իրավունքների շրջանակը ներկա օրենսդրական կարգավորումների պայմաններում որոշակի չէ, քանի որ հնարավորություն չի տալիս ինչպես կառուցապատողին, այնպես էլ հողամասի սեփականատիրոջը կանխատեսելու իրավունքի իրացման ընթացքում հնարավոր խնդիրների առաջացման ռիսկը, օրինակ՝ նախատեսվում է որոշակի գույք կառուցելու կառուցապատողի իրավունքը, սակայն չի նշվում, թե ինչ տեսակի գույք պետք է կառուցվի և ինչ չափանիշների պահպանմամբ:

Ուստի, առաջարկում ենք նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսել, որ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրով պետք է հստակ նշվի կառուցապատողի, հողամասի սեփականատիրոջ իրավագործությունների և պարտականությունների շրջանակը, որը հնարավորություն կընձեռի թե՛ կառուցապատողին և թե՛ հողամասի

¹⁴ St' u Хазова В. Е., Баргов А. В. Особенности становления и развитие наследственного права на застройки земельных участков в Германии // Вестник Московского университета МБД России. 2011. №2., էջ 209. (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/osobennosti-stanovleniya-i-razvitie-nasledstvennogo-prava-na-zastroyki-zemelnyh-uchastkov-v-germanii> հղումով 09.02.2025 թվականի դրությամբ):

սեփականատիրոջը՝ կանխատեսելու իրենց իրավունքների իրացման հնարավոր ռիսկերը և միջոցներ ձեռնարկելու դրանց կանխարգելման կապակցությամբ:

Համառոտագիր

Սույն հոդվածը նվիրված է կառուցապատման իրավունք ունեցող անձի իրավունքների առանձնահատկությունների բացահայտմանը: Հոդվածում անդրադարձ է կատարվել կառուցապատողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված իրավագործություններին, լուսաբանվել են օրենսդրական որոշ կարգավորումների թերություններ, կատարվել է իրավահամեմատական վերլուծություն, ներկայացվել են նաև որոշ հարցերի վերաբերյալ արտասահմանյան երկրներում գործող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև հեղինակի կարծիքը՝ այդ կարգավորումների վերաբերյալ:

Հոդվածում հեղինակը ներկայացրել է որոշ հարցերի վերաբերյալ օրենսդրական իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված առաջարկներ, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստարկներ:

Բանալի բառեր – կառուցապատման իրավունք, կառուցապատող, իրավագործություն, իրավունքի գրավ, նոր կառուցվող գույք, կառուցապատման իրավունքի օբյեկտ:

FEATURES OF THE RIGHTS OF THE PERSON WITH THE RIGHT TO CONSTRUCTION

NARINE ARAKELYAN

*Chief specialist of the Legal Expertise Service of
the Cassation Court of Republic of Armenia
PhD student at YSU Chair of Civil Law*

Annotation: This article is dedicated to revealing the features of the rights of a person with the right of construction: The article referred to the powers of the developer stipulated in the Civil Code of the Republic of Armenia, pointed out the shortcomings of some legislative regulations, made a comparative analysis, presented the legal regulations in force in foreign countries on some issues, as well as the opinion of the author regarding these regulations.

In the article, the author presented proposals to improve legislative regulations on some issues and arguments justifying them.

Keywords – right of construction, developer, eligibility, pledge of right, new construction property, object of a right of construction.

ОСОБЕННОСТИ ПРАВ ЛИЦА, ИМЕЮЩЕГО ПРАВО ЗАСТРОЙКИ

НАРИНЕ АРАКЕЛЯН

Главная специалистка Службы правовой экспертизы

аппарата Кассационного суда РА

Аспирант кафедры Гражданского права ЕГУ

Аннотация. Данная статья посвящена выявлению особенностей прав лица, обладающего правом застройки. В статье рассмотрены полномочия застройщика, предусмотренные Гражданским кодексом Республики Армения, указаны недостатки некоторых законодательных норм, проведен сравнительный анализ, представлены действующие в зарубежных странах законодательные нормы по некоторым вопросам, а также мнение автора относительно этих норм.

В статье автор представил предложения по совершенствованию законодательного регулирования некоторых вопросов и аргументы, обосновывающие их.

Ключевые слова - право застройки, застройщик, правомочие, залог права, объект нового строительства, объект права застройки.

*Հոդվածը գրված է 15.09.2025
Ներկայացվել է տպագրության 22.09.2025*

**ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մելանյա Դավթյան

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ընդհանուր

հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական

առարկաների ամբիոնի դոցենտ, քաղաքական

գիտությունների թեկնածու

DOI:10.63925/18294847-2025.op20-03

Համառոտագիր Բարեվարքության հայեցակարգը հազարամյակների ընթացքում էվոլյուցիայի է ենթարկվել՝ դառնալով ոչ միայն անհատական վարքագծի, այլև հանրային պետական համակարգերի հիմնասյուն:

Բարեվարքության համակարգը խորությամբ ներկայացնելու համար նախ անդրադարձանք այն հիմնարար փիլիսոփայական հարցադրումներին, որոնք ընկած են մարդու մտածողության հիմքում. հենց այդ հիմքերով էլ ձևավորեցինք «Հայոց ազգային բարեվարքության» փիլիսոփայական հարցադրումները՝ որպես հայ ազգային մտածողության էությունը բացահայտող առանցքային դրույթ:

Այդ բարեվարքության մեջ գտանք առաքինություններով պայմանավորված արդարության սկզբունքն ու մեխանիզմը, առանց որի պետական համակարգ լինել չի կարող:

Հոդվածում նպատակ ենք հետապնդել ազատվել «հայերնիքը ավերակների վերածող» մտածողությունից: «Հայոց ազգային բարեվարքությունը» անմիջականորեն կապել ենք ՀՀ հանրային ծառայության բարեվարքության օրենքի հետ, ցույց տալով բերեվարքության համակարգի ու նրա սկզբունքների պահպանման գերկարևորությունը ազգային պետական համակարգի գործունեության համար: Հայոց ազգային բարեվարքությանը մոտեցել ենք մտածողության ամենաարմատական՝ փիլիսոփայական հարցադրումներով, զարգացնելով այն մինչև Հայաստանի Հանրապետության նորմատիվ օրենսդրական պահանջների, մի անգամ ևս ապացուցելով, որ հանրային բարեվարքության համակարգը ոչ միայն հարկադրական, այլև հանրության քաղաքական գիտակցության ու «սրտի մտքի» խղճի դրսևորումն է: Դիտարկելով պետությունը որպես հանրային շահի բարձրագույն արտահայտություն, այն դարձրել ենք անձնական շահի առաջին սպասարկող մեխանիզմ ու պարտադիր պայման:

Բարեվարքության համակարգը կարող է գործել հանրության ու հանրային ծառայողի համատեղ ու միաժամանակյա գործունեության ընթացքում:

Բանալի բառեր. Հայոց ազգային բարեվարքություն, բարեվարքության փիլիսոփայություն, Հայոց ազգային միտք, զգայություն, տրամախոհություն, կարծիք, երևակայություն, առաքինություններ, արդարության մեխանիզմ, արդարության սկզբունք

Ներածություն

«Մեր Հայրենիքի ավերակները կվերականգնվեն այն ժամանակ, երբ մենք մեր միտքը կազատենք ավերակներից»¹: Այս գաղափարական խորհրդով՝ մեր առջև խնդիր դրեցինք հասարակության բարոյական արժեքների կարևորությունն ընդգծելու, նպաստելու «ավերող» վարքագծի ու մտածողության փոփոխությանը և ամրապնդելու բարեվարքությունը՝ որպես առողջ ու կայուն հասարակության հիմնասյուն:

Բարեվարքությունը ոչ միայն անհատական, այլև հասարակական արժեք է, որը պետական քաղաքական կայունության և զարգացման կարևոր բաղադրիչներից մեկն է: Այն նպաստում է հասարակական հարաբերություններում բարոյական սկզբունքների՝ ազնվության, արդարության, հարգանքի, պատասխանատվության պահպանմանը, հասարակության անդամների վստահությանը, համերաշխությանը, համագործակցությանը և, առհասարակ, քաղաքական համակարգի ամրապնդմանն ու բարօրությանը: Հակառակ դեպքում՝ բարեվարքության բացակայությունը հանգեցնում է կոռուպցիայի, անարդարության, հիասթափության և հասարակական արժեքների քայքայման, հետևաբար՝ իրավաքաղաքական համակարգի անկայունության:

Բարեվարքությունը կազմակերպության գործունեությունը հաշվետվողականության, արհեստավարժության և էթիկայի նորմերի հիման վրա կազմակերպելու մշակույթն է, որը բացառում է կոռուպցիայի առկայությունը²: Դա միաժամանակ անկաշառության, ազնվության, հաշվետվողականության սկզբունքների և արժեքների համախումբ է, որն ապահովում է կազմակերպության ամբողջականությունն ու վստահելիությունը³, որին դարձնում է ուժեղ, թափանցիկ և պատասխանատու:

Մեր նպատակն է ներկայացնել բարեվարքությունը որպես էթիկայի մշակված համակարգ ու վարքականոն, որն անհրաժեշտ ու օրինաչափ պահանջ է ինչպես Հայաստանի Հանրապետության հասարակության, այնպես էլ պետական իրավաքաղաքական համակարգի համար: Այն պետք է լինի ոչ միայն Հայաստանի Հանրապետության պետական և իրավաքաղաքական համակարգի անբաժան բաղադրիչ, այլև հայ հանրային՝ քաղաքացիական գիտակցության մաս:

Բարեվարքությունը պետք է ուղղորդի ոչ միայն հանրային ծառայողի գործունեությանը, այլև պետք է վերածվի յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական նորմի՝ ապահովելով փոխվստահություն, արդարություն և հանրային պատասխանատվություն:

Բարեվարքության համակարգն արմատապես ներկայացնելու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ այն փիլիսոփայական հարցադրումներին, որոնք ընկած են մարդու մտածողության հիմքում, որից էլ ձևակերպենք հայ ազգային մտածողության հիմքերում կանգնած «Հայոց ազգային բարեվարքության» փիլիսոփայական հարցադրումները՝ դրանք հատուկ ծառայեցնելով հայ հանրային իրավաքաղաքական կյանքին:

¹ Տե՛ս Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., 2006, էջ 31:

² Տե՛ս Հ. Ալեքսանյան, Ե. Գուլբերգ, Բարեվարքության եզրույթների բառարան, Եր., «Էդիթ Պրինտ», 2016, 128 էջ:

³ Տե՛ս <https://hy.wiktionary.org/wiki/բարեվարքություն> (վերջին այցելություն 06.10.2025)

Ընդունելով փիլիսոփայությունը⁴ որպես բոլոր գիտությունների ու գիտելիքների հասկացման ու ընկալման հիմք՝ ներկայացնենք «Բարեվարքության փիլիսոփայությունը» իր հիմնական՝ գոյաբանական, իմացաբանական, արժեքաբանական, մարդաբանական ոլորտներով ու հարցադրումներով, ինչպես նաև հայ հանրային կեցության մեջ դրանց դրսևորումներով:

Գոյաբանությունը (օնտոլոգիան) փիլիսոփայական մտահայեցողական ուսմունք է իրական կեցության, իրական աշխարհի սկզբնահիմքերի ու սկզբնապատճառների մասին⁵: Հետևաբար, բարեվարքությունը գոյաբանության մեջ դիտարկվում է հետևյալ հարցադրմամբ, *կարո՞ղ է բարեվարքությունը լինել մարդու իրական կեցության հիմքում որպես սկզբունք*: Այս փիլիսոփայական հարցադրումն ի վերջո մասնավորեցնենք հայ ազգային բարեվարքության մեջ՝ ձևակերպելով գոյաբանական հարցադրումը հետևյալ կերպ. *կարո՞ղ է բարեվարքությունը լինել Հայոց իրական կեցության հիմքում*:

Հարցը հիշեցնում է Հայոց պատմությունն իր բոլոր վայրիվերումներով ու բարդություններով և տանում դեպի պետության իրավա-քաղաքական օրենքի ուժ ունեցող անհրաժեշտ ու նորմատիվ պահանջը: Հետևաբար, հարցադրումն արդիական է. արդյո՞ք կարող է բարեվարքությունը լինել ոչ միայն ազգային-հասարակական մշակութային արժեք, այլև ավելին՝ քաղաքական-պետական կյանքի *հիմնասյուն*:

Իմացաբանությունը (գնոսեոլոգիան) փիլիսոփայական ուսմունք է իմացության գործընթացի, աղբյուրների, ձևերի և հավաստիության մասին⁶: Բարեվարքության իմացաբանությունը դիտարկվում է հետևյալ հարցադրումով՝ ճանաչելի՞ է արդյոք բարեվարքությունը, կամ՝ *ի՞նչ է բարեվարքությունը*, իսկ ազգային վարքաբանության տեսակետից՝ *ի՞նչ է Հայոց բարեվարքությունը, ինչպե՞ս այն ճանաչել*:

Այստեղ մեր առաջարկությունն է՝ Հայոց բարեվարքությունն ուսումնասիրել Դավիթ Անհաղթի գիտական տեսության հիման վրա՝ հոգու ճանաչողության հինգ՝ մտքի, զգայության, տրամախոհության, կարծիքի, երևակայության ունակությունների⁷ միջոցով՝ ըստ որի հնարավոր է նորովի վերլուծել ազգային բարեվարքությունը՝ ձևակերպելով նոր եզրույթներ, ինչպիսիք են՝ *Հայոց ազգային միտքը*, *Հայոց ազգային զգայությունը*, *Հայոց ազգային տրամախոհությունը*, *Հայոց ազգային կարծիքը* և *Հայոց ազգային երևակայությունը*:

«Բարեվարքություն» բառը կազմված է երկու մասից՝ «բարի, բարե» և «վարք», այն ընկալվում է որպես բարոյականորեն ընդունելի պահվածք, ճիշտ և պատշաճ վարքագիծ: «Բարեվար» բառը հայերենում բացատրվում է առաջին իմաստով՝ որպես իրեն կարգին պահող, բարեբարոյ՝ բարի բարք ու վարք ունեցող, պարկեշտ,

⁴ Տե՛ս https://eftneu.am/files_list/Փիլիսոփայություն-1.pdf, ինչպես նաև, <http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/kesoyan.pdf>. (վերջին այցելություն 06.10.2025)

⁵ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/Գոյաբանություն> (վերջին այցելություն 06.10.2025)

⁶ Տե՛ս <https://hy.wiktionary.org/wiki/գնոսեոլոգիա> (վերջին այցելություն 06.10.2025):

⁷ Տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980, էջ 125:

քաղցրաբարոյ և երկրորդ իմաստով՝ լաւ տարված, լաւ կառավարված⁸: Այսինքն՝ բարեվարքության գաղափարն ի սկզբանէ ձևավորվել է մարդու *ընդհանուր* վարքագծի կարգավորման անհրաժեշտությունից: Այն կարևոր դեր է ունեցել հասարակությունների զարգացման մեջ՝ դառնալով *հասարակական կարգի ու կարգապահության պահպանման գործիք*:

Բարեվարքության իմացաբանական հայեցակարգը վերաբերում է նրա ծագմանն ու ճանաչողական գաղափարական ու պատմական հիմքերին: Այն՝ որպէս մարդկային վարքի և փոխհարաբերությունների կառուցման հիմք, ունի խոր արմատներ, որոնք ձգվում են տարբեր մշակույթների, կրոնների և փիլիսոփայական դպրոցների պատմության մեջ: Այն արտացոլում է անհատի և հասարակության փոխկապվածությունը բարոյական արժեքների, պատասխանատվության ու պահվածքի հետ:

Հին հասարակություններում բարեվարքությունը սերտորեն կապված էր ավանդույթների և կրոնական ուսմունքների հետ: Օրինակ՝ Միջագետքում և Եգիպտոսում բարեվարքությունը համարվում էր աստվածների կամքի կատարման ձև, իսկ Չինաստանում Կոնֆուցիոսի ուսմունքներն առաջ քաշեցին բարեվարքությունը որպէս հասարակական ներդաշնակության հիմք: Բազմաթիվ կրոններ՝ Քրիստոնեություն, Իսլամ, Հինդուիզմ, Բուդդիզմ, խրախուսում են բարեվարքությունը որպէս հավատացյալի կյանքի անբաժան մաս: Այն հիմնվում էր սրբազան տեքստերի և բարոյական կանոնների վրա, որոնք ուղղորդում էին մարդու վարքը և որոշում «ճիշտ» ու «սխալ» հասկացությունները:

Փիլիսոփայությունը խորապէս անդրադարձել է բարեվարքության գաղափարին՝ փորձելով այն նկարագրել, բացատրել և տեսական հիմքեր տալ:

Հին Հունաստանում Սոկրատեսը, Պլատոնը և Արիստոտելը *բարեվարքությունը կապեցին առաքինությունների հետ*: Արիստոտելի կարծիքով՝ բարեվարքությունը կյանքի միջին ուղին է, որը հիմնված է խելամտության և հավասարակշռության վրա:

Կատարելապէս անհնար է գործել հասարակական կյանքում՝ չլինելով որոշակի բարոյական հատկությունների կրող, արժանի մարդ: Լինել արժանի մարդ՝ նշանակում է օժտված լինել բարոյական առաքինություններով: Իսկ նա, ով ուզում է մասնակից լինել հասարակական-քաղաքական կյանքին, պետք է լինի առաքինի վարքի տեր մարդ⁹:

Հռոմեական ստոիկները, ինչպիսիք են Սենեկան և Մարկոս Ավրելիոսը, բարեվարքությունը կապում էին բնության օրենքներին հետևելու հետ, որի միջոցով մարդը պետք է հաղթահարեր իր կրքերը և ապրեր խելամիտ ու ներդաշնակ կյանքով:

Միջնադարում բարեվարքությունը սերտորեն առնչվում էր քրիստոնեական ուսմունքներին: Թովմա Աքվինացին զարգացրեց աստվածային առաքինությունների ուսմունքը՝ ներկայացնելով բարեվարքությունը որպէս մարդկային կյանքն աստվածային օրենքներին համապատասխանեցնելու միջոց:

⁸ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, ցուցակ 1, Եր., 1944, էջ 366:

⁹ Տե՛ս http://publishing.ysu.am/files/History_of_Ancient_Philosophy.pdf, էջ 166:

Լուսավորչության դարաշրջանում բարեվարքությունն սկսեց ընկալվել առավել ռացիոնալ հիմունքներով՝ մարդկային առաքինություններով: Այս շրջանում բարեվարքությունը կորցրեց իր կրոնական բնույթը և դարձավ հասարակական կյանքի ռացիոնալ կառուցման գործիք:

Կանտը բարեվարքության հիմքը տեսնում էր «կատեգորիկ իմպերատիվի»¹⁰ մեջ, որը պահանջում էր, որ մարդիկ գործեն այնպես, որ իրենց գործողությունները դառնան համընդհանուր օրենք:

Ժամանակակից աշխարհում բարեվարքության հայեցակարգը շարունակում է զարգանալ՝ ներառելով նոր սոցիալական պայմաններ ու մարտահրավերներ: Այն հաճախ դիտարկվում է որպես մարդասիրական արժեքների դրսևորում, որն ստիպում է հարգել տարբեր մշակույթների և անհատականությունների բազմազանությունը:

21-րդ դարում բարեվարքությունը նոր իմաստ է ստանում՝ կապված մի շարք գլոբալ խնդիրների հետ: Բարեվարքության ինչպիսի՞ դրսևորում ակնկալել արդի տեխնոլոգիական զարգացումների ու արհեստական բանականության միջավայրում՝ բնապահպանության, բնական ռեսուրսների օգտագործման մեջ, տնտեսության, եկամուտների, ռազմատեխնիկայի անհավասար բաշխման, գլոբալ սոցիալական անհավասարության մեջ, մեդիայի ու սոցցանցերի տեղեկատվական կամային ինֆորմացիաների, կորպորատիվ անպատասխանատվության, և գլխավորապես՝ մարդու իրավունքների գլոբալիզացիայի պայմաններում: Այս բոլոր խնդիրները ձևավորում են բարեվարքության նոր չափանիշներ՝ պահանջելով ավելի գիտակից և պատասխանատու մոտեցում ինչպես անհատական, այնպես էլ իրավաքաղաքական համակարգային մակարդակում:

Արժեքաբանությունը¹¹ (աքսիոլոգիան) ուսմունք է էթիկական, գեղագիտական, գիտական, քաղաքական, կրոնական և այլ արժեքների, նրանց բացարձակացման մասին, որտեղ արժեքների ճշմարտությունը դիտվում է որպես «գիտակցության նորմատիվություն», որը որոշվում է ապրիորի, արժեքների իրական գոյությունից անկախ:

Բարեվարքությունն արժեքաբանության մեջ դիտարկվում է հետևյալ հարցադրումով՝ ո՞րն է բարեվարքության արժեքը, կամ ի՞նչ արժեք ունի բարեվարքությունը մարդու բնական ու հասարակական կյանքում, Հետևաբար, *Ի՞նչ արժեք, տեղ ու դեր ունի Հայոց ազգային բարեվարքությունը Հայոց իրավա-քաղաքական գոյաբանության մեջ:*

Հայոց ազգային բարեվարքությունը բարձր արժեք է, որն անկյունաքարային դեր ունի հայ ժողովրդի ինքնության, մշակութային ժառանգության և հանրային իրավաքաղաքական համակարգի ձևավորման մեջ: Այն դարերի խորքից եկող վարքային կոդ է՝ կազմված ազգային հավատամքներից, բարոյական նորմերից ու սոցիալական վարքականոններից, որոնք ձևավորել են հայ մարդու աշխարհընկալումը, հանրային վարքը և պետական մտածողությունը: Բարեվարքության այս համակարգը արմատավորված է հայրենիքի ու ընտանիքի դերի, սիրո ու հարգանքի, արդարության,

¹⁰ Տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/Կատեգորիկ_իմպերատիվ (վերջին այցելություն 06.10.2025)

¹¹ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/Արժեքաբանություն> (վերջին այցելություն 06.10.2025)

ազնվության և բազմաթիվ այլ արժեքների վրա:

Հայոց ազգային բարեկարգության՝ բարոյական և էթիկական արժեքների հիմքում ընկած է հայ հասարակության և անհատի վարքը կարգավորող հիմնարար և բացարձակ արժեքը՝ **առաքինությունը**: Հայ ազգային վարքաբանության մեջ ի սկզբանե կարգավորող դեր են ունեցել աստվածային (հույս, հավատ, սեր) և մարդկային (արդարություն, խոհեմություն, արիություն, ողջախոհություն) առաքինությունները: Այս արժեքներն ապրում և գործնականում դրսևորվում են մարդու եռամաս հոգու՝ բանական, ցամաքական և ցանկական կողմերի ներդաշնակ գործունեության շնորհիվ:

Առաքինություններն են հանրության մեջ ձևավորում և գործուն դարձնում արդարության մեխանիզմը, որն այնքան անհրաժեշտ է պետության, քաղաքական համակարգի գործունեության համար: Առաքինությունները բնորոշ են միայն բանական արարածներին և կապված են նրանց հոգևոր գործունեության հետ: Ինչպես մարդը, այնպես էլ պետությունը գործող օրգանիզմ է, որի գործունեությունը ենթակա է նույն այդ արդարության մեխանիզմին: Հետևաբար, պետությունն ինքնին դառնում է բարեկարգության կիրառման դաշտ, որտեղ առաքինությունները ոչ միայն անհատական, այլև հանրային ու ինստիտուցիոնալ նշանակություն են ստանում:

«Հոգու յուրաքանչյուր մաս ոչ միայն պետք է զարդարել նրան բնորոշ առաքինությամբ, այլև նրանց միջև համապատասխանություն և ներդաշնակություն հաստատել, այդ իսկ պատճառով նրանց բոլորին կներթափանցի արդարությունը»¹²: Արդարությունը, Պլատոնը դիտում է որպես իդեալական պետության ու մարդու գոյության պարտադիր պայման. «Պետությունը եթե ճիշտ է հորինված, ապա այն կատարյալ կլինի, քանի որ իմաստուն է, արի, խոհեմ և արդար»¹³: Արդարության շնորհիվ պետությունը հաղորդակից է դառնում առաքինությանը, նմանապես առանձին մարդն իր հոգու մեջ կրում է նույն առաքինությունները, ինչ որ պետությունը¹⁴: Պետության առաքինության հարցում յուրաքանչյուր քաղաքացու իր գործն անելու կարողությունը մրցում է իմաստության, խոհեմության և արիության հետ... Արդարությունը նույնպես մրցում է նրանց հետ՝ հանուն պետության առաքինության¹⁵:

Այդ մասին գրել են վաղ, միջին, ուշ և նոր դարերի հայ մատենագիրներն ու մտածողները՝ իրենց աշխատություններում վեր հանելով առաքինության, բարեկարգության և արդարության գաղափարները՝ որպես ազգի հոգևոր և պետական կեցության հիմք: Գրիգոր Սկևռացի Վարդապետն իր՝ «Քրիստոնեական առաքինությունները»¹⁶ միջնադարյան աշխատության մեջ գրում է. «Եվ որովհետև հոգին արարչագործ հրամանով եւ կարգադրությամբ եռամասնայ է՝ ունի խօսք, ցասում եւ

¹² Տե՛ս Դավիթ Անհաղթ, նշվ.աշխ., էջ 85-86:

¹³ Պլատոն, Պետություն, հ. 4, եր., 2017, էջ 148:

¹⁴ Տե՛ս Պլատոն, էջ 155, 159:

¹⁵ Տե՛ս Պլատոն, էջ 157:

¹⁶ https://www.academia.edu/28072112/Գրիգոր_Վարդապետ_Խրատ_ճշմարիտ_հաւատքի_եւ_առաքինասէր_վարքի_մասին_Երեւան_1992 էջ 22:

ցանկություն, որով ճշմարտապես ըստ բանականի է շարժում, ոչնչով վերինների նմանությունից ետ չի մնում: Եւ սրանից իւրաքանչիւրն ունի իրեն յատուկ առաքինութիւն: Բանականի առաքինությունը խոհականութիւնն է, ցասմականինը՝ արիությունը, իսկ ցանկականինը՝ ողջախոհութիւնը»¹⁷, վերջինիս արմատները գտնում ենք դեռ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության»¹⁸ մեջ, որն ընկած է Հայոց ազգային բարեվարքության հիմքում:

*Առաքինությունները կազմում է արդար վարքաբանական մեխանիզմ, որը նպաստում է կենդանի օրգանիզմի՝ անհատի, հասարակության բնական համաչափ, ներդաշնակ և անընդհատ գոյությանը: Այս օրինաչափությունը գործում է նաև իրավաքաղաքական բոլոր համակարգերի ու սուբյեկտների համար: Այս մարտահրավերի պայմաններում Հայաստանի Հանրապետությունում բարեվարքության համակարգն ստացել է օրենքի ուժ՝ դառնալով իրավաքաղաքական **անհրաժեշտություն և օրինաչափ պահանջ**:*

Պետությունը՝ որպէս իրավա-քաղաքական համակարգ, պետք է ապրի հոգու ինքնաշարժ կանոններով¹⁹, որոնք բխում են օրենսդրությունից ու արդրադատությունից. պետք է խնամել արդար ու բարի բարքեր, որը և տիեզերական ներդաշնակության սկզբունքն է, որով էլ երաշխավորվում է այդ համակարգի երկարակեցությունը, գոյությունը մյուս պետական առաքինի համակարգերի կողքին:

Այդ մասին գրում է նաև Մովսէս Բաղրամյանն իր «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ»²⁰ քաղաքական հրապարակախոսության մեջ, որտեղ բացատրում է Հայոց իշխանության կործանման պատճառները: Նա ցույց է տալիս հայ ժողովրդի բարոյական ու քաղաքական անկումը և յոթ առաքինությունների փոխարեն նշում է անբարեվարքության յոթ մահացու մեղքերը²¹, որոնք հասցրել են հայ ժողովրդի քաղաքական-պատմական իրականությունը դժնդակ ու ողբերգական վիճակի:

Հետևաբար, պահպանելով *արդարության սկզբունքը*՝ այն կարող է դառնալ այն *բարի վարքը*, որի շրջանակներում պարտավոր են գործել ինչպէս անհատը, այնպէս էլ հասարակությունը, պետությունը, ազգը և այլ սոցիալական միավորները: **Բարեվարքության էությունն արդարության սկզբունքով ապրելու մեջ է:**

Մարդաբանությունը (անթրոպոլոգիան) գիտություն է, որն ուսումնասիրում է մարդկությանը, մարդկանց վարքը և հասարակություններն անցյալում և ներկայում²²:

¹⁷ Տե՛ս Գրիգոր Վարդապետ, Խոսք ճշմարիտ հավատքի և առաքինասեր վարքի մասին, «Գանձասար» Հանդես, Եր., 1992, էջ 22:

https://www.academia.edu/28072112/Գրիգոր_Վարդապետ_Խրատ_ճշմարիտ_հավատքի_և_առաքինասեր_վարքի_մասին_Երեւան_1992

¹⁸ Տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980, էջ 85:

¹⁹ Տե՛ս Դավիթ Անհաղթ, նշվ. աշխ., էջ 97:

²⁰ Տե՛ս Մ. Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, թարգմանություն և ծանոթություն Պ. Խաչատրյանի, ԵՊՀ, Եր., 1991, էջ 135:

²¹ Տե՛ս Յոթ մահացու մեղքերն են՝ որկրամոլություն, ծուլություն, բղջախոհություն, հպարտություն, բարկություն, նախանձ, ազահություն:

²² Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/Մարդաբանություն> (վերջին այցելություն 06.10.2025)

Հայագիտական փիլիսոփայական մոտեցմամբ՝ բարեվարքությունը դիտարկվում է ոչ միայն որպես անհատական վարքագծի արտահայտություն, այլև որպես ազգային ինքնության գոյաբանական հենասյուն: Մարդաբանական հարցադրումն այստեղ բացահայտվում է երկակի ձևով. մի կողմից՝ հայ անհատի վարքի դրսևորումն ազգային բարեվարքության համակարգում, մյուս կողմից՝ այդ բարեվարքության ներքին դրսևորումը հայ անհատի մեջ՝ որպես ժառանգված, ներքինացված և գիտակցված արժեքային համակարգ:

Այսինքն՝ հարցն այն է, թե որքանով է հայ մարդն իր վարքով կրում և մարմնավորում նախնիներից ժառանգած արժեհամակարգը, որն ամփոփվում է ավանդույթների, սովորույթների, բարոյական արգելքների ու պարտավորությունների՝ նորմատիվ էթիկայի մեջ: Արդյո՞ք նա իր առօրյայում, իր ընտրություններում պատասխանատվության կրող է՝ որպես այդ արժեհամակարգի լիիրավ մաս, թե՞ ուղղակի կենսաբանական գոյություն ունեցող անհատ է, և որքանով է նա ինքնության խորքում ապրում «իր երամի» բարոյական դիրքորոշմամբ և գիտակցմամբ:

Հետևաբար, ազգային բարեվարքությունը դիտարկվում է ոչ միայն մշակութային, այլ իրավաքաղաքական խնդիր, որն ուղղված է ազգային ինքնության հաստատմանն ու պետականության ամրապնդմանը: Այն՝ որպես «ավերակներից ազատվելու» ուղի, պահանջում է մշտական անդրադարձ՝ հատկապես հայ իրավաքաղաքական-փիլիսոփայությամբ զբաղվելիս:

Բարեվարքության քաղաքական-փիլիսոփայական հիմքերին անդրադառնալուց հետո ցույց տանք բարեվարքության համակարգի կարևորությունն ու անհրաժեշտությունը պետության իրավաքաղաքական համակարգում:

Բարեվարքությունն ամենից առաջ միջազգային իրավաքաղաքական պահանջ է՝ քաղաքակիրթ ժողովուրդների և ժամանակակից քաղաքական համակարգերի համար: *Միջազգային բարեվարքությունը* կարելի է բնութագրել որպես միջազգային հարաբերություններում բարոյականության, արդարության և օրինականության վրա հիմնված վարքագիծ, որը նպաստում է պետությունների, կազմակերպությունների և ազգերի միջև համագործակցության, վստահության և կայունության պահպանմանը:

Անհրաժեշտություն է առաջանում մշակելու ազգային բարեվարքության էթիկական-նորմատիվ համակարգ, այն վերածելու իրավաչափ մեխանիզմի՝ ապահովելով դրա կիրառությունը պետության թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության մեջ:

Բարեվարքության ազգային համակարգը Ջերեմի Փոփի կողմից առաջարկված հասկացություն է, այն հասարակության և պետության ինստիտուցիոնալ համակարգի և մեխանիզմների համակցություն է, որոնք, միավորվելով, նպաստում են կայուն զարգացմանը, իրավունքի գերակայությանը և կյանքի որակի բարելավմանը՝ բարեվարքության ամրապնդման միջոցով²³:

²³ Տե՛ս https://hy.wiktionary.org/wiki/բարեվարքության_ազգային_համակարգ:

Հետևաբար, բարեվարքության համակարգը Հայաստանի Հանրապետությունում ստացել է օրենքի ուժ²⁴, որպես հասարակության ու պետական բոլոր ոլորտների կառավարման օրինաչափություն, որտեղ ներառված են հանրային պաշտոն զբաղեցնողների ու ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանից բխող կանոնները:

Հանրության ու հանրային ծառայողների բարեվարքությունը խորապես փոխկապակցված են: Հանրային ծառայողները գալիս են նույն հանրույթից, և հենց այդ պատճառով նրանք պարտավոր են գործել նույն ազնվությամբ, պատասխանատվությամբ ու բարոյականությամբ ինչպես միմյանց, այնպես էլ հանրության հանդեպ: Հանրային ծառայողներից պահանջվում է այնպիսի բարեվարքություն, ինչպիսին հանրությունն է ակնկալում, որի միջոցով կարելի է ապահովել Հայաստանի Հանրապետության հանրության բարօրությունը, պետության քաղաքականության, նպատակների արդյունավետ իրագործումը: Սակայն, նույն կերպ հանրությունն էլ պետք է ունենա համապատասխան՝ բարեխիղճ, օրինապահ ու պատասխանատու վերաբերմունք թե՛ պետության, թե՛ նրա կողմից ընդունված բարեվարքության համակարգի նկատմամբ: Միայն այս փոխվստահության և փոխպատասխանատվության միջավայրում է հնարավոր կառուցել արդար, կայուն և բարեկեցիկ հասարակություն:

Բարեվարքության համակարգային սկզբունքները, որոնք են *հանրության ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունն ու հարգալիրությունը, բարեխղճությունը և օբյեկտիվությունը*, բխում են ոչ միայն հանրային պաշտոն զբաղեցնողների ու ծառայողների, այլև **Հայաստանի Հանրապետությունում ապրող յուրաքանչյուր քաղաքացու անձնական շահերից:**

Ցանկանալով ընդգծել բարեկեցության և բարեվարքության փոխկապակցվածությունը՝ անհրաժեշտ է գիտակցել, որ բարեվարքությունը՝ որպես ազնվության, պատասխանատվության և հարգանքի հիմք, յուրաքանչյուր քաղաքացու և հանրային ծառայողների վարքի առանցքային ուղղորդիչն է: Հենց բարեվարքության վրա հիմնված հարաբերություններն են ձևավորում վստահության մթնոլորտ, որը նպաստում է հանրային կյանքում արդարության, սոցիալական համերաշխության և, վերջապես, հասարակության ընդհանուր բարեկեցության ամրապնդմանը: Այդ արժեքներին հետևելով՝ հնարավոր է կառուցել պետություն, որտեղ գերակա է ոչ թե անձնական, այլ հանրային շահը:

Անշուշտ, կեցության նյութական մակարդակը որոշվում է նյութատեխնիկական բազայով, արտադրական ներուժով, կապիտալով, ներդրումային հոսքերով և այլ տնտեսական ցուցանիշներով, որոնք արտաքինից ապահովում են անհատի և հասարակության նյութական կայունությունն ու անվտանգությունը, սակայն նրանց մտածողության ձևից, մակարդակից ու բարեվարքությունից է բխում հայրենիքում

²⁴ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832> գլուխ 5:

բարեկեցության *իրական* վիճակը: Միայն այն հասարակությունը, որը զարգացնում է մտածողություն՝ հիմնված պատասխանատվության, փոխհարգանքի և *ազգային ինքնության վրա*, կարող է հասնել լիարժեք և երկարատև բարեկեցության:

Հանրությանը ծառայելու գիտակցումը սերտորեն կապված է անհատի ինքնագիտակցության հետ: Երբ հասարակական գիտակցությունն ու անհատական ինքնագիտակցությունը ներդաշնակ են, դա դառնում է բարեվարքության և էթիկական հավասարակշռության կարևորագույն նախապայման, երբ անհատի ինքնագիտակցությունը համընկնում է հասարակական գիտակցության մակարդակին, նա հետևում է հասարակական արժեքներին և նորմերին ոչ թե հարկադրաբար, այլ գիտակցաբար՝ որպես իր ներքին համոզմունք: Այդպիսի միջավայրում հասարակական բարոյականությունը դառնում է համահունչ անհատի էթիկական աշխարհընկալմանը, ով դրսևորում է անկեղծ ու բնական վարքագիծ: Հակառակ պարագայում, երբ անհատը ներքին հակասության մեջ է հասարակության կողմից ընդունված բարոյական չափանիշների հետ, բարեվարքությունը վերածվում է արտաքին դրսևորման՝ «երևալու», այլ ոչ թե «լինելու» ձգտման: Այս իրավիճակը խաթարում է հասարակության բարոյական հիմքերը և նվազեցնում վստահությունն անհատի ու հանրության միջև:

Այսպիսով՝ բարեվարք է, երբ մարդն իր *անհատական բարոյական արժեքները գիտակցաբար նույնացնում է հասարակության ընդհանուր բարոյական համակարգի հետ*: Հանրությանը ծառայելու գիտակցումն ինքնագիտակցության բնական շարունակությունն է, երբ անհատը *հանրային բարօրությունը վերածում է իր անձնական արժեքի ու առաքելության*: Ավելին, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների ինքնագիտակցությունը ձևավորվում է ազգային տարբեր գործոնների՝ ընտանիքի, կրթության, մշակույթի, պատմական փորձի և ազգային հասարակության ընդհանուր արժեհամակարգի միջավայրում, նրանք ավելի հակված են ազնվության, արդարության և, առհասարակ, հայրենիքին նվիրված կառուցողական մտածողության:

Ազգային ինքնագիտակցության գործոնը ապահովում է հավատարմությունը հանրային շահին: Հետևաբար, պետք է մշակել ազգային ռազմավարական ծրագիր՝ հանրային շահի ու անձնական շահի «նույնականացման» մաքսիմալ մոտեցման համար:

Առանց հանրային շահի՝ անձնական շահ լինել չի կարող, քանի որ այն կորցնում է իր արժեքն ու հիմնավորումը: Հասարակական բարիքն այն հենքն է, որի վրա միայն կարելի է կառուցել կայուն և արդար անհատական բարեկեցություն:

Հանրային շահի դրսևորման բարձրագույն ձևը պետությունն է: Այն ոչ միայն հանրային կամքի ու համաձայնության արդյունք է, այլև դրա պահպանման և իրագործման հիմնական երաշխավորը: Պետության գոյությունն ինքնին հանրային շահի ինստիտուցիոնալ մարմնավորումն է, որի նպատակն է ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կարող է իրացնել իր բոլոր իրավունքները, ներդաշնակել հանրության արժեքների և բարոյական չափանիշներին հետ:

Պետությունը ձևավորվում է հանրության անդամների հավաքական կամքով, գործում է հասարակության ընդհանուր բարիքի համար և ապահովում է օրենքի գերակայություն, կարգ ու կանոն, անվտանգություն, սոցիալական արդարություն, տնտեսական կայունություն, գիտության և մշակույթի զարգացում: Միևնույն ժամանակ, պետությունը հիմնական երաշխավորն է անձնական ունեցվածքի, արժեքների և սեփականության պաշտպանության, որոնք անձնական շահի շրջանակում գտնվող հիմնական արժեքներ են, որոնք հաստատվում են պետության օրինական մեխանիզմով՝ այդ թվում՝ պետական կնիքով: Նույն պետական կնիքով պաշտոնապես հաստատվում է անձի ու նրա ընտանիքի կազմի՝ իրեն պատկանելության իրավական կարգավիճակը, որից *դուրս առավել և առաջնային անձնական շահ գոյություն ունենալ չի կարող*:

Հետևաբար, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացուց պահանջվում է պետական այնպիսի մտածողություն, որը հիմնված կլինի «Հայրենիքը ավերակների չվերածելու» սկզբունքի վրա, հատկապես, պաշտոնեական և ծառայողական պարտականություններ իրականացնողներից պահանջում է, որպեսզի նրանք այս մտածողությամբ հետևեն վարքագծի այն կանոններին, որոնք վերաբերում են նվերներ ընդունելու բացառմանը, ծառայության ընթացքում այլ վճարովի աշխատանքների համատեղմանը, պարտականությունները կատարելիս անձնական և հանրային շահերի տարանջատմանն ու բախմանը:

Բարեկրթությունը և հարգալիրությունը՝ լինելով բարեվարքության սկզբունքային պահանջներից մեկը, պետք է ծառայեցնել հայրենիքում արժանապատիվ հարաբերությունների ու կեցության դրսևորմանը: Կրթությունն ու դաստիարակությունը բարեկրթության համակարգում փոխկապակցված և փոխլրացնող երևույթներ են, որոնք յուրաքանչյուր քաղաքացուն տալիս են շրջապատում, սոցիալական միջավայրում իրեն պահելու, վերաբերվելու, մտքերն ու զգացմունքներն արտահայտելու ձևերը, հետևաբար, բարեկիրթ հասարակության մեջ է հնարավոր ապահովել ժողովրդավարական բարձրակարգ իրավաքաղաքական համակարգ: Հանրային պաշտոն զբաղեցնողներից, ծառայողներից ՀՀ օրենքը պահանջում է հասարակական, աշխատանքային հարաբերություններում դրսևորել պաշտոնին վայել վարքագիծ, բարեկիրթ, արժանապատիվ վերաբերմունք աշխատակիցների և բոլորի նկատմամբ:

Անգնահատելի է ազգային դաստիարակության ու կրթության դերն ազգային հանրության նկատմամբ բարեկրթության ու հարգալիրության դրսևորման մեջ: Ազգային հանրույթի և նրան ծառայողի բարեվարքությունը պետք է լինեն համարժեք, «միմյանց արժանի», այդ երկու կողմերին նույն հարթության վրա դնողը ոչ միայն քաղաքացիական, այլև ազգային դաստիարակությունն ու կրթությունն է, «սիրո և ամոթի»²⁵ զգացողության միևնույն միջավայրն է: Բարեկրթությունը և միմյանց նկատմամբ հարգալիրությունը լիարժեք կարելի է իրականացնել ազգային ինքնության,

²⁵ Տե՛ս Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 306:

ազգային արժեքներ ուսուցանող դպրոցների, մշակութային միջավայրում:

Բարեխղճությունը որպես բարեվարքության սկզբունք. օրինական պահանջ է, որը հանրային ծառայողին պարտադրում է դրսևորել ազնիվ և պատասխանատու վարք իր լիազորությունների կատարման ընթացքում: Սա ենթադրում է գործերի ժամանակին և արդյունավետ կատարում, հանրային ռեսուրսների խնայողաբար և նպատակային օգտագործում, ինչպես նաև հանրության վստահությանն արժանանալու ձգտում:

Բարեխղճ՝ նշանակում է իր գործին, պարտականություններին, առօրյա վարքին մոտենալ ազնիվ, լինել մաքուր սրտով ու բարի, արդարամիտ, պարտաճանաչ²⁶, այսինքն՝ անել ամեն ինչ ոչ միայն օրենքի, այլև ներքին խղճի պահանջով, չխաբել, չանտեսել պարտականությունները, չձևացնել, այլ ամեն ինչ անել ճիշտ, ազնիվ ու պատասխանատու ձևով, նույնիսկ այն դեպքում, երբ ոչ ոք չի հետևում:

Բարեխղճ լինելու օրինական պահանջը ենթադրում է, որ հանրության յուրաքանչյուր քաղաքացի պետք է նույնպես խղճով՝ «սրտի մտք»²⁷, գիտակցի իր պատասխանատվությունն իր երկրի բնական, ֆինանսական, նյութական, արտադրական, տեղեկատվական, մշակութային ռեսուրսների պահպանման գործում՝ ընդունելով դրանք որպես ազգային արժեք և երկրի առաջընթացի գրավական, բարիքի ու զարգացման հիմք, որոնց հետ գործ ունենալիս պետք է անկարգ վարքը զսպի ու վախենա ոչ միայն պետության օրենքով պատժվելուց, այլև հանրային դատապարտումից՝ իմանալով, որ հանրային վստահությունը խաթարելը վնասում է նաև իր իսկ բարեկեցությանը:

Բարեխղճ հանրային ինքն է ձևավորում իր ապագան՝ գիտակցված ընտրություններով և ակտիվ քաղաքացիական մասնակցությամբ: Նման հանրային պատասխանատվությամբ է մոտենում իր արարքներին՝ գիտակցելով դրանց հետևանքները, պահպանում է իր երկրի օրենքը, համակեցության կանոնները և հոգ է տանում հանրային բարեկեցության մասին՝ հասկանալով, որ սեփական բարեկեցությունը դրա անբաժան մասն է: Այս նույն գիտակցությամբ էլ հանրային պահանջում է բարեխղճություն նաև իր առաջնորդներից՝ հանրային պաշտոններ ու ծառայություններ իրականացնողներից, ովքեր պետք է ընդունեն, որ իրենք կոչված են ոչ միայն օրենքի կատարողներ, այլև հանրությանը, ավելին՝ ազգային հանրությանը ծառայողներ լինելու:

Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում օրյեկտիվությունը՝ որպես բարեվարքության համակարգային սկզբունք, հանրային պաշտոն զբաղեցնողներից, ծառայողներից պահանջում է, որ իրենց լիազորություններն ու պարտականություններն իրականացնելիս դրսևորեն անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն և քաղաքական չեզոքություն:

²⁶ Տե՛ս Ա. Տեր Խաչատուրեան, Հր. Գանգրունի եւ Փարամազ Կ. Տոնիկեան, Հայոց լեզվի նոր բառարան, ՊԵՂՐՈՅ, 1968, էջ 69:

²⁷ Տե՛ս Մ. Բաղդամյան, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, թարգմ. Պ. Խաչատրյանի, ԵՊՀ, Եր., 1991, էջ 11:

Հանրային բարեվարքության մեջ օբյեկտիվությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ հասարակությունը դատում է ըստ սկզբունքի, ոչ թե մարդու անձից ելնելով՝ նույն սխալի համար քննադատում է թե՛ հարազատին, թե՛ պաշտոնյային: Իշխանությունների հանդեպ դրսևորում է ոչ թե կույր հարգանք կամ կույր ատելություն, այլ տալիս է պատասխանատու, հիմնավորված գնահատական, տեղեկությունն ընդունում է ոչ միամտորեն, այլ՝ ստուգման, վերլուծության հիմքի վրա: Օբյեկտիվությունը հանրության մեջ դրսևորվում է բազմաթիվ ոլորտներում, օրինակ՝ իրավական ոլորտում բոլոր խախտումները, անկախ կատարողից, արժանանում են հանրային անկողմնակալ արձագանքի, քաղաքական ոլորտում հանրությունն ընդունում կամ քննադատում է իշխանության որոշումը ոչ թե կուսակցական պատկանելությունից, այլ բովանդակությունից ելնելով, մշակութային ոլորտում համայնքն ընդունում է ստեղծագործության, նյութական ոլորտում՝ արտադրության բազմազանություն՝ առանց խտրականության, սոցիալական ոլորտում աջակցում է կարիքավորին՝ առանց խավային կամ էթնիկ հիմքով ընտրելու: Հանրային բարեվարքությունը բարձր է, երբ այն հիմնվում է օբյեկտիվ չափանիշների վրա, այլ ոչ թե սուբյեկտիվ վերաբերմունքի վրա: Այդպիսի հանրություն վստահությունն ու արդարությունը ձևավորվում են հեշտությամբ, ինչը նպաստում է պետական համակարգի արդյունավետ կառավարմանը:

THE POLITICAL AND PHILOSOPHICAL FOUNDATION OF ETHICS AND THE SYSTEM IN THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

MELANYA DAVTYAN

*Associate Professor of the Department of
General Humanitarian and Socio-Economic
Subjects of the Educational Complex of the
Ministry of Internal Affairs of the Republic
of Armenia, Candidate of Political Sciences*

Abstract: The concept of ethics has evolved over millennia, becoming not only a guide for individual behavior but also a cornerstone of public and state systems.

In order to present the ethical system in depth, we first addressed the fundamental philosophical questions that lie at the core of human thought. Based on these foundations, we developed the philosophical inquiries of “Armenian National Ethics”, positioning them as key tenets that reveal the essence of Armenian national thought.

Within this ethical framework, we identified the principle and mechanism of justice, rooted in virtue, without which a functional state system is impossible.

The article aims to reject the mindset of “turning the homeland into ruins.” We connected Armenian National Ethics directly with the Law on Public Service Ethics of the Republic of Armenia, emphasizing the critical importance of maintaining the ethical system and its principles for the effective functioning of a national state structure.

We approached Armenian National Ethics through the most fundamental philosophical questions of thought, developing it up to the normative legal requirements of the Republic of Armenia—once again proving that a system of public ethics is not merely coercive, but an expression of the political consciousness of society and the “thought of the heart,” that is, conscience.

By viewing the state as the highest expression of the public interest, we have redefined it as the primary mechanism for serving personal interest and as a necessary condition for its realization.

The ethical system can function only through the joint and simultaneous engagement of both the public and the public servant.

Keywords- Armenian National ethic, ethical philosophy, Armenian National thought, sensibility, rational thinking, opinion, imagination, virtues, mechanism of justice, principle of justice, Conclusion

ПОЛИТИКО-ФИЛОСОФСКИЕ ОСНОВЫ ЭТИКИ И ЕЕ СИСТЕМА В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МЕЛАНЬЯ ДАВТЯН

*Доцент кафедры общегуманитарных и
социально-экономических дисциплин
Образовательного комплекса Министерства
внутренних дел Республики Армения,
Кандидат политических наук*

Аннотация: Понятие этики эволюционировало на протяжении тысячелетий, превратившись не только в руководство для индивидуального поведения, но и в краеугольный камень общественно-государственных систем. Для того чтобы представить систему этики в её глубине, мы обратились к тем фундаментальным философским вопросам, которые лежат в основе человеческого мышления. Именно на этих основаниях были сформулированы философские вопросы **«Армянской национальной этики»** как ключевые положения, раскрывающие суть армянской национальной мысли.

В данной системе этики мы выявили принцип и механизм **справедливости**, основанный на **добродетелях**, без которого невозможна полноценная государственная система. Целью статьи стало преодоление мышления, превращающего Родину в руины. Мы напрямую связали **Армянскую национальную этику** с **Законом Республики Армения о профессиональной этике государственных служащих**, подчеркнув исключительную важность сохранения этической системы и её принципов для функционирования национальной государственной структуры.

Мы подошли к Армянской национальной этике через наиболее радикальные философские вопросы мышления, развив её до уровня нормативно-правовых требований Республики Армения, ещё раз доказав, что система общественной этики является не только принудительной, но и выражением **политического сознания общества** и «мысли сердца» — **совести**.

Рассматривая государство как высшее выражение общественного интереса, мы определили его как **первичный механизм обслуживания личного интереса** и обязательное условие для его реализации.

Этическая система может функционировать только при совместной и одновременной активности как общества, так и государственного служащего.

Ключевые слова: Армянская национальная этика, философия этики, Армянская национальная мысль, чувствительность, рациональное мышление, мнение, воображение, добродетели, механизм справедливости, принцип справедливости

Հոդվածը գրվւում է 10.09.2025
Ներկայացվել է տպագրության 18.09.2025

Գրականության ցանկ

- Ա. Տէր Խաչատուրեան, Հր. Գանգրունի եւ Փարամազ Կ. Տոնիկեան, Հայոց լեզվի նոր բառարան, Պէյրութ, 1968:
- Գրիգոր Վարդապետ, Խոսք ճշմարիտ հավատքի և առաքինասէր վարքի մասին, «Գանձասար» Հանդես, Եր., 1992:
- Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980:
- Հ. Ալեքսանյան, Ե. Գոլդբերգ, Բարեկարքության եզրույթների բառարան, Եր., «Էդիթ Պրինտ», 2016:
- Մ. Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, թարգմանություն և ծանոթություն Պ. Խաչատրյանի, ԵՊՀ, Եր., 1991:
- Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:
- Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, ցուցակ 1, Եր., 1944, էջ 366:
- Պլատոն, Պետություն, հ. 4, եր., 2017:
- Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., 2006, էջ 31:
https://eftneu.am/files_list/Փիլիսոփայություն-1.pdf
<http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/kesoyan.pdf>
<https://hy.wikipedia.org/wiki/Գոյաբանություն>
<https://hy.wiktionary.org/wiki/գնոսեոլոգիա>
<https://hy.wiktionary.org/wiki/բարեկարքություն>
http://publishing.ysu.am/files/History_of_Ancient_Philosophy.pdf, էջ 166:
https://hy.wikipedia.org/wiki/Կատեգորիկ_իմպերատիվ
<https://hy.wikipedia.org/wiki/Արժեքաբանություն>
<https://hy.wikipedia.org/wiki/Մարդաբանություն>
https://hy.wiktionary.org/wiki/բարեկարքության_ազգային_համակարգ
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832>, գլուխ 5:

ԳՐԱՎԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ (ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ)

Արթուր Ղամբարյան

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
DOI: 10.63925/18294847-2025.op20-04*

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում է գրավի՝ որպես խափանման միջոցի իրավական բնույթը: Գրավը գույքային բնույթի խափանման միջոց է, որն ապահովում է մեղադրյալի օրինական վարքագիծը՝ տնտեսական (գույքային կորուստների սպառնալիք) և բարոյահոգեբանական (գրավատուի նկատմամբ պատասխանատվություն) մեխանիզմներով: Այն կարող է կիրառվել ցանկացած մեղադրյալի նկատմամբ, իսկ գրավատու կարող են հանդես գալ ֆիզիկական/իրավաբանական անձինք՝ բացառությամբ պետական մարմինների, տուժողների կամ այլ մեղադրյալների: Գրավի կիրառումը չի պահանջում մեղադրյալի համաձայնությունը, թեև գործնականում այն քննարկվում է:

Գրավի չափը որոշվում է՝ հաշվի առնելով հանցանքի ծանրությունը և մեղադրյալի գույքային դրությունը՝ պահպանելով համաչափության սկզբունքը: Գրավի առարկան կարող է լինել դրամական միջոց, շարժական/անշարժ գույք, արժեթղթեր կամ այլ արժեքներ, ընդ որում՝ անշարժ գույքի դեպքում պարտադիր է սեփականության իրավունքի սահմանափակումների պետական գրանցումը:

Գրավի պայմանների խախտման դեպքում (փախուստ, վարույթին էական խոչընդոտում) գրավը պետականացվում է, և կիրառվում է ավելի խիստ խափանման միջոց:

Գրավի վերադարձը կատարվում է անհապաղ՝ քրեական հետապնդումը դադարեցնելիս, դատավճռի կայացմամբ կամ խափանման միջոցը փոխելիս:

Հիմնաբառեր: Գրավ, խափանման միջոց, համաչափության սկզբունք, մեղադրյալ, գրավատու, պետականացում, անմեղության կանխավարկած, սեփականության իրավունք:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Գրավը իրավասու մարմնի որոշմամբ սահմանված դրամական գումար է, որը մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու նպատակով շարժական գույքի, արժեթղթերի կամ այլ արժեքների ձևով պահատվության է փոխանցվում համապատասխան որոշմամբ նշված բանկի կամ այլ վարկային կազմակերպության դեպոզիտ, իսկ ՀՀ դրամի ձևով՝ մինչդատական վարույթի փուլում պահատվության է փոխանցվում դատախազության դեպոզիտային հաշվին, դատական վարույթի փուլում՝ դատարանի դեպոզիտային հաշվին»:

Գրավը գույքային բնույթի խափանման միջոց է, քանի որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովվում է տնտեսական շարժառիթով՝ մեղադրյալը գիտակցում է ոչ օրինական վարքագիծ դրսևորելու դեպքում գրավի առարկան կորցնելու և նյութական վնասներ կրելու ռիսկը: Եթե գրավի առարկան մուծել են այլ անձինք, ապա գրավը ձեռք է բերում նաև բարոյահոգեբանական բնույթ, քանի որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովվում է գրավատուի նկատմամբ մեղադրյալի պոզիտիվ պատասխանատվությամբ, ինչպես նաև գրավատուի առջև գույքային պատասխանատվություն կրելու ռիսկով:

Գույքային կորուստների սպառնալիքը կամ գրավատուի առջև գույքային և բարոյական պատասխանատվության վախն էական խթան են՝ մեղադրյալին հարկադրելու պահպանել խափանման միջոցի պայմանները¹:

Խափանման այս միջոցի կիրառմամբ պետությունը միջամտում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներին կամ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված իրավունքներին (գույքային իրավունքներին):

Գրավն *ընդհանուր* տեսակի խափանման միջոց է, քանի որ կարող է կիրառվել ցանկացած մեղադրյալի նկատմամբ: Գրավը՝ որպես խափանման միջոց, կիրառվում է մեղադրյալի նկատմամբ, սակայն գրավը կարող են մուծել նաև ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձինք (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մաս): Օրենքը չի նախատեսում, սակայն իրավունքի տրամաբանությունը հուշում է, որ գրավատու չեն կարող լինել գործով այլ մեղադրյալները, տուժողները:

ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի իմաստով պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավաբանական անձինք չեն և չեն կարող լինել գրավատու: Ենթադրվում է, որ գրավատու չեն կարող լինել նաև պետական կամ համայնքային կազմակերպությունները, որոնց հիմնադիրը կամ բաժնեմասերի սեփականատերը պետությունն է կամ տեղական ինքնակառավարման մարմինն է:

Եթե գրավը մուծում է այլ անձ, ապա նրան բացատրվում է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի էությունը, ինչպես նաև մեղադրյալի կողմից անօրինական վարքագիծ դրսևորելու դեպքում վրա հասնող հնարավոր հետևանքները (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մաս):

2. Գրավը մեղադրյալի համաձայնությամբ կիրառելու խնդիրը

Գործող օրենսդրությամբ գրավը՝ որպես խափանման միջոց կիրառելու համար մեղադրյալի համաձայնությունը չի պահանջվում, սակայն դոկտրինում և իրավակիրառ պրակտիկայում այս հարցի վերաբերյալ առկա է այլ մոտեցում:

Ռուսական դոկտրինում տարածում է ստացել այն մոտեցումը, որ գրավի կիրառումն ըստ էության գուգակցվում է երկկողմանի, իսկ որոշ դեպքերում՝ եռակողմ գործարքի կնքմամբ, գրավը համարում են մի կողմից՝ իրավասու մարմնի, մյուս կողմից՝ մեղադրյալի ու գրավատուի միջև կնքված յուրահատուկ համաձայնագիր (պայմանագիր)²: Նաև նշվում է, որ, ի տարբերություն մյուս խափանման միջոցների, օրինակ՝ կալանքի, որը կիրառվում է միակողմանի կարգով, գրավը՝ որպես խափանման միջոց, կիրառվում է կամավորության հիմունքներով³:

Գրավը մեղադրյալի միջնորդությամբ կիրառելը շատերը համարում են այս խափանման միջոցի կիրառման էությունը կազմող տարր, քանի որ դա կապում են գույքը տնօրինելու սեփականության իրավունքի հետ⁴:

Գրավը որպես համաձայնագիր (պայմանագիր) ներկայացնելը կամ մեղադրյալի համաձայնությունը գրավի կիրառման պայման համարելը չի բխում քրեական դատավարության հանրայնության բնույթից և հակասում է քրեադատավարական հարկադրանքի էությանը: Գրավը չի կարող համարվել քրեադատավարական հարկադրանքի միջոց, եթե այն դիտարկվի որպես համաձայնագիր կամ կամավորության հիմունքներով կիրառվող միջոց:

Քրեադատավարական օրենսդրությամբ իրավասու մարմինն սկզբունքորեն կարող է առանց մեղադրյալի կամքը հաշվի առնելու կիրառել գրավ: Ավելին՝ եթե հետևենք օրենքի ձևակերպումներին, ապա իրավասու մարմնի՝ գրավ կիրառելու մասին որոշման հիման վրա գրավը մուծելը մեղադրյալի պարտականությունն է (տե՛ս ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 4-րդ և 4.1-րդ մասերի ձևակերպումը): Այլ բան է, որ այս հարկադրանքը կիրառելու դեպքում եթե մեղադրյալն ի սկզբանե հրաժարվում իր պարտականությունները կատարելուց, ապա այս խափանման միջոցի արդյունքայնությունը (ռեզուլտատիվությունը) ի սկզբանե կասկածելի է: Թերևս նույն տրամաբանությամբ՝ եթե մեղադրյալը միջնորդում է վերացնել գրավը՝ որպես խափանման միջոց, ապա այն պետք է բավարարել, հակառակ դեպքում՝ կասկածի տակ է դրվում այս խափանման միջոցի պիտանիությունը:

Գործնականում իրավիճակն այլ է. գրավը կիրառվում է այն մեղադրյալի նկատմամբ, ով նման միջնորդություն է ներկայացրել կամ վարույթն իրականացնող մարմնի հետ ոչ ֆորմալ բանակցությունների ժամանակ տվել է գրավ կիրառելու համաձայնություն: Եթե մեղադրյալն ի սկզբանե համաձայն չէ գրավ կիրառելուն կամ գրավի հնարավոր չափին, ապա քննիչը և դատախազը, գերադասելով գործնական ճկունությունը, խուսափում են գրավը կիրառելուց, քանի որ գրավի ընտրությունը որևէ գործնական արդյունք չի ունենա:

Այն, որ գործնականում գրավը կիրառվում է նախապես մեղադրյալի հետ

քննարկելուց և համաձայնեցնելուց հետո, պայմանավորված է ոչ թե օրենսդրական պահանջով, այլ բացառապես գործնական շարժառիթով: Գործնականում ճկուն քննիչը և դատախազը խուսափում են ընտրել խափանման այնպիսի միջոց, որը մեղադրյալի կամքի բացակայության պայմաններում փաստացի չի կարող կիրառվել (արդյունք տալ): Սակայն այս պրակտիկան չի փոխում գրավի՝ որպես խափանման միջոցի էությունը և գրավը չի դարձնում կամավորության հիմունքներով կիրառվող միջոց:

Գրավը կիրառված է համարվում գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու պահից (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 4-րդ մաս): Եթե մեղադրյալը եռօրյա ժամկետում չի ներկայացնում գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթը, ապա *a contrario* (հակառակից) տրամաբանությամբ կարելի է ասել, որ գրավը համարվում է չկիրառված: Գրավը կիրառված/չկիրառված համարելու մասին կարգավորումն իրավական ֆիկցիա է, քանի որ գրավը՝ որպես խափանման միջոց, իրականում կիրառվում և ուժի մեջ է մտնում իրավասու մարմնի որոշումը կայացնելու և այն դատախազի կողմից հաստատելու պահից, պարզապես օրենսդիրը համարում է, որ այն չի կիրառվել, եթե մեղադրյալը գրավը չի մուծել: Գրավը մուծված լինելու պահից այն կիրառված համարելու ֆիկցիան առաջացնում է երկու հետևանք:

Նախ՝ այս ֆիկցիայի պարագայում գրավը չմուծելը չի կարող որակվել որպես խափանման միջոցի պայմանների խախտում (գրավը համարվում է չկիրառված), ուստի նման իրավիճակում ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում կիրառվում է այլ՝ առավել պիտանի խափանման միջոց, կիրառելի չէ: Ճիշտ է, գրավը չմուծելու դեպքում քննարկվում է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի այլ տեսակ ընտրելու հարցը, սակայն դա տեղի է ունենում ընդհանուր կարգով, ոչ թե խափանման միջոցը խախտելու հիմնավորմամբ:

Երկրորդ՝ եթե գրավը մուծված չլինելու դեպքում համարվում է, որ գրավը չի կիրառվել, ապա գրավը՝ որպես խափանման միջոց, փոխելու կամ այն վերացնելու անհրաժեշտությունը վերանում է: Այսինքն՝ իրավասու մարմինն այլ տեսակի խափանման միջոց կիրառելիս գրավը փոխելու կամ վերացնելու մասին առանձին որոշում չի կայացնում, քանի որ գրավը համարվում է չկիրառված:

3. Գրավի չափը որոշելը և գրավի առարկան

Գրավի չափը որոշելիս հաշվի են առնվում մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրության աստիճանը և մեղադրյալի գույքային դրությունը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 2-րդ մաս):

Գրավի չափը որոշելիս պետք է իրավական քաղաքականությունը լինի այնպիսին, որ գրավը չվերածվի մեծահարուստների արտոնության: Գրավ պետք է սահմանել այնպիսի չափով, որ մի կողմից՝ այն պիտանի լինի ապահովելու մեղադրյալի օրինական վարքագիծը, մյուս կողմից՝ այն մուծելը լինի մեղադրյալի հնարավոր-

րությունների սահմաններում: Բացի այդ, իրավակիրառողը գրավը չպետք է ընկալի որպես ամենախիստ խափանման միջոցից՝ կալանքից ազատելու փրկագին⁵: Եթե իրավակիրառողը գրավի նկատմամբ ունենա նման հոգեբանական վերաբերմունք, ապա կսահմանի անհամաչափ բարձր գրավ:

Այն իրավիճակներում, երբ առկա է գրավը չմուծելու դեպքում մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու վերաբերյալ խափանման միջոց կիրառելու ռիսկ, ապա իրավասու մարմինները պարտավոր են գրավի չափը որոշելիս ցուցաբերել նույն մանրակրկիտ վերաբերմունքը, ինչ որ ցուցաբերվում է կալանք կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Եվրոպական դատարանը նշում է, որ գրավի չափը պետք է գնահատվի՝ առաջին հերթին հաշվի առնելով մեղադրյալի անձը և նրա գույքային դրույթը, սակայն որոշակի հանգամանքներում անհիմն չէ նաև հաշվի առնել նրան վերագրվող վնասի ծավալը (տե՛ս Մուսա ընդդեմ Ֆրանսիայի (*Moussa v. France*), գործով 21.05.1997թ. վճիռը): Օրինակ՝ Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի (*Mangouras v. Spain*, 28.09.2010 թ.) գործով նավթատար նավը խորտակվել է Իսպանիայի Գալիսիայի ափերի մոտ՝ առաջացնելով Եվրոպայում տեղի ունեցած ամենամեծ էկոլոգիական աղետներից մեկը: Իսպանական ազգային դատարանը կալանքից ազատելու համար սահմանել էր 3.000.000 եվրոյի չափով գրավ: Գումարի չափը հիմնականում պայմանավորված էր էկոլոգիական վնասի բացառիկ մասշտաբով և ծավալներով (աղտոտվել էր 2,900 կմ ափագիծ): Թեև այս դեպքում հանցագործությամբ պատճառված վնասը գրավի չափը որոշելիս ունեցել է կարևոր նշանակություն, սակայն Եվրոպական դատարանը խախտում չի հաստատել:

Մինչդեռ, Իստոմինան ընդդեմ Ուկրաինայի (*Istomina v. Ukraine*, 13.01.2022թ.) գործով Եվրոպական դատարանը խախտում է արձանագրել, քանի որ հարկային հանցագործության գործերով գրավի չափը 125 անգամ գերազանցել է տվյալ հանցատեսակների համար օրենքով սահմանված գրավի առավելագույն չափը: Դատարանը նշել է, որ նման բարձր գրավի չափ սահմանելու հիմքում դրվել է միայն հանցագործությամբ պատճառված վնասը:

Մեղադրյալին ներկայացված մեղադրանքների ծանրությունը չի կարող համարվել գրավի բարձր չափ սահմանելու միակ հիմքը (տե՛ս Եվրոպական դատարանի Քրիստովան ընդդեմ Բուլղարիայի (*Hristova v. Bulgaria*) գործով 07.12.2006թ. վճիռը):

Տեսության մեջ նշվում է, որ գրավի չափը որոշելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե գրավ դնելուց հետո մեղադրյալն արդյո՞ք ունի բավարար միջոցներ իր և իր խնամքի ներքո գտնվող անձանց կենսական շահերն ապահովելու համար⁶:

Գրավը՝ որպես խափանման միջոց, կարող է սահմանվել միայն դրամական միավորի ձևով, սակայն գրավը՝ որպես սահմանված դրամական միջոց, պետք է տարբերակել գրավի առարկայից: Գրավի առարկա կարող են լինել ինչպես դրամական միջոցը, այնպես էլ շարժական կամ անշարժ գույքը, արժեթղթերը կամ այլ արժեքները:

Եթե գրավի առարկան շարժական կամ անշարժ գույք է, արժեթուղթ է, ապա գրավի

արժեքի ապացուցման պարտականությունը կրում է գրավատուն (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 2-րդ մաս): Անձնագիրը չի կարող հանդիսանալ գրավի առարկա («Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ընդ որում՝ հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ գրավի առարկայի արժեքը գերազանցի իրավասու մարմնի որոշմամբ սահմանված դրամական գումարի չափը: Օրինակ՝ իրավասու մարմնի որոշմամբ որպես գրավ սահմանվել է 5 միլիոն դրամ, սակայն գրավ դրվող անշարժ գույքի արժեքը 15 միլիոն դրամ է: ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է, որ եթե որպես գրավ ընդունվել է անշարժ կամ շարժական գույք, ապա խափանման միջոցի պայմանները խախտելու հիմքով այդ գույքի վաճառքից մնացած գումարի այն մասը, որը գերազանցում է գրավի չափը, ենթակա է վերադարձման:

Գրավ կիրառելու դեպքում գրավի առարկան, որպես կանոն, դուրս է գալիս սեփականատիրոջ տիրապետությունից և սահմանափակվում են այն տնօրինելու կամ օգտագործելու իրավունքները: Սակայն պետք է տարբերակել գրավի առարկա ՀՀ դրամի, շարժական գույքի, այդ թվում՝ արժեթղթերի և անշարժ գույքի պահպանության ռեժիմները:

Եթե գրավի առարկան ՀՀ դրամն է, ապա այն մինչդատական վարույթի փուլում պահատվության է փոխանցվում դատախազության դեպոզիտային հաշվին, դատական վարույթի փուլում՝ դատարանի դեպոզիտային հաշվին:

Եթե գրավի առարկան շարժական գույք է, արժեթղթեր կամ այլ արժեքներ են, ապա դրանք պահատվության է փոխանցվում համապատասխան որոշմամբ նշված բանկի կամ այլ վարկային կազմակերպության դեպոզիտ:

Անշարժ գույքը կարող է հանդիսանալ գրավի առարկա, եթե գրավ կիրառելու մասին որոշմամբ հատուկ նշվել է դրա հնարավորության մասին (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 1-ին մաս): Դատավարական օրենքում նախատեսված չէ անշարժ գույքի՝ որպես գրավի առարկայի գրավադրման դեպքում այդ գույքի տնօրինման իրավագործության նկատմամբ սահմանափակումները գրանցելու մասին հատուկ նորմ: Այս պարագայում կարող են կիրառվել անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումների գրանցման վերաբերյալ ընդհանուր կարգավորումները: Այսպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սահմանափակումների պետական գրանցման համար հիմք են նախաքննություն իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումները: Եթե իրավասու մարմինը որոշմամբ հնարավոր է համարել գրավի առարկա ընդունել անշարժ գույքը, և մեղադրյալը կամ գրավատուն նախընտրել են գրավ դնել անշարժ գույքը, ապա պետք է գրավ կիրառելու մասին իրավասու մարմնի՝ գրավի առարկա անշարժ գույքի տնօրինման իրավագործությունը սահմանափակելու մասին որոշումը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնեն

ՀՀ կադաստրի կոմիտե:

Անշարժ գույքը որպես գրավի առարկա ընդունելը թեև առաջացնում է որոշակի կազմակերպական բարդություններ, սակայն այն ունի իր դրական կողմերը, քանի որ մեղադրյալը, որը չունի բավարար դրամական միջոցներ, անշարժ գույքը գրավ դնելով կարող է շարունակել օգտագործել այդ գույքը (բնակվել բնակարանում, հանձնել վարձակալության և այլն):

ՔրԴՕ-ում թեև նշված չէ, սակայն ենթադրվում է, որ գրավի առարկա չի կարող լինել այնպիսի գույք, որի վրա, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել: Օրինակ՝ ըստ նշված օրենքի՝ բռնագանձում չի կարող տարածվել հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հատուկ, ինչպես նաև նրանց հնարավորություններին հարմարեցված փոխադրամիջոցների, աջակցող միջոցների վրա: Թեև դոկտրինում նշվում է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապացուցման ընդհանուր կանոնների հիման վրա պարզել գրավի առարկայի ծագման օրինականությունը⁷, սակայն նման առաջարկի իրագործման դեպքում վարույթն իրականացնող մարմինն ակնհայտորեն դուրս կգա քրեական դատավարության սահմաններից: Ավելին, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում ո՛չ գրավատուն, ո՛չ էլ իրավասու մարմինը գույքի ծագման օրինականությունն ապացուցելու կամ այն ստուգելու պարտականություն չունեն: Այնուամենայնիվ, եթե իրավասու մարմինն ունի գրավի առարկայի ծագման օրինականության մասին առերևույթ կասկածներ, ապա պարտավոր է քննարկել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին ՀՀ օրենքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները գործի դնելու հարցը:

4. Գրավի կիրառման իրավաչափությունը

Գրավը որպես խափանման միջոց, կարող է կիրառվել, եթե առկա է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկած (ՀՀ ՔրԴՕ 116-րդ հոդվածի 1-ին մաս):

Գրավը կարող է կիրառվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է դրսևորել ոչ օրինական վարքագիծ, մասնավորապես՝ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամ խոչընդոտել է վարույթին:

Գրավը կոչված է ապահովելու մեղադրյալի օրինական վարքագիծը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 1-ին մաս): Մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու նպատակը ձևակերպված է լայն, սակայն այն պետք է մեկնաբանել ՀՀ ՔրԴՕ 116-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում, այսինքն՝ այս խափանման միջոցի նպատակն է որպեսզի մեղադրյալը չդիմի փախուստի, չկատարի նոր հանցանք կամ կատարի օրենքով կամ դատարանի որոշմամբ իր վրա դրված պարտականությունը:

Գրավը՝ որպես խափանման միջոց, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված

հնարավոր վնասի կամ վարության հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու նպատակ չի հետապնդում: Այս նպատակների համար պետք է կիրառել մեկ այլ հարկադրանքի միջոց՝ գույքի արգելադրումը:

Գրավը՝ որպես խափանման միջոց, իրավասու են կիրառել՝

1) դատախազի համաձայնությամբ՝ քննիչը մինչև մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին դատախազին հանձնելը.

2) հսկող դատախազը՝ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին քննիչից ստանալու պահից, մինչև դրանք դատարան հանձնելը.

3) դատարանը՝ հետևյալ երկու վարույթներում.

ա) մինչդատական վարությամբ՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը լուծելիս: Այս փուլում դատարանը գրավ կարող է կիրառել միայն տնային կալանքի կամ վարչական հսկողության հետ համակցված.

բ) դատական վարությամբ:

5. Գրավի պայմանները խախտելը և դրա իրավական հետևանքները

Գրավի պայմանների խախտումը կարող է առաջացնել երկու հետևանք՝

1) առավել պիտանի (խիստ) խափանման միջոց կիրառելը (ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մաս).

2) իրավասու մարմնի որոշմամբ գրավը (գրավի առարկան) պետության եկամուտ դարձնելը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մաս):

Օրենսդիրը հստակեցրել է գրավի պայմանների այն խախտումները, որոնց հետևանքով գրավը դառնում է պետության եկամուտ (գրավը պետականացվում է): Դրանք են՝

1) մեղադրյալը թաքնվել է վարույթի իրականացնող մարմնից.

2) պարբերաբար չի ներկայացել վարույթի իրականացնող մարմնի հրավերով.

3) էապես խոչընդոտել է վարույթին (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մաս):

Նկատի ունենալով, որ գրավի պայմանների նման խախտումների դեպքում գրավի առարկայի (գրավի) պետականացումն ինտենսիվ միջամտություն է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքին (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ/0043/01/21 գործով 28.11.2024թ. որոշումը), օրենսդիրը, ելնելով համաչափության սահմանադրական սկզբունքից, գրավի պայմանների խախտում է համարել ոչ թե վարույթի իրականացնող մարմնի կանչով մեկ անգամ չներկայանալը, այլ պարբերաբար չներկայանալը կամ ոչ թե պարզապես խոչընդոտելը, այլ էապես խոչընդոտելը:

Եթե մեղադրյալը թույլ է տվել գրավի պայմանների՝ վերը նշված էական խախտումները, ապա դրա արդյունքում կիրառվում է առավել խիստ (պիտանի) խափանման միջոց, և գրավը պետականացվում է: Իսկ եթե գրավի պայմանների խախտումներն էական չեն, օրինակ՝ վարույթի իրականացնող մարմնի հրավերով

չներկայանալը պարբերաբար չէ, ապա այս դեպքում պետք է քննարկել միայն առավել պիտանի խափանման միջոց կիրառելու հարցը:

Իրավասու մարմինը պետք է համակողմանի ուսումնասիրի գրավի պայմանները խախտելու բոլոր հանգամանքները: Պետք է պարզել՝ արդյոք մեղադրյալը թաքնվում է, թե՞ գտնվում է գործուղման մեջ, կամ վարույթն իրականացնող մարմնի կանչով պարբերաբար չներկայանալու պատճառները: Վարույթին էապես խոչընդոտելու, մասնավորապես՝ ապացուցման գործընթացին էապես ապօրինի միջամտելու հանգամանքը գնահատելիս պետք է հաշվի առնել մեղադրյալի գործողությունների ինտենսիվությունը, պարբերականությունը, ինչպես նաև փաստական տվյալի ապացուցողական նշանակությունը, որի բովանդակության վրա մեղադրյալն ազդել է:

Ի տարբերություն նախորդ օրենսդրության՝ ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասում մեղադրյալի կողմից մեկ այլ հանցանք կատարելն ինքնին գրավը պետության եկամուտ դարձնելու հիմք չէ, սակայն ապացուցման գործընթացին էապես ապօրինի միջամտելը (վարույթին էապես խոչընդոտելը) կարող է պարունակել հանցագործության հատկանիշներ: Օրինակ՝ քրեական վարույթով ապացույց, դատավարական փաստաթուղթ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույց ներկայացնելը (ՀՀ ՔրԴՕ 479-րդ հոդված), կամ դատավարության մասնակիցների լիազորությունների իրականացումը խոչընդոտելը (ՀՀ ՔրԴՕ 495-րդ հոդված) համարվում են հանցագործություններ: Հանցագործությամբ ապացուցման գործընթացին միջամտելը գրավի համատեքստում, անկասկած, համարվում է վարույթին էապես միջամտելու եղանակ: Ենթադրենք, կոնկրետ վարույթով (առաջին վարույթ) մեղադրյալը հանցավոր եղանակով խոչընդոտել է վարույթին, որի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ (երկրորդ վարույթ): Առաջին վարույթով հսկող դատախազը կամ դատարանն արդյո՞ք իրավասու են մինչև երկրորդ վարույթով դատավճռի կայացումը հաստատված համարել, որ մեղադրյալը վարույթին էապես խոչընդոտելու եղանակով խախտել է գրավի պայմանները, և որոշում կայացնեն գրավը պետության եկամուտ դարձնելու մասին: Պատասխանը բացասական է: Առաջին վարույթով հսկող դատախազը կամ մեղադրանքը քննող դատարանը, անմեղության կանխավարկածի պահանջով, իրավասու չեն, մինչև երկրորդ վարույթով մեղադրյալի կողմից հանցավոր եղանակով առաջին վարույթին խոչընդոտելու փաստը դատավճռով հաստատելը գրավը պետության եկամուտ դարձնել: Նկարագրված իրավիճակում, երբ վարույթին հանցավոր ճանապարհով խոչընդոտելու փաստով առկա է քրեական վարույթ, որը դեռևս ավարտված չէ, անմեղության կանխավարկածն արգելում է առաջին վարույթով հաստատված համարել այդ փաստը և մարդուն գրկել սեփականության իրավունքից:

Համանման իրավիճակի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՄԴ/0043/01/21 գործով 28.11.2024 թ. որոշմամբ նշել է.

«Գրավը պետության եկամուտ դարձնելու համատեքստում դատարանի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հանգամանքը կարող է ապացուցված համարվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով,

իսկ քրեական գործի քննության փուլում գրավը պետության եկամուտ դարձնելու հարցը ենթակա է լուծման վերջնական դատական ակտով, հակառակ պարագայում վարույթն իրականացնող մարմնի, տվյալ դեպքում՝ դատարանի գործողություններն ինքնին կհանգեցնեն անձի անմեղության կանխավարկածի խախտման»:

Նմանատիպ իրավիճակում առաջին վարույթով անմեղության կանխավարկածի խախտումից խուսափելու համար իրավասու մարմինը գրավի պայմանները խախտելու երկու հետևանքներից պետք է կիրառի միայն մեկը՝ միջոցներ ձեռնարկի առավել պիտանի խափանման միջոց կիրառելու համար (ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մինչդատական վարույթում գրավը պետականացնելու որոշումը կայացնում է հսկող դատախազը⁸: Նա որոշման պատճենը եռօրյա ժամկետում ուղարկում է մեղադրյալին և գրավը մուծած անձին՝ նրանց պարգաբանելով այդ որոշման բողոքարկման՝ ՀՀ ՔրԴՕ սահմանված կարգը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մաս): Դատական վարույթում գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը կայացնում է դատարանը (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 6-րդ մաս): Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի և դատարանի որոշումները ենթակա են հարկադիր կատարման («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 13-րդ կետեր):

6. Գրավը վերադարձնելը

Գրավը վերադարձվում է գրավատուին բոլոր դեպքերում, երբ չեն ապացուցվել ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտումները, կամ գրավը որպես խափանման միջոց վերացվել կամ փոխվել է (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մաս):

6.1. Գրավը վերադարձնելը՝ խախտումներն ապացուցված չլինելու հիմքով: Գրավը վերադարձնելու առաջին հիմքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ գրավը պետականացնելու մասին հսկող դատախազի կամ դատարանի որոշումը բողոքարկվում է, որի արդյունքում դատարանը փաստում է, որ գրավի պայմանների խախտումներն ապացուցված չեն: Գրավը վերադարձնելու այս հիմքի վերաբերյալ առկա է երկու նկատառում:

1) եթե ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտումները չեն ապացուցվում, ապա գրավը գրավատուին վերադարձնելուց զատ, պետք է նաև քննարկել գրավի պայմանները խախտելու հիմքով կիրառված առավել պիտանի (խիստ) խափանման միջոցը փոփոխելու և ավելի մեղմ խափանման միջոց կիրառելու հարցը: Կախված նրանից, թե գրավը պետականացնելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատարանն ինչ փաստեր է հաստատված համարում, հնարավոր է երկու տարբերակ:

Տարբերակ առաջին՝ եթե դատարանը հաստատում է, որ գրավի պայմանները խախտվել են, սակայն դրանք էական չեն (քննիչի կամ դատարանի հրավերով չներկայանալը չի եղել *պարբերաբար*, կամ վարույթին խոչընդոտելը չի եղել *էսպես*), ապա պետականացված գրավը վերադարձվում է գրավատուին, սակայն գրավի փոխարեն կիրառված խիստ խափանման միջոցը կարող է մնալ անփոփոխ, քանի որ

գրավի պայմանների խախտման փաստը, այնուամենայնիվ, հաստատված է, պարզապես դրանք գրավը պետականացնելու համար անհրաժեշտ էական խախտումները չեն:

Տարբերակ երկրորդ՝ եթե դատարանը հաստատում է, որ գրավի պայմանները չեն խախտվել, ապա նման որոշումն ուղղակի հիմք է գրավը գրավատուին վերադարձնելու համար և գործուն ազդակ է վերանայելու խափանման միջոցի պայմանները խախտելու հիմքով գրավն առավել խիստ խափանման միջոցով փոխարինելու դիրքորոշումը վերանայելու համար:

2) ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մասի տառացի ձևակերպումից ստացվում է այնպես, որ գրավը վերադարձվում է, եթե չեն ապացուցվել գրավի պետականացման համար հիմք հանդիսացած խախտումները, մինչդեռ գրավը պետականացնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել նաև ձևական (ընթացակարգային) բնույթի խախտումների հիմքով. օրինակ՝ գրավը պետականացնելու մասին որոշումը բողոքարկվել է այն հիմքով, որ այդ որոշումը կայացրել է տվյալ գործով իրավասություն չունեցող դատախազը: Եթե դատարանը ՀՀ ՔրԴՕ 300-րդ հոդվածի կարգով բողոքը քննելու արդյունքում հաստատում է ընթացակարգային խախտման փաստը, արդյո՞ք դա ինքնին նշանակում է, որ այդ դատական ակտի հիման վրա գրավը ենթակա է վերադարձման: Ըստ գործող օրենսդրության՝ այս հարցին դրական պատասխան տալը հնարավոր չէ, քանի որ՝ 1) պետականացված գրավը վերադարձնելու ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված հիմքերի ցանկում ընթացակարգային խախտումը նշված չէ, 2) դատարանը մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների վարույթով բողոքարկվող որոշումը վերացնելու լիազորություն չունի: Դատարանը բողոքը բավարարելու դեպքում վարույթի հանրային մասնակցի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարութային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն (ՀՀ ՔրԴՕ 304-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այս երկու գործոնները հիմք են տալիս պնդելու, որ եթե դատարանը հաստատում է գրավը պետականացնելու ժամանակ թույլ տրված ընթացակարգային խախտումը, ապա դա պետականացված գրավը վերադարձնելու անմիջական հիմք չէ: Մակայն դա չի նշանակում, որ դատարանի հաստատած ընթացակարգային խախտումը պետք է մնա անհետևանք: Բողոքը բավարարելու որոշմամբ դատարանը վերադաս դատախազի վրա դնում է ոչ իրավասու դատախազի կողմից գրավը պետականացնելու խախտումը վերացնելու պարտականություն, որի սահմաններում վերադաս դատախազը պետք է վերացնի գրավը պետականացնելու մասին ոչ իրավասու դատախազի որոշումը, որից հետո գրավն անհապաղ պետք է վերադարձվի սեփականատիրոջը, քանի որ գրավը պետականացնելու մասին որոշումն իրավաբանորեն գոյություն չունի, ուստի այն այլևս չի կարող առաջացնել որևէ իրավական և փաստական հետևանք:

6.2. Գրավը վերադարձնելը՝ խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու հիմքով: Գրավը վերադարձնելու երկրորդ հիմքը վերաբերում է գրավը որպես խափանման

միջոց վերացնելուն կամ փոխելուն: Գրավը՝ որպես խափանման միջոց, կարող է վերացվել և փոխվել երկու ռեժիմով: Առաջինը՝ ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու ռեժիմն է, երբ խափանման միջոցի գործողության ընթացքում վերացել կամ փոխվել են գրավի իրավաչափության պայմանները, և վարույթն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում գրավը փոխելու կամ վերացնելու մասին: Երկրորդը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ դատավճիռ կայացնելու դեպքում խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու ռեժիմն է, երբ իրավասու մարմինը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ դատավճիռ կայացնելով, գրավը վերացնում է կամ փոխում է (ՀՀ ՔրԴՕ 196-րդ հոդվածի 4-րդ մաս, 348-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ):

Եթե գրավի պայմանները չեն խախտվել, ապա քրեական հետապնդումը դադարեցնելու կամ դատավճիռ կայացնելու դեպքում գրավը ենթակա է վերադարձման՝ անկախ նրանից քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող, թե՛ ոչ արդարացնող հիմքով, կամ կայացվել է մեղադրական, թե՛ արդարացման դատավճիռ:

Գրավի առարկան այլ նպատակներով, օրինակ՝ գույքային հայցը վճարելու կամ վարույթային ծախսերը հատուցելու նպատակով, չեն կարող օգտագործվել, քանի որ դրա համար օրենսդրական հիմքեր նախատեսված չեն:

6.3. Գրավը վերադարձնելու անհապաղությունը: Գրավը վերադարձնելու մասին որոշումն ընդունվում է համապատասխան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 7-րդ մաս): Օրենքը հստակ չի սահմանել գրավի առարկան փաստացի վերադարձնելու ժամկետ, սակայն՝ նկատի ունենալով, որ գրավը՝ որպես խափանման միջոց, սահմանափակում է գրավատուի սեփականության իրավունքը, ուստի գրավը՝ որպես խափանման միջոց, վերացնելիս կամ փոխելիս գրավի առարկան պետք է վերադարձնել անհապաղ՝ անկախ նրանից, թե խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնել է, թե՛ ոչ, կամ այն բողոքարկվել է, թե՛ ոչ:

Քրեական հետապնդումը դադարեցնելու կամ դատավճիռ կայացնելու, կամ գրավը՝ որպես խափանման միջոց, այլ ռեժիմով վերացնելու փաստով, անկախ այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքից, գրավի առարկան պահելու իրավաչափ հիմքերը վերանում են:

Գրավը՝ որպես խափանման միջոց, վերացնելու կամ փոխելու դեպքում գրավի առարկան անհապաղ վերադարձնելու իրավիճակը նման է արդարացման վերդիկտ կայացնելու դեպքում կալանավորված մեղադրյալին դատական նիստերի դահլիճից անհապաղ ազատելուն, իսկ մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելուն, կիրառված խափանման միջոցը փոխելուն կամ անփոփոխ թողնելուն (ՀՀ ՔրԴՕ 344-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Եվրոպական դատարանը Կասիլովն ընդդեմ Ռուսաստանի (*Kasilov v. Russia*, 06.07.2021) գործով մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց

կիրառելուց և նրան նիստերի դահլիճում ազատությունից զրկելուց հետո գրավն անհապաղ չվերադարձնելը (դատավճիռը կայացնելուց մոտ մեկ տարի անց վերադարձնելը) համարել է սեփականության իրավունքի խախտում: Ներպետական դատարանները դիմողի գրավը չեն վերադարձրել՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտած չլինելու հիմքով, մինչդեռ մեղադրյալի նկատմամբ գրավը կալանքով փոխարինելու և նրան ազատությունից զրկելու պահից գրավն անհապաղ չվերադարձնելը չի հետապնդել որևէ իրավաչափ նպատակ:

7. Եզրահանգումներ

Գրավն ապահովում է մեղադրյալի օրինական վարքագիծը՝ գույքային ռիսկերի և բարոյական պատասխանատվության միջոցով: Գրավը կարող է կիրառվել՝ առանց մեղադրյալի համաձայնության, բայց գործնականում նման համաձայնությունը քննարկվում է՝ ելնելով զուտ պրագմատիկ նկատառումներից:

Գրավատու չեն կարող լինել պետական մարմիններ, կազմակերպություններ կամ գործի այլ մասնակիցներ:

Գրավի պետականացումը թույլատրվում է միայն էական խախտումների դեպքում (փախուստ, վարույթին էական խոչընդոտում): Հանցագործություն կատարելն ինքնին գրավի պետականացնելու հիմք չէ:

Գրավը վերադարձվում է անհապաղ՝ խափանման միջոցի վերացման կամ փոփոխության պահին՝ անկախ համապատասխան ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց:

Գրավի առարկան որպես հայցի կամ ծախսերի հատուցման միջոց օգտագործելն արգելված է:

Գրավի առարկայի ծագման օրինականությունն ստուգելը վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը չէ:

BAIL AS A PREVENTIVE MEASURE (APPLICATION ISSUES)

ARTUR GHAMBARYAN

*Doctor of Juridical Sciences, Professor, Chairman
of the Department of Theory of Law and Constitutional
Law of Russian-Armenian University, Full Professor of
the State Administration Academy of the Republic of Armenia,
Honored Lawyer of the Republic of Armenia*

Abstract

The article examines the legal nature of bail as a preventive measure. Bail is a property-based preventive measure that ensures the accused's lawful behavior through economic (threat of property losses) and moral-psychological (responsibility to the pledgor) mechanisms. It may be applied to any accused, and pledgors may include individuals/legal entities, excluding state bodies, victims, or other accused persons.

The application of bail does not require the accused's consent, though it is negotiated in practice.

The bail amount is determined by considering the gravity of the crime and the accused's financial status, adhering to the principle of proportionality. Bail collateral may include cash, movable/immovable property, securities, or other valuables, with state registration of property rights restrictions mandatory for immovable assets.

If conditions are violated (absconding, substantial obstruction of proceedings), the bail is confiscated by the state, and a stricter preventive measure is applied. Bail is refunded immediately upon termination of criminal prosecution, conviction, or modification of the preventive measure.

Keywords: Bail, preventive measure, principle of proportionality, accused, pledgor, confiscation, presumption of innocence, property rights.

ЗАЛОГ КАК МЕРА ПРЕСЕЧЕНИЯ (ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ)

АРТУР ГАМБАРЯН

*Доктор юридических наук, профессор,
заведующий кафедрой теории права и конституционного
права Российско-Армянского (Славянского) Университета,
профессор Академии государственного управления Республики
Армения, заслуженный юрист Республики Армения*

Аннотация В статье исследуется правовая природа залога как меры пресечения. Залог является мерой пресечения имущественного характера, обеспечивающей правомерное поведение обвиняемого посредством экономических (угроза имущественных потерь) и морально-психологических (ответственность перед залогодателем) механизмов. Он может применяться в отношении любого обвиняемого, а в качестве залогодателя могут выступать физические/юридические лица, за исключением государственных органов, потерпевших или других обвиняемых. Применение залога не требует согласия обвиняемого, хотя на практике оно обсуждается. Размер залога определяется с учетом тяжести преступления и имущественного положения обвиняемого при соблюдении принципа пропорциональности. Предметом залога могут быть денежные средства, движимое/недвижимое имущество, ценные бумаги или иные ценности, причем для недвижимости обязательна государственная регистрация ограничений права собственности.

В случае нарушения условий (побег, существенное препятствование производству) залог конфискуется в доход государства, и применяется более строгая мера пресечения. Возврат залога осуществляется немедленно при прекращении уголовного преследования, вынесении приговора или изменении меры пресечения.

Ключевые слова: Залог, мера пресечения, принцип пропорциональности, обвиняемый, залогодатель, конфискация, презумпция невиновности, право собственности.

Հոդվածը գրված է 02.10.2025
Ներկայացվել է տպագրության 09.10.2025

Գրականության ցանկ

Капинус Н.И. Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: монография. М.: Изд. Букввед, 2007. 416 с.

Михайлов В.А. Уголовно-процессуальные меры пресечения в судопроизводстве Российской Федерации. М., 1997. 304 с.

Меры процессуального принуждения в досудебном производстве по уголовным делам. М.: Изд. Юрлитинформ, 2005. 184 с.

Булатов Б.Б., Ершов О.Г. О правовом регулировании и применении залога в уголовном судопроизводстве // Российская юстиция. 2012. № 7. 36-40 с.

Тутынин И. Б. Теоретические основы уголовно-процессуального принуждения имущественного характера: монография. М.: Изд. Юрлитинформ, 2022. 352 с.

Царева Ю. В. Залог как мера пресечения в уголовном процессе России: доктрина, юридическая техника, правоприменительная практика: автореф. дисс. ... канд. юрид. наук. Н. Новгород, 2018. 24 с.

ՊԱՌԼԱՄԵՆՏԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՇԻՌ

Մարտին Մանուկյան

*Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության
ամբիոնի դասախոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու
DOI: 10.63925/18294847-2025.op20-05*

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել են պառլամենտի առաջացումը, զարգացումն ու ձևավորումն ընդգրկող պատմական ձևերը (փուլերը), բացահայտվել են պառլամենտի և պառլամենտարիզմի փոխկապակցվածության, պառլամենտարիզմի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության ձևի տեսաիրական հիմքերը, առանձնացվել են պառլամենտին և պառլամենտարիզմին բնորոշ հատկանիշները, ինչպես նաև քաղաքական համակարգի (ռեժիմի) ու կառավարման ձևի առանձնահատկություններով պայմանավորված՝ ժամանակակից պառլամենտարիզմի տեսակները: Հոդվածի հեղինակը մանրամասնել է, որ պառլամենտարիզմի ձևավորումը տարբեր երկրներում կախված է եղել կոնկրետ պայմաններից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական զանազան գործոններից, որոնց հետևանքով առաջացավ ժողովրդական վետոն, ինչն ընդլայնում էր զանգվածների՝ պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը: Հեղինակը փաստարկել է նաև, որ պառլամենտարիզմի էվոլյուցիան, նրա անցումը մի փուլից մյուսին պայմանավորված են հասարակությունում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային-հոգևոր փոփոխություններով: Յուրաքանչյուր փուլ, իրականացնելով իր պատմական առաքելությունը, նախադրյալներ է ստեղծում այլ որակական իրավիճակ տեղափոխվելու համար: Հեղինակի պնդմամբ՝ դրանում էական դեր է ունեցել նաև հասարակական միտքը:

Բանալի բառեր. Անտիկ ժամանակներ, չորսհարյուրի խորհուրդ, հինգհարյուրի խորհուրդ, սենատ, պառլամենտ, պառլամենտարիզմ, իշխանություն, դասային ներկայացուցչություն, քաղաքական համակարգ, պետական կառուցվածք, պառլամենտարիզմի հասուն ձևեր:

Պառլամենտն առաջացել ու ձևավորվել է որպես գործադիր իշխանության հակալշիռ¹: Այդուամենայնիվ, պառլամենտարիզմի ոչ բոլոր կողմնակիցներն են ընդունել օրենսդիր իշխանության գերակայությունը: Եթե Ջ. Լոքը, Թ. Ջեֆերսոնը չէին ընդունում թագավորի՝ պառլամենտի հանդեպ իշխանության գերակայության գաղափարը, ապա

¹ Տե՛ս **Авакьян С.А.** Парламентаризм в России: Идеи и решения // Вестник Моск. ун-та. Серия «Право», 2006, № 2, էջ 7-8:

Շ.Մոնտեսքյուն, Գ.Հեգելը, ապացուցելով պառլամենտի անհրաժեշտությունը և ինքնուրույնությունը, այն կախման մեջ էին դնում միապետից²:

Պառլամենտի առաջացումն ու ձևավորումն ընդգրկում են չորս պատմական ձևեր (փուլեր)՝ **անտիկ, դասային ներկայացուցչական, բուրժուական (բուրժուա-ցենզային), ժամանակակից**:

Առաջին փուլի ժամանակագրական շրջանակները ներգրավում են հնագույն ժամանակներից մինչև 12-րդ դարը: Այս փուլը բնութագրվում է որպես նախա (պրոտո) պառլամենտարիզմի դարաշրջան:

Ըստ Կ. Շմիդտի՝ «..պառլամենտի գոյության արդարացումն այն դատողությունն է, ըստ որի՝ անհնար է, որ բոլորը միևնույն ժամանակ միավորվեն մեկ վայրում, նաև անհնար է բոլորին հարցնել յուրաքանչյուր մասնավոր հարցի առթիվ, որի համար ավելի բանական կլինի դուրացնել խնդիրը լիազորված անձանց կոլեգիալ ընտրության միջոցով, իսկ դա հենց պառլամենտն է»³:

Չմանրամասնելով օրենսդրական գործընթացի նկարագրությունը հնագույն պետություններում՝ արձանագրենք միայն հետևյալ ընդհանուր բնութագրիչները.

Օրենսդրությունն արդի ըմբռնմամբ մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերը դեռևս բացակայում էր: Դրան փոխարինում էին փարավոնների, արքաների հրամանները (էդիկտները Հռոմում), ինչպես նաև նրանց գլխավոր կառավարիչների հրամանները: Այլ խոսքով՝ օրենսդրությունը կրում էր բացառապես ավտորիտար բնույթ:

Պետական կառուցվածքի, իրավական նորմաստեղծման հիմքը կազմում էին առապելները թագավորների ու նրանց իշխանության աստվածային ծագման մասին: Ուստի պատահական չէ, որ իրավական նորմերի հիմնական մշակողները քրմերն էին:

Իշխանության օրենսդիր ճյուղը գործարկվում էր որպես թագավորների, նրանց փոխանորդների, վարչական շրջանների կառավարիչների իշխանական իրավունքներից մեկը: Իրավական նորմաստեղծման մեջ գլխավոր սուբյեկտը թագավորն էր:

Իրավական նորմաստեղծման մեջ կար թույլ ժառանգականություն. նորմերը, որոնք գործում էին մեկ կառավարչի ժամանակ, չեղարկվում էին նրա ժառանգի կողմից, կենտրոնացումը փոխվում էր ծայրաստիճան ապակենտրոնացմամբ, որն առաջացնում էր պետության կազմաքանդման սպառնալիք:

Հետագոտողների մեծ մասի կարծիքով՝ մ.թ.ա.1-ին հազարամյակի կեսերին Հին Հունաստանում ու Հին Հռոմում ձևավորվել էին՝ Սոլոնի ժամանակ՝ «Չորսհարյուրի խորհուրդը», Կլիսֆենի ժամանակ՝ «Հինգհարյուրի խորհուրդը», Մենատը Հին Հռոմում և այլն:

XII դարում սկսեցին զարգանալ պառլամենտական հաստատություններն Անգլիայում, ավելի ուշ հայտնվեցին ժողովները՝ Իսպանիայում, հավաքները՝ Ֆրանսիայում: Քաղաքացիների կամ ընտրյալների այս ժողովների ժամանակ քննարկվում էին հար-

² См' u **Нерсисянц В.С.** История политических и правовых учений. М., 2015, էջ 28:

³ См' u **Шмидт К.** Политическая теология. М., 2000, էջ 183.

ցեր, որոնք արդիական էին տվյալ տարածքի համար, նրա սահմանափակ սահմանները թույլ էին տալիս այդպիսի ժողովներ անցկացնել ավելի պարբերաբար: Աստիճանաբար դիտարկվող հարցերի շրջանակն ավելի պարզորոշ է գծագրվում, ավելի ու ավելի հաճախ քննարկման թեմա են դառնում համանշանակալից գործերը՝ ներառյալ պատերազմի ու խաղաղության հարցերը: Ժողովրդավարության այս ձևերը թեև դիտարկվում են որպես պառլամենտարիզմի պատմական նախատիպ ու դրա ձևավորման առաջին փուլ, սակայն, մեր կարծիքով, պառլամենտարիզմի՝ որպես գաղափարի և որպես ինստիտուտի պատմությունը կապ չունի անտիկ ժամանակների հետ: Թեպետ և այն եվրոպական քաղաքակրթության զարգացման համատեքստում, անշուշտ, ունի անտիկ ակունքներ: Քաղաքական ներկայացուցչության, առավել ևս՝ պառլամենտարիզմի գաղափարները, անտիկ ժառանգությունը մեծ ազդեցություն ունեցան պառլամենտարիզմի գաղափարախոսության և պրակտիկայի ձևավորման վրա:

Պառլամենտարիզմի զարգացման **երկրորդ փուլը** (XIII դարի սկիզբ - XVII դարի կեսեր) վերաբերում է այն ժամանակներին, երբ պառլամենտարիզմի առաջատար տարրը (պառլամենտները) սկսում է ձեռք բերել պետական ներկայացուցչական ժողովի նշանակություն, և այս ժամանակներից ի վեր կարելի է խոսել «դասային-ներկայացուցչական պառլամենտարիզմի» ձևավորման մասին⁴: Այս փուլում Եվրոպայում ձևավորվում են պառլամենտարիզմի նախակարապետները՝ դասային ներկայացուցչական մարմինները՝ օրենսդրական և օրինախորհրդակցական իրավասություններով: Անգլիայում դա պառլամենտն էր, Ֆրանսիայում՝ գլխավոր շտատները, Իսպանիայում՝ գլխավոր կորտեսները, Ռուսաստանում՝ բոյարական դուման և Զեմսկի ժողովը: Հատկանշական է, որ եթե «պառլամենտ» եզրույթը XII դարի սկզբին անվանվել է նեղ ժողով արքաների շրջանում, ապա քաղաքային խավերի այդ ժողովի կազմի մեջ ընդգրկման ու նրանց լիազորությունների՝ պառլամենտի կողմից ընդլայնման արդյունքում այն դարձել է պետական գործերով պարբերաբար հավաքվող ներկայացուցչական ժողով⁵:

Առաջին տարեթիվն Անգլիայի պառլամենտի ստեղծման մեջ կարելի է համարլ 1215-ը, երբ Հովհաննես Անհող Մեծը ստորագրեց «Ազատությունների մեծ խարտիան»: Թագավորական իշխանությունը, որը թուլացել էր անգլո-ֆրանսիական պատերազմական անհաջողությունների պատճառով, հարկադրված եղավ գնալ զիջումների: Բարոնների ճնշման ներքո թագավորն իր ու իր ժառանգների կողմից ստանձնեց որոշակի պարտավորություններ, այդ թվում՝ առանց կոլեգիալ մարմնի համաձայնության հարկեր չսահմանելու պարտականություն: Այն ըստ էության թագավորական ընտրախավ էր, որը 1265 թ. անվանվեց պառլամենտ⁶:

⁴ Տե՛ս **Барашков Т.М.** Парламенты мира. Саратов, «Наука», 2008, էջ 97:

⁵ Տե՛ս **Ковлер А.И.** Очерки по истории парламентаризма / Парламенты мира. М., 1991, էջ 618:

⁶ Տե՛ս Очерки парламентского права (Зарубеж. опыт): сб. ст. под ред. и с предисл. Б.Н.Топорнина. М., ИГПАН, 1993, էջ 178:

Սակայն կյանքը ցույց տվեց, որ «Ազատությունների մեծ խարտիան» բավարար չէր հպատակների քաղաքական անվտանգության ապահովման համար, ուստի պառլամենտի անընդհատ աշխատանքի, նրա անդամներին անձեռնմխելիությամբ օժտելու անհրաժեշտություն առաջացավ:

1689թ. թագավորն ստորագրեց «Իրավունքների մասին հռչակագիրը» կամ «Իրավունքների մասին Բիլլը», որով պառլամենտը համարվեց պարբերաբար հրավիրվող պետական իշխանության մարմին⁷:

Ըստ «Բիլլի»՝ թագավորն իրավունք չունի՝ 1) առանց պառլամենտի համաձայնության դադարեցնելու օրենքների գործողությունները, 2) որևէ մեկին ազատելու օրենքների ազդեցությունից, 3) թույլատրելու որևէ բացառում: Թագավորն առանց պառլամենտի համաձայնության չէր կարող իր կարիքների համար հավաքել որևէ հարկ: Նա զորահավաք կազմակերպելիս նույնպես հաշվի էր առնելու պառլամենտի համաձայնությունը: Պառլամենտի ընտրությունները պետք է լինեին ազատ: Պառլամենտում ապահովվում էր խոսքի և վիճաբանությունների ազատություն, այնտեղ ելույթ ունենալու համար հետապնդումը խստիվ արգելվում էր⁸:

Պառլամենտարիզմի **երրորդ փուլը** (XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարը) բնութագրվում է որպես բուրժուա-ցենզային կամ որպես դասական պառլամենտարիզմի ձևավորման ժամանակաշրջան: Դրա հայեցակարգայնացման գործում առավելագույն ներդրում ունեցավ նոր ժամանակների մտածողների աստղաբույլը՝ Ջոն Լոքը, Շարլ-Լուի Մոնտեսքյոն, Իերեմիա Բենտամը, Ջոն Ստյուարտ Միլը, Բենջամին Կոնստանը, Ալեքսիս դե Տոկվիլը, Թոմաս Հոբսը, Ժան-ժակ Ռուսոն և մյուսները: Նրանց աշխատություններում⁹ իշխանությունների բաժանման հիմնարար գաղափարն առաջադրելուց, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգում պառլամենտի գերակայության սկզբունքն ամրագրելուց բացի, ժողովրդական ներկայացուցչության ու օրինաստեղծման հիմնական գաղափարները դիտարկվում էին որպես բացարձակ իշխանության հիմնադրույթի հակոտնյա, որպես կառավարիչների ու ժողովրդի միջև հասարակական պայմանագրի ուսմունք (դոկտրին):

Ջ. Լոքի կարծիքով՝ ներկայացուցչական մարմնին վստահված օրենսդիր իշխանությունն ամենանախընտրելի տարբերակն է¹⁰, քանի որ դրանով ձևավորվում է ամբողջ բնակչության ընդհանուր վերաբերմունքն ընդունվող օրենքների նկատմամբ: Իշխանությունների բաժանմանը (տարանջատմանը) առնչվող ուսմունքը պառլամենտարիզմի հետ համադրվող գաղափարների մեջ է ընդգրկվել նաև Շ. Մոնտեսքյոյի «Օրենքների

⁷ Տե՛ս **Романов А.К.** Правовая система Англии. М., 2000, էջ 129-130:

⁸ Տե՛ս Билль о правах 1689 г. / Международные акты о правах человека. М., 2000, էջ 14:

⁹ Տե՛ս История политических и правовых учений. Учебник для вузов. 4-е изд. М., 2004, էջ 324-387:

¹⁰ Տե՛ս Правовая система Соединенных Штатов Америки. Автор: Уильям Берна. М., 2007, էջ 48-49: Նաև՝ **Daniel Farber, Susanna Sherry** A History of the American Constitution. West, 1990: Պետք է նշել, որ դրանից առաջ (1783 թ.) պառլամենտարիզմի գրեթե բոլոր տարբերակներն արտացոլվել էին հայկական ոչ պաշտոնական սահմանադրության մեջ՝ «Որոգայթ» փառաց:

ոգու մասին» տրակտատում, իսկ պառլամենտարիզմի համար սկզբունքային համարվող նախարարների պառլամենտական պատասխանատվության հարցը՝ Բ. Կոնստանի աշխատություններում:

Ջ. Միլլը, պառլամենտարիզմի կայացման դարաշրջանի անգլիացի այլ փիլիսոփաների նման (Բ. Բենտամը նրանից առաջ, իսկ Գ. Սպենսերը նրանից հետո), հիմնավորում էր պառլամենտարիզմը համընդհանուր օգտակարության (ռացիոնալիզմի) դիրքերից: Ներկայացուցչական կառավարման դերն ու նշանակությունը նա տեսնում էր ոչ այնքան ներկայացուցչական ժողովի կողմից պետությունը ղեկավարելու, որքան կառավարության գործունեության նկատմամբ հսկողություն սահմանելու մեջ¹¹:

Լուսավորիչների գաղափարները հետագայում զարգացում ապրեցին Վ. Հեսսենի, Գ.Վ.Ֆ. Հեգելի, Ի. Կանտի և այլոց աշխատանքներում, ու, չնայած հայացքների տարբերությանը, նրանք միակարծիք էին այն հիմնարար հարցերի շուրջ, որ պետության հիմնադիրը ժողովուրդն է, ու գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ըստ Վ. Հեսսենի՝ «... բուրժուական պառլամենտարիզմի ձևավորումն իրական էր բուրժուազիայի տիրապետող դաս դառնալու շնորհիվ, և միայն այս ժամանակներից ի վեր կարելի է խոսել պառլամենտարիզմի՝ որպես հասարակության կառավարման պետական համակարգի մասին, որը բնութագրվում է օրենսդիր ու գործադիր գործառնությունների պարզորոշ բաշխմամբ, պառլամենտի գերակա դերի ճանաչմամբ»¹²:

Հեգելը ևս, իր նախորդների՝ Լոքի, Մոնտեսքյոյի նման, իշխանությունների բաժանումը դիտում է իբրև հանրային ազատության հաստատման միջոց՝ առավել արդյունավետ համարելով ոչ թե իշխանության տարբեր թևերի հակադրումը միմյանց, այլև նրանց ներդաշնակ միասնությունը: Նա անհրաժեշտ էր համարում ֆրանսիացիներից վերցնել գլխավորը՝ ժողովրդի ազատության գաղափարը, մասնակցությունն ընտրություններին և որոշումների ընդունմանը: Գերմանիայում, նրա գնահատմամբ, այն ժամանակ չկար ազատության գործոնը, չկար կառավարման մարմինների պարտականությունների հստակ օրինակարգում, քանզի երկիրը կառավարվում էր առանց սահմանադրության: «Ազատությունը, - եզրափակում է Հեգելը, - գոյություն ունի այնտեղ, որտեղ գերիշխում է օրենքը, և ոչ թե մեկ անձի կամայականությունը»¹³:

Կանտը ևս, պաշտպանելով ժողովրդի ինքնիշխանության գաղափարը, կարծում էր. «Որպեսզի ժողովուրդն իրավունք ունենա դիմադրելու իշխանություններին, պետք է լինի հանրային օրենք, իսկ դա նշանակում է, որ ժողովուրդը հպատակից պետք է վերածվի ինքնիշխանի»¹⁴: «Մարդու իրավունքները, - գրում է Կանտը, - «պետք է ճանաչվեն սրբազան՝ ինչպիսի գոհաբերություններ էլ դա պահանջի իշխանություններից»¹⁵:

¹¹ См. у Милл. Дж. Размышления о представительном правлении. СПб., 1863, էջ 84:

¹² См. у Гессен В.М. Основы конституционного права. Петроград: Юрид. кн. «Право», 1918, էջ 22.

¹³ Гегель, Работы разных лет. М., «Мысль», 1973, т. 2, էջ 31, 37, 281.

¹⁴ Кант И. Основы метафизики нравственности. М., «Мысль», 1999, էջ 698-699.

¹⁵ Նույն տեղում:

Պառլամենտարիզմի ձևավորումը տարբեր երկրներում կախված է եղել կոնկրետ պայմաններից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական զանազան գործոններից, որոնց հետևանքով առաջացավ ժողովրդական վետոն, ինչն ընդլայնում էր զանգվածների՝ պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը¹⁶։ Բացի դրանից, այս փուլը բնութագրվում է Արևմուտքի երկրներում քաղաքական կուսակցությունների ստեղծմամբ ու ընտրական իրավունքի հաստատմամբ, իշխանությունների բաժանման տեսության իրականացմամբ, որում պառլամենտին՝ որպես օրենսդիր ու ներկայացուցչական մարմնի, տրվում է կարևոր ու հանգուցային դերակատարում։

Պառլամենտարիզմի էվոլյուցիան, նրա անցումը մի փուլից մյուսին պայմանավորված են հասարակությունում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային-հոգևոր փոփոխություններով։ Յուրաքանչյուր փուլ, իրականացնելով իր պատմական առաքելությունը, ստեղծում է նախադրյալներ այլ որակական իրավիճակ տեղափոխվելու համար։ Դրանում էական դեր է խաղացել նաև հասարակական միտքը, սակայն պառլամենտարիզմի տեսության ու պրակտիկայի միահյուսումը տեղի է ունեցել XIX-XX դարերի սահմանագծին, որը հետագայում հանգեցրել է պառլամենտարիզմի հասուն ձևերի առաջացմանը¹⁷։

Պառլամենտարիզմի **ժամանակակից կամ հասուն փուլը** բնութագրվում է պառլամենտական կառավարման նոր մոդելների (նմուշօրինակների) որոնմամբ և պետական կառավարման առաջատար, ժողովրդավարական համակարգի հաստատմամբ։ Այս փուլում վերջնականապես ձևավորվում է պառլամենտարիզմի «ենթակառուցվածքը»՝ քաղաքական կուսակցությունները, ընտրական համակարգերը, քաղաքացիների ավելի ու ավելի լայն շրջանակների վրա տարածվող ընտրական իրավունքը, և, որպես դրանց հետևանք, Եվրոպայի քաղաքական քարտեզի վրա եղած պետություններում պառլամենտարիզմն ստանում է սահմանադրական ամրագրում¹⁸։

Պառլամենտի և պառլամենտարիզմի պատմական դասերի, դրանց զարգացման բարդ ու հետաքրքիր դինամիկայի, Պլատոնի, Արիստոտելի, Հեգելի, Կանտի, ապա՝ Ջ.Լոքի, Ժ.Մ.Ռուսսոյի և Շ.Մոնտեսքյոյի տեսությունների հիման վրա շարունակաբար կատարվում են ընդհանրացումներ և եզրակացություններ։

Դրանք գալիս են փաստելու, որ համագգային ներկայացուցչական ինստիտուտ հանդիսացող պառլամենտները բազմադարյա պատմություն ունեն։ Իշխանությունների տարանջատման հանրահայտ տեսությունը, որն այս կամ այն չափով արտահայտված է աշխարհի շատ երկրների սահմանադրություններում, պառլամենտներին օժտել է օրենսդրական իշխանությամբ՝ դրանով իսկ առանձնահատուկ կարգավիճակի մեջ

¹⁶ См. у Ковалевский М.М. От прямого народовластия к представительному и от патриархальной монархии к парламентаризму. Рост государства и его отражение в истории политических учений. М.: Тип. Т-ва И.Д. Сытина, 1906, էջ 22- 82:

¹⁷ См. у Мишин А.А. Конституционное (государственное) право зарубежных стран. М., 1999, էջ 203-204:

¹⁸ См. у Southern European parliaments in democracy / ed. By C. Leston-Bandeira. London; New York: Routledge, 2005, էջ 191:

դնելով նրանց պետական մյուս մարմինների հետ հարաբերություններում: Դա իր հերթին կանխորոշել է Հիմնական օրենքների բովանդակությունը, որոնցում սահմանվում են պառլամենտների կազմակերպման կարգի, կառուցվածքի, իրավասության, պատգամավորների կարգավիճակի և գործունեությանն առնչվող մյուս հիմնահարցերը:

Այսօր պառլամենտները գործում են աշխարհի ավելի քան 200 պետություններում, որոնցից 70-ում գործում է երկպալատ, իսկ մնացածում՝ միապալատ համակարգեր, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը, ինչն ամրապնդվում է տարբեր երկրների պառլամենտների ղեկավարներին արված հարցման արդյունքներով:

Պառլամենտի ծագման ու զարգացման պատմությունը հարթ չի եղել: Թե՛ որպես ուսմունք (դոկտրին), թե՛ որպես ինստիտուտ, անցնելով բազմաթիվ փոփոխությունների միջով, այն մեկ ճգնաժամ չէ, որ ապրել է¹⁹: Իհարկե, իդեալական չէ և թերություններից զերծ չէ նաև դրա ժամանակակից վիճակը նույնիսկ այն երկրներում, որոնք արդարացիորեն իրենց անվանում են պառլամենտարիզմի օրրան:

Ինչպես նշում է սահմանադրագետ Կ.Սոկոլովը՝ «Պառլամենտական կարգերը գոյություն ունեն երկրի վրա, մարդկանց մեջ և մարդկանց համար, այդ թվում՝ մոլորության մեջ գտնվող և սխալվող մարդկանց համար: Պառլամենտի՝ որպես պետական համակարգի քաղաքական բաղադրիչի գնահատման համար կարևոր է, թե ինչ աստիճան է այն նպաստում այդ մոլորություններին և սխալներին և ինչ չափով է վերացնում դրանց գոեցությունը և կանխարգելում առաջացրած վնասը: Ինչպես և պետական կառավարման ցանկացած ձև, պառլամենտն էլ ունի իր յուրօրինակ «սահմանադրական» հիվանդությունները: Սակայն այդ հիվանդությունների հետ պառլամենտական երկրները հաշտվել են և հաշտվելու են, քանի որ պառլամենտի տված քաղաքական բարիքների ընդհանուր գումարը գերազանցում է այն անհարմարությունների գումարը, որոնք նա պատճառում է իր «օրգանական» թերությունների պատճառով»²⁰:

Պառլամենտական համակարգը ենթադրում է, որ ժողովուրդն է պետական իշխանության սկզբնաղբյուրը, իսկ պետական մարմինների, այդ թվում՝ պառլամենտի իշխանությունն արդեն ածանցյալ է ժողովրդի իշխանությունից:

Որպես ասվածի հաստատում՝ պետականագետ Մ.Բիխարին նշում է. «Իշխանությունը պատկանում է ոչ թե պառլամենտին, այլ ժողովրդին, պառլամենտական իշխանությունն այս դեպքում ընդամենը լիազորված իշխանություն է, քանի որ ինքնիշխան է միայն ժողովուրդը, իսկ պառլամենտը լոկ մարմնավորում է այդ ինքնիշխանությունը՝ որևէ փոփոխություն չմտցնելով ինքնիշխանության իրավունքների օբյեկտում»²¹:

¹⁹ Ковлер А.И. Очерки по истории парламентаризма//Парламенты мира: сб, М.Интерпракс,1991.с.121

²⁰ Соколов К.Н.Парламентаризм. Опыт правовой теории парламентского строя.СПб.1912, էջ.180.

²¹ Бихарин М. Парламентаризм// Мир политик.М.1992, էջ .42

Արդարացի պետք է համարել նաև ՌԴ Սահմանադրական դատարանի դատավոր Բ. Էբգենի դիրքորոշումը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ, որը նշում է. «Ժողովուրդը պետության ներկայացուցչական մարմիններին է փոխանցում ոչ թե հենց իշխանությունն ինքը, այլ միայն այդ իշխանության նկատմամբ իրավունքը, այն իրականացնելու իրավունքը, ընդ որում՝ խիստ սահմանափակ ժամկետով: Ուստի, ոտնձգությունը ժողովրդի իշխանության նկատմամբ, ժողովրդի լիիրավ իշխանության և դրա գերակայության նկատմամբ պետք է որակվի որպես իշխանության յուրացում: Ներկայացուցչական համակարգի թաքմացումը, ինչպես դրա կազմակերպական ձևերի, այպես էլ ժողովրդական ներկայացուցիչների անհատական կազմի նորացման տեսակետից, միայն ժողովրդի իրավունքն է, որն իրականացվում է ազատ և պարբերական ընտրությունների միջոցով»²²:

Աշխարհի երկրների քաղաքական համակարգերում, քաղաքական համակարգի (ռեժիմի) ու կառավարման ձևի առանձնահատկություններով պայմանավորված, ժամանակակից պառլամենտարիզմը հանդես է գալիս «գարգացած», «սահմանափակ», «խմտացիոն», «ռացիոնալիզացված», «մինիստերային», «բաժանված», «մոնիստական», «անավարտ», «հարաբերականորեն մաքուր» և այլ տարատեսակներով, որոնք միմյանցից տարբերվում են հանրային իշխանության ընդհանուր ծավալում օրենսդիր մարմնի, պետության գլխի և կառավարության ունեցած իշխանական լիազորությունների (իրավասությունների) տեսակարար կշռով²³: Այսպես՝

Զարգացած պառլամենտարիզմը կարող է գոյություն ունենալ միայն ժողովրդավարական հասարակությունում, որտեղ առկա են պառլամենտարիզմի այնպիսի հիմնարար տարրեր, ինչպիսիք են իշխանությունների բաժանման սկզբունքն ու իրավունքի գերակայությունը, պառլամենտարիզմի ավանդույթները, հասուն քաղաքական հասարակությունը և բազմակուսակցական համակարգը:

Սահմանափակ պառլամենտարիզմը բնութագրական է այնպիսի հասարակությանը, որտեղ թեև հռչակված են ժողովրդավարական հիմնական սկզբունքները, սակայն դրանց լիարժեքության աստիճանը և իրականացումը պատրանքային բնույթի են:

Իմիտացիոն պառլամենտարիզմի պայմաններում տեղի է ունենում իշխանության ու քաղաքականության մենաշնորհում, կառավարումն իրականացվում է կամայական ակտերով, նվազում կամ անկում է ապրում ներկայացուցչական ինստիտուտների ու ընդդիմության դերը, խախտվում է կուսակցությունների ու քաղաքացիական ինստիտուտների ինքնավարությունը և, որպես այդ ամենի հետևանք, առկա է պառլամենտարիզմի իմիտացիա:

Ռացիոնալիզացված պառլամենտարիզմը համատեղում է տարրեր, որոնք բնորոշ են կիսանախագահական կառավարման ձևին և ուղղված են նախագահական իշխանու-

²² Кокошкин Ф.Ф. Лекции по общему государственному праву. М., 1922. էջ .169

²³ St' u Парламенты: Сравнительное исследование структуры и деятельности представительных учреждений 55 стран мира / пер. с англ. М., «Прогресс», 1967, էջ 454:

յան ամրապնդմանը: Պառլամենտարիզմի այս տարատեսակն առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում: Դրա դեպքում ուժեղ նախագահական իշխանությունը համատեղվում է պառլամենտի՝ կառավարության գործունեությունը վերահսկելու հետ: Կառավարության երկակի պատասխանատվությունը նախագահի ու պառլամենտի առջև համարվում է պառլամենտարիզմի այս տարատեսակի բնորոշ գծերից մեկը:

Մինիստերային պառլամենտարիզմը հիմնվում է կառավարությունում համատեղելիության վրա՝ պատգամավորի մանդատի պահպանմամբ: Սա թույլ է տալիս կառավարությունում աշխատանքի ներգրավել ոչ միայն կառավարող կուսակցության (կուսակցությունների) ներկայացուցիչներին, այլև պառլամենտական մեծամասնության առավել ազդեցիկ պատգամավորներին ու դրանով իսկ վերահսկել պառլամենտը՝ ստանալով կուսակցական աջակցություն:

Բաժանված պառլամենտարիզմը բնորոշ է այնպիսի հասարակություններին, ուր հարաբերությունները պառլամենտի ու պետության գլխի միջև հիմնվում են իշխանությունների կոշտ բաժանման՝ նրանց ինքնուրույնության, զսպումների և հակակշիռների համակարգի փոխկապվածության վրա:

Մոնիստական պառլամենտարիզմը թեև հիմնվում է պառլամենտարիզմի նույն սկզբունքների վրա, սակայն այս տարատեսակի պայմաններում պետության գլուխը չունի քաղաքական իշխանություն:

Անավարտ պառլամենտարիզմի տարատեսակի դեպքում գործում է կառավարման ձևավորման պառլամենտական սկզբունքը, սակայն բացակայում է պառլամենտի առջև կառավարության քաղաքական պատասխանատվությունը:

Հարաբերականորեն մաքուր պառլամենտարիզմին բնորոշ են պառլամենտական կառավարումը և մոնիստիկ պառլամենտարիզմը, որոնք հենվում են պառլամենտի գերակայության վրա:

Չնայած պառլամենտարիզմի ժամանակակից տարատեսակների բազմազանությանը՝ պետք է արձանագրել, որ պառլամենտարիզմի մաքուր մոդելներ պետական պրակտիկան չի ճանաչում:

ПАРЛАМЕНТ КАК ПРОТИВОВЕС ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ

МАРТИН МАНУКЯН

*преподаватель кафедры юриспруденции
Ереванского университета “Гладзор”,
член Палаты адвокатов РА, адвокат,
кандидат юридических наук*

Резюме В статье представлены исторические формы (этапы) возникновения, развития и становления парламента, раскрыта взаимозависимость парламента и парламентаризма, правовые основы парламентаризма как формы представительной демократии, выделены характерные черты парламента и парламентаризма, а также типы современного парламентаризма, обусловленные особенностями политической системы (режима) и формы правления. Автор статьи подробно рассматривает, что становление парламентаризма в разных странах зависело от конкретных условий и различных социально-экономических и политических факторов, в результате чего возникло народное вето, расширившее право народных масс на участие в управлении государством. Автор также утверждает, что эволюция парламентаризма, его переход из одной стадии в другую обусловлены политическими, социально-экономическими, культурными и духовными изменениями. Каждый этап, выполняя свою историческую миссию, создает предпосылки для перехода в иную качественную ситуацию. По мнению автора, значительную роль в этом сыграла и общественная мысль.

Ключевые слова: Античность, совет четырехсот, совет пятисот, сенат, парламент, парламентаризм, правительство, классовое представительство, политическая система, государственное устройство, зрелые формы парламентаризма.

PARLIAMENT AS A COUNTERBALANCE TO THE EXECUTIVE POWER

MARTIN MANUKYAN

Lecturer of the Department of Jurisprudence of the Yerevan University "Gladzor", member of the Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate, Candidate of Legal Sciences

Abstract. The article presents the historical forms (stages) of the emergence, development and formation of parliament, reveals the interdependence of parliament and parliamentarism, the legal foundations of parliamentarism as a form of representative democracy, highlights the characteristic features of parliament and parliamentarism, as well as the types of modern parliamentarism, conditioned by the peculiarities of the political system (regime) and form of government. The author of the article examines in detail that the formation of parliamentarism in different countries depended on specific conditions and various socio-economic and political factors, which resulted in the emergence of a popular veto, expanding the right of the masses to participate in government. The author also argues that the evolution of parliamentarism, its transition from one stage to another are conditioned by political, socio-economic, cultural and spiritual changes. Each stage, fulfilling its historical mission, creates the preconditions for the transition to a different qualitative situation. According to the author, social thought also played a significant role in this.

Keywords: Antiquity, Council of Four Hundred, Council of Five Hundred, Senate, Parliament, Parliamentarism, Government, Class representation, Political system, State structure, mature forms of parliamentarism.

Հոդվածը գրախոսվել է 19.09.2025
Ներկայացվել է տպագրության 24.09.2025

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կարեն Մամիկոնյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի

գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների

համակարգման բաժնի պետ, տնտեսագիտական և հաշվապահական

փորձաքննությունների բաժնի փորձագետ

DOI: 10.63925/18294847-2025.op20-06

Համառոտագիր: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առանց փոքր և միջին ձեռնարկատիրության անհնար է շուկայական տնտեսության լիարժեք գործունեությունը և զարգացումը, քանի որ հենց այս ոլորտն է հեշտությամբ հարմարվում անընդհատ փոփոխվող շուկայական պայմաններին, ստեղծում մրցակցային միջավայր և հիմքեր ապահովում քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների զարգացման համար: Այդուհանդերձ, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում առկա անկայուն դրույթները, ինչպես նաև այս ոլորտում հաճախակի իրականացվող իրավական փոփոխությունները որոշակի առումով կարող են հանդես գալ որպես խոչընդոտող գործոններ՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ կազմակերպման և վարման գործընթացում:

Հոդվածում վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում արդիական համարվող բիզնեսի իրավական կարգավորման մի շարք խնդիրներ, որոնք, ըստ էության, գործարարության զարգացմանը խոչընդոտող գործոնների շարքում հանդես գալով, մշտապես պահանջում են լուծումների նոր մոտեցումներ՝ կախված երկրի տնտեսական և հասարակության սոցիալական իրավիճակների փոփոխություններից:

Բանալի բառեր. *փոքր և միջին ձեռնարկատիրություն, բիզնեսի իրավական կարգավորման խնդիրներ, խոչընդոտող գործոններ, իրավական հիմքեր, գործարարություն:*

Ժամանակակից տնտեսական հարաբերությունների պայմաններում կտրուկ տնտեսական փոխակերպումները նոր մարտահրավերներ են առաջադրում ձեռնարկատիրությանը, ինչը ենթադրում է, որ տնտեսվարող սուբյեկտները պետք է շարունակաբար կատարելագործեն իրենց գործունեության կազմակերպման ուղիները, բացահայտեն ու օգտագործեն ոլորտի ներուժը լիարժեք:

Հանրահայտ է, որ երկրի տնտեսական անկայունությունը, աղքատության բարձր շեմը, ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման դժվարությունները, իրացման շուկաների փոքր լինելը և գերհագեց-

վածությունը, ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը, ինչպես նաև բարձր հարկային բեռը ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և վարման համար ծանր բալաստ են համարվում, որին անուղղակի կերպով ավելացվում է նաև բիզնեսի իրավական կարգավորման խնդիրները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ նաև՝ ՓՄՁ) զարգացման առումով նախ անհրաժեշտ է ընդգծել, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն արտադրական գործընթացներում նախապայման է համարվում ՓՄՁ զարգացման համար: Տեղեկատվական տեխնոլոգիաները գնալով ավելի են ներգրավվում տարբեր բիզնես գործընթացներում՝ նոր ծառայությունների և ապրանքների ստեղծումից մինչև արդյունքների վերլուծություն և ռազմավարության օպտիմալացում: Բիզնեսի և տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրման առավելությունները հսկայական են, այդ թվում՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ավտոմատացման, նախագնման և զարգացման, ծախսերի կրճատման, հաճախորդների սպասարկման, հեղինակության բարելավման և այլ ուղղություններով¹:

Այս առումով ձեռնարկատիրության ոլորտի օժանդակման, մրցունակության բարձրացման և զարգացման համար անհրաժեշտ է կարևորել մի քանի ռազմավարական ուղղություններ, որոնցում կան քննարկման արժանի իրավական կարգավորման հետևյալ խնդիրները.

Հարկային օրենսդրության կայունության ապահովում: Տնտեսվարող սուբյեկտների համար, բացի բարենպաստ օրենսդրական դաշտի առկայությունից, ոչ պակաս էական նշանակություն ունի նաև օրենսդրական կայունությունը: Հարկային օրենսգրքի հաճախակի փոփոխություններով պայմանավորված՝ տնտեսվարող սուբյեկտներն էական դժվարություններով են հարմարվում նոր իրավական կարգավորումներին: Որոշ դեպքերում դրանց կիրառումը բավական երկար ժամանակ տնտեսվարողի կողմից ընթանում է խախտումներով, ինչը հանգեցնում է անցանկալի հետևանքների: Հաճախակի փոփոխությունները տնտեսվարողներին հնարավորություն չեն տալիս կազմել միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր, ինչպես նաև ճիշտ կառավարել ռիսկերը և կանխատեսել եկամուտները:

Տարբերություններ կան նաև հարկային օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջների միջև, որոնք գործնականում անհամապատասխանություններ են առաջացնում հաշվապահական հաշվառման վարման ժամանակ:

Այսպես, ընդհանուր առմամբ ընդունված է համարել, որ հաշվապահական հաշվառման նպատակը ֆինանսական հաշվետվություններից օգտվողներին օրյեկտիվ տեղեկատվություն տրամադրելն է կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի և դրա փոփոխությունների մասին, իսկ

¹ Տե՛ս Աղբյուրը՝ URL:<https://ibs.ru/media/rol-informatsionnykh-tekhnologiy-dlya-biznesa-v-2023-godu/> (վերջին այցելություն 02.10.2025):

հարկային հաշվառման նպատակը ՀՀ հարկային օրենսգրքին համապատասխան հարկերի հաշվարկումն է, ինչը ենթադրում է ձեռնարկատիրական գործունեությունից հարկման ենթակա եկամուտները հարկային հաշվարկներում ճիշտ արտացոլելը և հարկի համապատասխան դրույքաչափը կիրառելը: Հարկ է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքում շահութահարկի հարկային բազայի որոշման նպատակով նախատեսված է հաշվապահական հաշվառման մի քանի էական առանձնահատկություններ. խոսքը նույն օբյեկտի վերաբերյալ հարկային և ֆինանսական տարբերակված հաշվառման ուղղություններով ստացվող տարբեր ցուցանիշների մասին է, դրանք են.

հարկային և հաշվապահական հաշվառման տեսանկյունից շահույթի և վնասի տարբեր ցուցանիշները. հայեցակարգային առումով ֆինանսական և հարկային հաշվառումներում ակտիվների և պարտավորությունների չափման հասկացություններն ու սահմանումները տարբեր են, ինչն ակնհայտորեն հանգեցնում է ըստ դրանց հաշվարկված եկամուտների և ծախսերի, և, որպես հետևանք՝ հարկային և ֆինանսական տեսություններից բխող շահույթի և վնասի տարբեր ցուցանիշների,

հիմնական միջոցների մաշվածության տարբեր ցուցանիշները, մասնավորապես՝

- 1) ակտիվների ամորտիզացիոն ժամանակաշրջանները,
- 2) մաշվածության հաշվառումը,
- 3) մաշվածության տարբեր եղանակները,
- 4) տրանսպորտային միջոցի կամ հաստոցի մաշվածությունը և այլն:

ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ հարկ վճարողի հարկային բազան որոշելիս որոշակի տեսակի ծախսերի գծով համախառն եկամուտից չեն նվազեցվում սահմանված գումարները գերազանցող ծախսերը: Մինչդեռ ֆինանսական հաշվառման մեջ այս նույն ծախսերը կարող են ամբողջությամբ նվազեցվել եկամուտից: Իրականում հարկային հաշվառման մեջ կարող են չնախատեսվել այնպիսի նվազեցումներ (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ), որոնք այդպիսիք կհամարվեն ֆինանսական հաշվառման տեսանկյունից և այլն²:

Ներքին և արտաքին շուկաների հասանելիության բարձրացում: Հարկ է անդրադառնալ նաև այն իրողությանը, որ փոքր ներքին շուկայի պայմաններում ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքը և ենթակառուցվածքներում առկա թերություններն ու բացթողումները խոչընդոտ են համարվում ապրանքների արտահանումը խթանելու գործում: Բացի այդ, որոշակի հումքի ներկրման համար անհրաժեշտ է նվազեցնել մաքսային վճարների չափը, քանի որ երբեմն ավելի մատչելի է ներմուծել պատրաստի արտադրանքը, քան Հայաստանում այդ արտադրանքի արտադրման համար անհրաժեշտ հումքը: Արդյունքում՝ տեղական արտադրանքը կարող է կորցնել իր մրցունակությունը:

Պետք է արձանագրել, որ, միևնույն ժամանակ, արտաքին շուկաներում հայաս-

² St' u Мамиконян К.О., Вопросы методологии финансово-экономической экспертизы: Методическое пособие / К.О. Мамиконян. - Ер.: авт. изд., 2022.- 115 с., էջ՝ 57-59:

տանյան տնտեսվարողների ապրանքների մրցունակությունը ցածր է՝ որակի համապատասխան ստանդարտները չապահովելու պատճառով: Այս առումով իրավակարգավորումները պետք է հստակեցվեն, ինչպես նաև խստացվեն՝ առաջին պլան մղելով որակի միջազգային ստանդարտացմանը մասնակցության և այդ ստանդարտների տեղայնացման գործընթացները:

Երկակի նշանակության ապրանքների խնդիրը նույնպես արդիական է: Բազմաթիվ դեպքերում մաքսային ծառայողների կողմից կասկած է հարուցվում, թե ներմուծվող ապրանքը կարո՞ղ է ունենալ երկակի օգտագործման կամ կիրառման նպատակ (օրինակ՝ ենթադրվում է, որ ներմուծված յուղանյութերը, սարքավորումները կամ դրանց պահեստամասերը կարող են օգտագործվել ռազմական նպատակներով): Այնուհետև ապրանքների երկակի նշանակությունը գնահատելու համար սկսվում է գնման համապատասխան գործընթաց, որը, սակայն, բիզնեսի կազմակերպման տեսանկյունից, ըստ էության, ժամանակի կորուստ է համարվում, ինչը և խոսում է այն մասին, որ ապրանքների երկակի օգտագործման թույլտվության կամ մերժման համար ընթացակարգերը և չափանիշները պետք է հնարավորինս հստակեցվեն կամ լրացվեն նորերով:

Ֆինանսների հասանելիության բարելավում: Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զգալի մասն իր շահութաբերության ապահովումը որոշակիորեն տեսնում է նաև վարկավորման ցածր տոկոսադրույքների պայմաններում: Վերջինս նշանակում է, որ եթե պետության տնտեսական ռազմավարությունում փոքր և միջին ձեռնարկատիրությունը դասակարգվել է որպես երկրի տնտեսական առաջընթացի և հասարակության բարեկեցության ապահովման շարժիչ ուժ, ապա պետության կողմից պետք է մեխանիզմներ մշակվեն նաև վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ³:

Տնտեսության զարգացման առաջին նախապայմաններից է մարդկանց, բիզնեսի և պետության միջև փոխվստահություն ձևավորելը: Փոխվստահությունն իրենից ենթադրում է ներդրողների և պետության միջև արդար ու բաց բանակցություն, որը պետք է հիմնվի օրենսդրական կայունության և վերջինովս էլ պայմանավորված՝ տնտեսական կանխատեսելիության վրա: Այս ամբողջով հանդերձ՝ պետության զարգացման գրավականը պետք է փնտրել հատկապես փոխվստահության մեջ:

Հայտնի է, որ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում կարևորագույն խնդիրներից են ֆինանսավորման և վարկավորման հարցերը, որոնք անխուսափելիորեն պահանջում են նաև պատշաճ իրավական կարգավորման գործընթացի իրականացում: Վարկատուի և վարկառուի միջև անհամաձայնությունը, որն առաջանում է վարկային պայմանագրի կատարման ընթացքում տեղի ունեցած վարկի և տոկոսների մարմանն ուղղվող գումարների չվճարումների (սահմանված ժամկետում

³ Տե՛ս Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Գարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019.- 138 էջ, էջ 10-րդ:

չվճարվածի) պարագայում վարկատուի կողմից պայմանագրով սահմանված տուժանքի (տուգանքի, տույժի) հաշվարկման դեպքերում, կախված է վարկատուի կողմից մինչև պայմանագրի գործողության վերջնաժամկետը ժամանակացույցով նախատեսված վճարման ենթակա գումարների նկատմամբ տուժանքի հաշվարկման, ինչպես նաև՝ վարկի մարման վերջնաժամկետից հետո ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա վարկի մայր գումարի նկատմամբ տոկոսների հաշվարկման պայմանագրով կամ օրենսդրությամբ սահմանված սկզբունքների կիրառությունից⁴։ Մակայն կարող է պարզվել, որ վարկի գումարը, նշված պայմանների համաձայն, 1 տարվա ընթացքում սառեցման (վարկատուի կողմից չվճարման) դեպքում տուժանքների կիրառումն իրականում վարկատուին կբերի 2.9 - 3.8 անգամ (նվազագույնն ընտրելով միայն տույժերի գումարը) ավելի շատ եկամուտ, քան այդ նույն վարկի գումարը նույն ժամանակահատվածով առավելագույն տոկոսադրույքով տրամադրման պարագայում։ Նշվածը նույնպես մտածելու տեղիք է տալիս այն առումով, որ փոխադարձ վստահություն հաստատելու համար պետք է ոչ թե խստագույնս պատժել ֆինանսավորման կարիք ունեցող վարկառու ընկերությանը, այլ ընդառաջել և օգնել, որպեսզի նա ֆինանսապես կայունանա։

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով նախատեսված դրույթի՝ սահմանափակումները սահմանված են պայմանագրով որոշված տուժանքի չափի առնչությամբ, մասնավորապես՝ 1) պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած ԲՏՀԴ-ի քառապատիկը, 2) պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը⁵։ Ի դեպ, վերոնշյալ տուժանքի չափի վերաբերյալ սահմանափակումների նույնաբովանդակ դրույթներ բացակայում են և՛ Ռուսաստանի Դաշնության, և՛ Բելառուսի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերում, որը, ինչ խոսք, խորհելու տեղիք է տալիս։

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդգծել նաև, որ, ի տարբերություն երկրորդ դրույթի, որտեղ պարզորոշ կերպով համեմատությունը կատարվում է դրամական գումարի հետ, ներկայացված առաջին դրույթում «տուժանքի տարեկան առավելագույն չափի» որոշման մեխանիզմն այդքան էլ ընթերցելի չէ։

Օրենսդրության կարգավորման շրջանակներում սեփականության իրավունքի ներդրման և իրացման նորմատիվների բարելավում։ Փոքր և միջին բիզնեսի գործունեության իրավական հիմքերը հիմնականում սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հարկային օրենսգրքով, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքներով։ Այս խնդրի ներքո

⁴ Տե՛ս Կարեն Մամիկոնյան, Վարկային պայմանագրի խախտման հետևանքները և հարցերը ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում / Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2022 4-6 (274-276)։

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդված։

թերևս անհրաժեշտ է քննարկել հատկապես «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) երկու բաց:

Առաջին՝ Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն. «2. Եթե, ընկերության կանոնադրությանը համապատասխան, մասնակցի բաժնեմասի (դրա մասի) օտարումը երրորդ անձանց հնարավոր չէ, իսկ ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ապա ընկերությունը պարտավոր է մասնակցի պահանջով ձեռք բերել մասնակցի բաժնեմասը»: «3. Ընկերությունը պարտավոր է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով մասնակցին վճարել բաժնեմասի (դրա մասի) արժեքը»⁶: Համաձայն Օրենքի 23-րդ հոդվածի՝ բաժնեմասի արժեքը որոշվում է՝ «*ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա*»⁷: Հիմնական խնդիրն այն է, որ ընկերության բաժնեմասի գնման դեպքում Օրենքը հստակ չի սահմանում այն մեխանիզմները, որոնց հիման պետք է որոշվի ընկերության բաժնեմասի շուկայական արժեքը: Ստացվում է, որ մասնակցի բաժնեմասի (դրա մասի) օտարումը երրորդ անձանց եթե հնարավոր չէ, իսկ ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ապա պետք է փաստել, որ այս դեպքում օրենքի սրամաքանությունը հստակեցված չէ, գուցե, ենթադրաբար, ընկերությունը պարտավոր է ձեռք բերել այդ բաժնեմասը՝ մասնակցին վճարելով կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվություններում արտացոլված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության համապատասխան չափին համամասնորեն: Տնտեսագիտության տեսակետից վերը նշվածն անտրամաբանական է, քանի որ այս մեխանիզմի գործողությունը որևէ կերպ չի առնչվում ընկերության սեփական կապիտալի (զուտ ակտիվների) արժեքի հետ⁸:

Երկրորդ՝ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն. «Ընդհանուր ժողովը, կարող է որոշում ընդունել ավելացնելու ընկերության կանոնադրական կապիտալը՝ ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով: Այդ որոշմամբ պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքը, ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացնում է նրա բաժնեմասի անվանական արժեքը: Նշված հարաբերակցությունը չի կարող մեկից և ընկերության զուտ ակտիվների ու կանոնադրական կապիտալի հարաբերությունից մեծ լինել»⁹:

Պետք է արձանագրել, որ Օրենքի վերոնշյալ պահանջներն ու սկզբունքներն ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման գործընթացի մեթոդաբանության կիրառման առումով դժվարություններ են առաջ բերում,

⁶ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված:

⁷ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված:

⁸ Տե՛ս Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019. էջ 138, էջեր 86-87:

⁹ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, 33-րդ հոդված:

մասնավորապես՝ կապված դրանց մաթեմատիկորեն ձևակերպման և բանաձևային տեսքով ներկայացման հետ: Բերված դրույթում միանշանակորեն չի սահմանվում հետևյալ կարևոր ձևակերպումը. «...ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացնում է նրա բաժնեմասի անվանական արժեքը»:

Այստեղ հարկ է մեջ բերել Ռուսաստանի Դաշնության համանուն (թարգմանաբար) Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սկզբունքայնորեն նույնաբովանդակ համարվող դրույթը, որում նշված միտքը համապատասխան կերպով է ձևակերպվում. «..., а также установлено единое для всех участников общества соотношение между стоимостью дополнительного вклада участника общества и суммой, на которую увеличивается номинальная стоимость его доли»¹⁰:

Այսինքն՝ հայերենում ճիշտ է ձևակերպել հետևյալ կերպ. «...ինչպես նաև սահմանվի մասնակցի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելանում է նրա բաժնեմասի անվանական արժեքը»:

Փաստորեն, հաշվի առնելով վերոգրյալը՝ լրացուցիչ ավանդների ներդրմամբ կանոնադրական կապիտալի ավելացման գործընթացում ենթադրվում է, որ մասնակցի բաժնեմասի չափը (ԲԶ), որը նա կունենա ընկերության կանոնադրական կապիտալում, կկազմի.

$$ԲԶ(\%) = \frac{(ԲԱԱ + ԼԱ)}{(ԼԱԸԱ + ԿԿ)} \times 100 \quad (1)$$

որտեղ՝

ԲԱԱ-ն մասնակցի բաժնեմասի անվանական արժեքն է,

ԼԱ-ն մասնակցի կողմից կատարված լրացուցիչ ավանդի արժեքն է՝ ԲԱԱ×Գ, որտեղ՝

Գ-ն մասնակցի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական, հարաբերակցությունն է, որով ավելանում է նրա բաժնեմասի անվանական արժեքը՝ ԼԱԸԱ/ԿԿ (սահմանվում է ընկերության մասնակիցների կողմից),

ԼԱԸԱ-ն լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքն է,

ԿԿ-ն՝ ընկերության կանոնադրական կապիտալը:

Ինչ վերաբերում է ընկերության կանոնադրական կապիտալում երրորդ անձի ներգրավմանը, ապա ընկերության բոլոր մասնակիցների համար բաժնեմասնակցություններն այս դեպքում կհաշվարկվեն հետևյալ կերպ.

$$ԲԶ(\%) = \frac{(ԲԱԱ)}{(ԼԱ + ԿԿ)} \times 100 \quad (2)$$

¹⁰ Ст'я Федеральный закон “Об обществах с ограниченной ответственностью” (с изм. и доп., вступ. в силу с 01.09.2024).

որտեղ՝

ՆԱ-ն երրորդ անձի կողմից ներդրված ավանդն է:

Հարկ է նշել նաև, որ Օրենքում սահմանված՝ վերը նշված դրույթները կոչված են ապահովելու ներդրում չկատարող մասնակիցների իրավունքների պաշտպանությունը:

Բիզնեսի ոլորտի զարգացմանն աջակցող տարածաշրջանային կառույցների ստեղծում: Բարենպաստ միջավայր ստեղծելու համար առանձնահատուկ նշանակություն ունի տարածաշրջանային աջակցության ծրագրի մշակումը, որը պետք է գործարկվի համապատասխան նոր իրավական նորմերի հիման վրա, ինչպես նաև՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, որի իրականացումը որոշակի նպատակներ պետք է հետապնդի, մասնավորապես՝ այն պետք է ուղղված լինի.

- փոքր ձեռնարկատիրության վերաբերյալ դրական հասարակական կարծիքի ձևավորմանը,

- տարածաշրջանի տնտեսության առաջնահերթ ոլորտներում ինովացիոն գործընթացների ընդլայնման շահերի կենտրոնացմանը,

- տարածաշրջանում սեփականատերերի շերտավորմանը,

- տարածաշրջանի շուկաներ ապրանքներով և ծառայություններով ապահովմանը¹¹:

Վերոնշյալի համատեքստում հարկ է պնդել, որ պետական մարմինների հիմնական խնդիրը ոչ միայն փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական աջակցության ցուցաբերումն է, այլ նաև ձեռնարկատիրական գործունեության զարգացման որակապես նոր հարթակների կազմակերպումը, ինչը պետք է հիմնված լինի համագործակցության նոր սկզբունքների և մեթոդների վրա՝ այդպիսով ստեղծելով բիզնեսի զարգացման պայմաններ և խթաններ¹²: Ի դեպ, այս ուղղությամբ իրավական կարգավորման խնդիրները լայն իմաստով են արտահայտվում՝ որպես տեղում չվերահսկվող առևտրային գործառնություններ:

Ձեռնարկատիրոջ «ազատություն»: Ընդունված է համարել, որ ձեռնարկատիրության զարգացմանը նպաստող ամենաարդյունավետ լծակներից մեկը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողի «ազատականության» ապահովումն է: Այսինքն՝ նկատի ունենալով, որ տնտեսվարողի սեփականության իրավունքի պաշտպանությանը, փոխանցմանը, այդ իրավունքի արդյունավետ իրացմանը և ազատ ու արդյունավետ գործող շուկայի կայացմանն առնչվող խնդիրները պետք է արագ և օբյեկտիվ կերպով իրենց լուծումները գտնեն, ինչն էլ, իհարկե, հիմնականում կախված է պետական աջակցության համակարգերից: Այս տեսանկյունից, պետք է ընդլայնվեն ձեռնարկատիրությանը ցուցաբերվող ֆինանսական, իրավական և տեխնոլոգիական աջակ-

¹¹ St' u Романенко Е.В., Малое предпринимательство в омской области / Российское предпринимательство, 2008, № 11 (1).

¹² Актуальные вопросы развития местного самоуправления в России и за рубежом. Сборник статей / Под ред. А.В. Мадьяровой и др. – М., 2009. էջ 380

ցության ծավալները, նաև անընդհատ վերաներմուծվեն դրանց տրամադրման գործիքակազմերն ու ընթացակարգերը¹³:

Կրկին հարկ է անդրադառնալ այն գաղափարին, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում քաղաքակիրթ պայմանների և գործարար միջավայրի ձևավորման գործընթացում ի վերջո ծանրակշիռ նշանակություն պետք է ունենա պետության կարգավորիչ դերը և դրա ամրապնդումը: Կարևոր է նաև ընդգծել, որ թեև պետությունը պետք է ապահովի տնտեսական և քաղաքական ազատության պաշտպանությունը, միևնույն ժամանակ ձեռնարկատիրական գործունեությունը պետք է մնա «անձեռնմխելի», քանի որ վերջինս քաղաքացիների ազատ գործունեությունն է¹⁴:

¹³ Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019. էջ 138, էջ 4:

¹⁴ Мамиконян К.О., Пути совершенствования методологии финансово-экономической экспертизы: Методическое пособие. / Publisher: LAP LAMBERT Academic Publishing / 2019 International Book Market Service Ltd., p. 88, էջ 73:

ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ СРЕДЫ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

КАРЕН МАМИКОНЯН

*Кандидат экономических наук, доцент,
начальник отдела координации научных исследований и технического
апробирования, эксперт отдела Экономических и бухгалтерских экспертиз
Национального бюро экспертиз Республики Армения.*

В настоящее время в Республике Армения невозможно полноценное функционирование и развитие рыночной экономики без малого и среднего предпринимательства, поскольку именно этот сектор наиболее гибко адаптируется к постоянно изменяющимся рыночным условиям, способствует формированию конкурентной среды, а также обеспечивает основы для развития цивилизованных рыночных отношений. Тем не менее, нестабильные положения, закреплённые в нормативно-правовой базе, регулирующей сферу малого и среднего предпринимательства, а также частые законодательные изменения в данной области, в определённой мере могут выступать в качестве сдерживающих факторов для эффективной организации и устойчивого ведения предпринимательской деятельности.

В статье проанализированы актуальные проблемы правового регулирования бизнеса в Республике Армения, которые, являясь сдерживающими факторами для развития предпринимательства, постоянно требуют новых подходов к их решению в контексте изменений в экономической ситуации страны и социального положения общества. В результате анализа была также подчеркнута значимость роли различных регулирующих рычагов государства в процессе формирования цивилизованных условий и деловой среды на текущем этапе развития экономики Республики Армения. В этом контексте также отмечено, что, несмотря на необходимость обеспечения государством защиты экономической и политической свободы, предпринимательская деятельность должна оставаться «неприкосновенной», поскольку она представляет собой проявление свободной деятельности граждан.

Ключевые слова: *малое и среднее предпринимательство, проблемы правового регулирования бизнеса, препятствующие факторы, правовые основы, бизнес.*

PROBLEMS REGULATING THE LEGISLATIVE ENVIRONMENT OF SMALL AND MEDIUM-SIZED BUSINESSES IN THE REPUBLIC OF ARMENIA

KAREN MAMIKONYAN

Ph.D in Economics, Associate Professor,

Head of the Scientific Research and Technical Testing Coordination

*Department, Expert of the Department of Economic and Accounting Expertise
of National Bureau of Expertises of the Republic of Armenia.*

Summary: At present, the effective functioning and development of a market economy in the Republic of Armenia is impossible without small and medium-sized enterprises (SMEs), as this sector is the most flexible in adapting to constantly changing market conditions, contributes to the formation of a competitive environment, and also provides the basis for the development of civilized market relations. Nevertheless, the unstable provisions embedded in the regulatory framework governing the small and medium-sized enterprise (SME) sector, along with the frequent legislative changes in this domain, may to a certain extent act as constraining factors for the effective organization and sustainable operation of entrepreneurial activity.

This article analyzed a number of current issues related to the legal regulation of business in the Republic of Armenia, which, acting as impediments to the development of entrepreneurship, continuously require new approaches to their resolution in light of the changing economic and social conditions of the country. As a result of the analysis, the role of various regulatory instruments of the state in shaping civilized conditions and the business environment during the current stage of economic development in the Republic of Armenia has also been emphasized. In this context, it has also been highlighted that, although the state must ensure the protection of economic and political freedoms, entrepreneurial activity should remain “inviolable,” as it represents the free initiative of citizens.

Keywords: small and medium-sized enterprises, problems of legal regulation of business, hindering factors, legal foundations, business.

Հոդվածը գրախոսվել է 14.10.2025
Ներկայացվել է տպագրության 21.10.2025

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մնացականյան Արտակ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական գործընթացի
կազմակերպման վերահսկման և շարունակական կրթության
ապահովման բաժնի պետ, իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

Սահակյան Հասմիկ

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տեսաձայնագրային,
ֆոտոտեխնիկական և դիմանկարային փորձաքննությունների բաժնի փորձագետ
DOI:10.63925/18294847-2025.op20-07*

Համառոտագիր: Տեսանկարահանող սարքերի նշանակությունն անհնար է գերազնահատել հանցագործությունների կանխման և բացահայտման գործընթացում: Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումներով արդեն իսկ նախատեսված է, որ տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում կարող են սահմանված կարգով լինել ապացույցներ:

Հոդվածում անդրադարձ է կատարվում տեսաձայնագրությունների՝ որպես ապացույց լինելու իրավական կարգավորումներին և դրանց փորձաքննության առանձնահատկություններին:

Բանալի բառեր. Տեսախցիկ, տեսագրություն, տեսաձայնագրություն, ձայնագրություն, վարույթ, ապացույց, հանցավորության կանխում, փորձաքննություն:

Տեսանկարահանող սարքերի նշանակությունը հանցավորության կանխման գործում: Հանցավորության կանխարգելումը կարելի է բնորոշել որպես պետական մարմինների, հաստատությունների, հասարակական միավորումների, ուսումնական և աշխատանքային կոլեկտիվների, առանձին անհատների կողմից իրականացվող միջոցների ամբողջություն՝ ուղղված շեղվող վարքի բոլոր տեսակների ծագումն ու տարածումը պայմանավորող գործոնների հայտնաբերմանը, վերացմանը և չեզոքացմանը, ինչպես նաև այնպիսի կոնկրետ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, որոնք ուղղված են հանցագործությունների կատարմանը խոչընդոտելուն¹:

¹ Տե՛ս Գ. Իսրայելյան՝ «Քրեաբանություն. Ընդհանուր դրույթներ» ուսումնական ձեռնարկ, «Աստղիկ գրատուն», Երևան, 2020թ, էջ 107:

Ներկայումս տեսահսկումը հանցավորության դեմ պայքարի ամենաարդյունավետ գործիքներից մեկն է: Հանցավորության կանխարգելման վերը նշված սուբյեկտներից գրեթե բոլորին հնարավորություն է տրված իրականացնել տեսանկարահանում և լուսանկարահանում: Տեսահսկումը դարձել է ժամանակակից կյանքի անբաժանելի մասը, և դրա ազդեցությունը հանցագործությունների կանխարգելման գործում անհերքելի է: Տեսախցիկները տեղադրվում են ամենատարբեր վայրերում՝ սկսած բնակելի շենքերից և խանութներից, մինչև փողոցներ և հասարակական վայրեր: Դրանց հիմնական նպատակն է ապահովել անվտանգությունը և կանխել հանցագործությունը:

Տեսախցիկների կիրառության շրջանակը բավականին լայն է, ինչը թույլ է տալիս ձանաչել մարդկանց դեմքերը, ուրվագիծը կամ քայլվածքը, մեքենաների տեսակը և մակնիշը, համարանիշները, տրանսպորտային միջոցների արագությունը:

2024 թվականի սեպտեմբերի 5-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված արագաչափ սարքերի քանակը կազմում է 252, իսկ Երևան քաղաքի խաչմերուկներում գործող տեսադիտարկման սարքերի քանակը՝ 153²: ՀՀ ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության համար սահմանված է տեսախցիկի պարտադիր կրման պարտավորություն, մասնավորապես՝ պարեկային ծառայողի տեխնիկական հագեցվածության ու սպառազինության մեջ ներառվում է համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկ: Ծառայություն իրականացնող պարեկային ավտոմոբիլում տեղադրված տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը, երթևեկության ուղղությունը ցույց տվող այլ սարքավորումը և պարեկային ծառայության իրականացման հսկողական տեսախցիկը միացվում են ծառայության դուրս գալու պահին և չեն անջատվում (հսկողական տեսախցիկը՝ բացառությամբ ընդմիջման ժամանակի) մինչև ծառայության ավարտը: Ծառայության ընթացքում տեսաձայնագրումը, տեսանկարահանումը և լուսանկարահանումն իրականացվում են միայն ծառայողական (ոչ անձնական) տեխնիկական միջոցներով³:

Ի տարբերություն մարդկանց՝ ավտոմատացված տեսահսկման համակարգերը կարող են միաժամանակ վերահսկել մի քանի առարկաներ՝ առանց հոգնելու կամ շեղվելու: Սա նրանց դարձնում է կատարյալ գործիք՝ լայնածավալ հսկողության համար:

Բացի պետական մարմիններից՝ կառավարությունը նաև քաղաքացիներին հնարավորություն է տվել մասնակցելու իրավախախտումների արձանագրման և

²Տե՛ս <https://www.police.am/%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D5%B2-%D5%BD%D5%A1%D6%80%D6%84%D5%A5%D6%80-%D6%87-%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B9%D5%A1%D6%83%D5%A5%D6%80.html> /վերջին մուտք՝ 04.03.2025թ/:

³ Տե՛ս ՀՀ ոստիկանության պետի 23.09.2020 թվականի «Ոստիկանության պարեկային ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին» թիվ 36-Լ, հրամանի 10-րդ, 26-րդ և 28-րդ կետերը:

պետական մարմիններին փոխանցելու գործընթացին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 11.06.2020 թվականի թիվ 970-Ն որոշմամբ սահմանվել է պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգի տեխնիկական բնութագիրը և բջջային հավելվածից օգտվելու կարգը, որով հնարավորություն է տրվում օգտատերերին բջջային հավելվածի միջոցով ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ արձանագրել և դրանք ուղարկել խախտումների արձանագրման կենտրոն:

Տեսանկարահանող սարքերի նշանակությունը հանցավորության բացահայտման գործում: Հանցավորության կանխարգելումից բացի՝ հետզհետե ավելի արդիական են դառնում տարբեր իրավախախտումների հայտնաբերման համար տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքավորումների միջոցով արձանագրված փաստերը որպես ապացույց կիրառելու հնարավորությունները: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն է տալիս ամենատարբեր պաշտոնատար անձանց և քաղաքացիներին կատարել տեսաձայնագրություններ, որոնք կարող են օգտագործվել որպես ապացույցներ, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով՝ արտավարության փաստաթղթերը սահմանվում են որպես ապացույցի տեսակ, իսկ 96-րդ հոդվածով սահմանվում է, որ արտավարության փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս: Քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքով դատարանի թույլտվությամբ ստացված **տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները** և այլ օբյեկտիվ փաստաթղթերը կարող են ճանաչվել արտավարության փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով: Եթե արտավարության փաստաթուղթը պարունակում է սույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ, ապա այն ճանաչվում է իրեղեն ապացույց⁴:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանվում է, որ ... իրավախախտումների հայտնաբերման համար որպես ապացույց կարող են կիրառվել նաև **տեսանկարահանող կամ լուսանկարահանող** սարքավորումների միջոցով արձանագրված փաստերը⁵, իսկ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող

⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ, 94-րդ և 96-րդ հոդվածները:

⁵ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 11.1-րդ ենթակետը:

վարչական վարույթի առանձնահատկությունների մասին ՀՀ օրենքով սահմանվում է, որ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները⁶:

Հարկային մարմինը հսկողության ընթացքում կարող է իրականացնել տեսաձայնագրում: Թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք կարող են օգտագործել ծառայողական տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ (այսուհետ՝ տեխնիկական միջոցներ) հարկային հսկողության տվյալ լիազորությունների իրականացմամբ սահմանափակվող ժամկետում: Տեխնիկական միջոցներով ամրագրված **տեսաձայնագրությունը** խախտումը հիմնավորող ապացույց է վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ: Եթե տեխնիկական միջոցներով արձանագրվել է խախտում, ապա տեսաձայնագրությունները հարկային մարմնի տեսաձայնագրությունների պահոցում պահվում են մինչև կայացված վարչական ակտն անբողոքարկելի դառնալը⁷:

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ **լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները** սահմանվում են որպես ապացույցի տեսակ, մասնավորապես նշվում է, որ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները, տեսագրությունները և դրանց էլեկտրոնային կրիչները հետազոտվում են համապատասխան տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ դիտման միջոցով: Լուսանկարները (լուսաժապավեններ), ձայնագրությունները, տեսագրությունները և դրանց էլեկտրոնային կրիչները թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս դրանք ներկայացնող անձը պարտավոր է նշել՝ ե՞րբ, որտե՞ղ, ու՞մ կողմից, ինչպե՞ս և ի՞նչ պայմաններում են արվել այդ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները: Այդ փաստերը չբացահայտելու կամ դրանց վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելու դեպքում լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները չեն հետազոտվում և հանվում են ապացույցների կազմից: Եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը, կամ տեսագրումն իրականացվել է առանց այդ անձի համաձայնության կամ իմացության, ապա ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը դա չի արգելում⁸:

⁶ Տե՛ս տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

⁷ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ը» ենթակետը, 352.1-ին հոդվածը:

⁸ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ և 83-րդ հոդվածները:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հանդիսանալ ապացույցներ քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում:


Տեսանկարահանող սարքերի նշանակությունն անհնար է գերազնահատել հանցագործությունների բացահայտման գործընթացում, սակայն մինչև ապացույց դառնալը նշված նյութերը, ըստ անհրաժեշտության, կարող են ենթարկվել որոշակի ուսումնասիրության, մասնավորապես՝ դատատեսաձայնագրային փորձաքննության:

Դատատեսաձայնագրային փորձաքննությունը դատախնժեներատեխնիկական փորձաքննության բաժիններից մեկն է, որը հետազոտում է տեսաձայնագրությունները, դրանց պայմանները, միջոցները, ինչպես նաև նյութերն ու դրանց հետքերը՝ հանցագործությունների քննության, բացահայտման և կանխարգելման նպատակով⁹:

Ինչպես արդեն նշել ենք, այսօր դժվար է պատկերացնել մի հասարակական վայր, որը չտեսահսկվի, սակայն տեսանկարահանող սարքավորումների առկայությունը երբեմն «ստիպում» է պոտենցիալ հանցագործներին քողարկվել: Աշխատանքային պրակտիկայում հաճախ հանդիպում ենք տեսագրությունների, որտեղ օրինախախտ անձինք կրում են այնպիսի հագուստ (գլխարկ, դիմակ և այլն), որը հետազայում բարդացնում է նույնականացման գործընթացը: Լինում են նաև դեպքեր, երբ հանցագործություն կատարած անձինք ակնհայտ փոխում են իրենց ձայնի տոնայնությունը, խոսելաճը՝ հետազայում ձայնային նույնականացումից խուսափելու նպատակով: Սակայն ժամանակակից ծրագրային ապահովումները, նորանոր մասնագիտական գրականության ի հայտ գալը հնարավորություն են տալիս փորձագետներին շրջանցել հանցագործների նմանատիպ ջանքերը և կատարել արդյունավետ աշխատանք:

Դատատեսաձայնագրային փորձաքննության պահանջվածության մասին է վկայում վերջին վեց տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տեսաձայնագրային, ֆոտոտեխնիկական և դիմանկարային փորձաքննությունների բաժնում նշանակված դատատեսաձայնագրային փորձաքննությունների նշանակման քանակի աճը (տե՛ս սխեմա 1):

⁹ Տե՛ս А.А.Баюш «Понятие, сущность и значение судебной видеотехнической экспертизы в условиях современного судопроизводства». УДК 343.148.6 DOI: 10.18698/2541-8009-2019-04-460.



Միտնա 1

Դատատեսաձայնագրային փորձաքննությունների նշանակման քանակի աճի վերաբերյալ կարելի է նշել մի քանի հիմնավորումներ¹⁰.

1. Տեսանկարահանող սարքավորումների տեղադրման տարածվածությունը,
2. Դատատեսաձայնագրային նյութերի հետազոտությունների որակի աճը,
3. Ժամանակակից տեխնոլոգիաների, նորանոր ծրագրային ապահովումների ի հայտ գալը և զարգացումը,
4. Փորձագետների հմտությունների և գիտելիքների կատարելագործումը:

Հետազոտությունների որոշ տեսակներ, որոնք տարիներ առաջ հնարավոր չէր կամ շատ բարդ էր իրականացնել, այժմ իրականացվում են: Օրինակ՝ տարիներ առաջ անձի դիմանկարային նույնականացում իրականացնելը հնարավոր էր միայն անձի երկու դիմահայաց նկարների առկայության դեպքում: Չկար անհրաժեշտ տեղեկատվական բազա, ծրագրային ապահովումները բավականաչափ զարգացած չէին նմանատիպ փորձաքննություններն արդյունավետ իրականացնելու համար: Այսօր մասնագիտական գրականությունն օրեցօր համալրվում է օգտակար տեղեկատվությամբ, ի հայտ են գալիս նորանոր ծրագրային ապահովումներ, որոնք հնարավորություն են ընձեռում կատարել բազմակողմանի հետազոտություններ: Ներկայումս անձի նույնականացում կատարվում է ոչ միայն դիմահայաց նկարների միջոցով, այլ ֆիզիկական առանձնահատկություններով, պրոֆիլից և նույնիսկ՝ քայլվածքով:

Դատատեսաձայնագրային փորձաքննությունների ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից պարզաբանման համար առաջադրվող առավել հաճախ հանդիպող խնդիրներից են՝

¹⁰ Վիճակագրական տվյալները վերցվել են ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տեսաձայնագրային, ֆոտոտեխնիկական և դիմանկարային փորձաքննությունների բաժնից:

1. Առկա՞ են արդյոք տեսագրություններում կամ ձայնային ֆայլերում մոնտաժման հետքեր, թե՞ ոչ.

2. Տեսաձայնագրման միջոցների, միջավայրի և սարքերի պարզում.

3. Ձայնային ֆայլերում խոսող անձանց քանակի պարզում.

4. Խոսքի վերծանում և խոսող անձանց նույնականացում.

5. Տեսագրություններում առկա անձանց, առարկաների, տրանսպորտային միջոցների նույնականացում.

6. Տեսագրություններում առկա անձանց, նրանց գործողությունների և տեսապատկերում երևացող առարկաների պատկերների որակի բարելավում:

Փորձագետին ուղղված հարցերի մեջ առավել հաճախ հանդիպողներից է՝ պարզել, թե արդյո՞ք փորձաքնության տրամադրված տեսագրություններում առկա են **մոնտաժման**, ընդհատման կամ ամբողջականության խախտման դեպքեր: Աշխատանքային պրակտիկայում երբեմն հանդիպում են դեպքեր, երբ տեսագրությունները փոփոխված են լինում: Մոնտաժն առանձին տարրերից՝ տեսապատկերներից (կադրերից) տեսանյութի «հավաքման» գործընթաց է: Փորձաքնության ներկայացված ֆայլերը կարող են ենթարկված լինել մոնտաժի տարրեր նպատակներով՝ սկզբնական նյութի որակական կամ գունային բարելավման, տեսանյութի կամ ձայնային ֆայլի ընթացքի անընդհատությունն ապահովելու համար, ինչպես նաև գործի անցանկալի հանգամանքները կամ խոսակցությունը թաքցնելու, իրողությունն այլ կերպ ներկայացնելու նպատակով:

Օրինակ՝ մեզ հանդիպած գործերից կարելի է առաձնացնել մի դեպք, երբ տեսապատկերում երևում է երկու անձ, որոնք տեսագրության ողջ ընթացքում խոսում են, սակայն տեսանյութի մեջ կան հատվածներ, որտեղ անձանցից մեկի ձայնը բացակայում էր: Նույն տեսագրության մեջ առկա էին նաև բուն տեսանյութի մոնտաժման հետքեր՝ կտրուկ անցումներ, որոնք նկատելի էին նույնիսկ ակնադիտական եղանակով հետազոտության դեպքում, առանց ծրագրային ապահովումների օգտագործման:

Ձայնային ֆայլերում խոսող անձանց քանակի պարզումը նույնպես հաճախ տրվող հարցերից է, որի հետ մեկտեղ գրեթե միշտ առաջադրվում է ձայնային նմուշների նույնականացման համար պիտանելիության հարցը: Ձայնային ֆայլերում առկա հնչող խոսքը նույնպես ոչ միշտ է պիտանի լինում նույնականացման համար: Շատ հաճախ ձայնագրություններն իրականացվում են աղմկոտ պայմաններում կամ ձայնագրող սարքի ոչ ճիշտ տեղակայման դիրքից, կամ հնչող ձայնը գրեթե չի լսվում:

Տեսագրություններում առկա անձանց, առարկաների **նույնականացումը, նմանեցումը** նույնպես հաճախ հանդիպող հարցերից է: Նույնականացումն իրականացվում է անձանց կամ առարկաների, տրանսպորտային միջոցների անհատական հատկանիշների, բնութագրիչների առկայության դեպքում: Անձանց դեպքերում անհատականացնող յուրահատուկ բնութագրիչ կարող է լինել նրանց դեմքի կամ մարմնի վրա առկա դաջվածքը, սպին, խալը, նշանը և այլն: Տրանսպորտային միջոցների դեպքում անհատականացնող բնութագրիչ է դրա համարանիշը, դրա վրա առկա որևէ գրառում կամ անհատականացնող այլ հատկանիշ: Առարկաների

նույնականացման դեպքում անհատականացնող հատկանիշ են դրանց վրա առկա անհատական համարանիշները, օրինակ՝ զենքերի կամ տեխնիկական միջոցների վրա առկա սերիալական համարները և այլն:

Նմանեցման դեպքում, երբ փորձագետն ակնադիտական եղանակով հետազոտության արդյունքում ֆիքսում է որոշմամբ նշված առարկայի տեսակը, կատարվում է նմանեցում առկա նմանատիպ առարկաների և վերոնշյալ առարկայի միջև, որից հետո, համապատասխանության դեպքում, եզրակացության մեջ տեղադրվում են երկու առարկաների լուսանկարները:

Այս հարցում առաջնային նշանակություն ունեն տեսագրությունների որակը, դրանցում պատկերված միջավայրի լուսավորությունը, գունային հագեցվածությունը, նկարահանող տեսախցիկների և տեսապատկերում երևացող անձանց դիրքերը:

Հարկ է նշել, որ միշտ չէ, որ հաջողվում է տեսագրություններից առանձնացնել ավտոմատացված եղանակով դիմանկարային նույնականացման համար պիտանի անձանց լուսանկարներ, քանի որ փորձաքննության տրամադրված տեսագրությունները մեծամասամբ լինում են ցածր որակի, ցածր կետայնությամբ, անբավարար լուսավորությամբ կամ գունային աղավաղմամբ, տեսագրությունները կատարված են լինում տեսախցիկների տեղակայման վերին դիրքերից, մեծ անկյան տակ, իսկ տեսախցիկների տեսապատկերներում երևացող անձինք շատ հաճախ կատարում են խառը, անկանոն շարժումներ, գտնվում են ոչ ստատիկ վիճակում կամ կրում են գլխարկ, դիմակ, ակնոց կամ այլ պարագաներ, ինչը գրեթե անհնարին է դարձնում ավտոմատացված եղանակով դիմանկարային նույնականացում կատարելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ դատատեսաձայնագրային փորձաքննությունն ապացուցողական գործողություն է, որի արդյունքում կազմված եզրակացությունները քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում կարող են որպես ելակետային ապացույցներ լինել:

ЗНАЧЕНИЕ СИСТЕМ ВИДЕОНАБЛЮДЕНИЯ В ПРЕДОТВРАЩЕНИИ И РАСКРЫТИИ ПРЕСТУПЛЕНИЙ

ՄՈՒՇԱԿԱՆՅԱՆ ԱՐԴԱԿ

*Начальник отдела организации, контроля учебного процесса
и обеспечения непрерывного образования Образовательного
комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент*

ՏԱԱԿՅԱՆ ԱՏՄԻԿ

*Эксперт отдела экспертизы видео и аудиозаписей,
фототехнических и портретных экспертиз
Национального бюро экспертиз НАН РА*

Аннотация: Значение систем видеонаблюдения в предотвращении и раскрытии преступлений невозможно переоценить. Законодательными актами Республики Армения уже предусмотрено, что видеозаписи, видео-аудио записи, аудиозаписи могут в установленном порядке служить доказательствами в уголовном, гражданском и административном производстве.

В статье рассматриваются правовые нормы использования видеозаписей в качестве доказательств и особенности их экспертизы:

Ключевые слова: Камера, видеозапись, видео-аудио запись, аудиозапись, производство, доказательство, предотвращение преступлений, экспертиза.

ROLE OF VIDEO SURVEILLANCE SYSTEMS IN CRIME PREVENTION AND DETECTION

MNATSAKANYAN ARTAK

*Head of Division for Organization, Supervision of the
Educational Process and Provision of Continuous Education of
MIA Educational Complex of RA, Candidate of Legal Sciences,
Associate Professor*

SAHAKYAN HASMIK

*Expert of Audio and Video, Photo-Technical and
Portrait Expertise Department of National Bureau of
Expertises of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

Annotation: The role of video surveillance systems in preventing and detecting crimes cannot be overestimated. The legislative regulations of the Republic of Armenia already stipulate that video recordings, audio-visual recordings, and audio recordings can serve as evidence in criminal, civil, and administrative proceedings in accordance with the established procedure.

The article touches upon the legal regulations governing the use of audio-visual recordings as evidence and the specifics of their examination.

Key words: Camera, videorecording, audio-visual recording, audio recording, proceedings, evidence, crime prevention, examination.

*Հոդվածը գրախոսվել է 08.09.2025
Ներկայացվել է տպագրության 15.09.2025*

**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԴԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԻ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Անահիտ Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի հայցորդ

DOI:10.63925/18294847-2025.op20-08

Համառոտագիր: Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծվում է դատական իշխանության բովանդակային հասկացությունը, էությունը, բնութագրական հատկանիշները և նրա դերն ու նշանակությունը դատական նախադեպի, դատական պրակտիկայի ձևավորման և զարգացման գործընթացներում: Դատական իշխանության նման կարգավիճակը պայմանավորված է նրանով, որ այն դիտարկվում է որպես պետական իշխանության անկախ ու ինքնուրույն ճյուղ և օժտված է դրան համապատասխան գործառնության իրավունքներով:

Բանալի բառեր. դատական իշխանություն, նորմաստեղծ գործառնություն, պետական իշխանություն, դատական նախադեպ, դատական պրակտիկա, դատական հայեցողություն:

Դատական նորմաստեղծ գործունեության հիմնական արդյունքների՝ դատական նախադեպերի և դատական պրակտիկայի մշակման գործում էական դերակատարում ունի դատական հայեցողությունը¹:

XIX դարի վերջերից դատական հայեցողության ընկալման շուրջ գոյություն են ունեցել և այժմ էլ գոյություն ունեն դատավորի ազատության չափին առնչվող մի շարք տեսություններ: Ըստ որում՝ «դատական հայեցողություն» երևույթն առկա է բոլոր երկրների իրավական համակարգերում, բայց իրավական հարցերի (կոնֆլիկտների) լուծման դեպքում տարբեր են դատավորի ազատության չափը որոշելու ընկալումները: Դատավորի ազատության չափն իրավունքի համաշխարհային երկու ընտանիքներում (անգլոսաքսոնական և ռոմանագերմանական) դարձյալ կապված է դատական նախադեպեր ստեղծելու և դրանք որպես իրավունքի աղբյուր դիտարկելու հիմնախնդրի հետ: Եթե Ընդհանուր իրավունքում դատավորը կարող է միավորել դատարանի իրավաստեղծ և իրավակիրառ գործառնությունները և ստեղծել նոր նախադեպեր կամ կիրառել նախկինում ընդունված նախադեպը, կամ էլ ընդարձակել, կամ նեղացնել վերջինիս բովանդակությունը և գործն իր հայեցողությամբ լուծել ցանկացած

¹ Տե՛ս **Аарон Барак**. Судейское усмотрение. Пер. с англ. М., 1999: Տե՛ս նաև **Ղամբարյան Արթուր**, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, Նույնի՝ Դատական հայեցողության//«Իրավագիտության հարցեր» №2, 2005, էջ 68-75:

մոտեցմամբ (իր ուզած տարբերակով), ապա Մայրցամաքային (ռուս-նագերմանական) իրավունքում դատավորը կաշկանդված է գրված օրենքով. նա այսպես կոչված՝ «օրենքի ստրուկն» է և կարող է սոսկ ընտրություն կատարել միայն օրենքով նախատեսված մի քանի լուծումների մեջ, գործի հանգամանքները գնահատել, իրավական նորմը մեկնաբանել իր հայեցողությամբ՝ դարձյալ դուրս չգալով օրենքի շրջանակներից: Նա չի կարող շրջանցել օրենքը և իրավական բացը հաղթահարել իր հայեցողությամբ, որը, փաստորեն, իրավունքի նկատմամբ պոզիտիվիստական մոտեցման արդյունք է:

Իրավունքի պոզիտիվիստական (մանավանդ՝ նորմատիվիստական) մոտեցման, դոգմատիկ տեսությանը հակառակ՝ իրավունքի այդ նույն դպրոցի շրջանակներում տարածում գտած ազատ իրավունքի և նրանց հետ համերաշխ բնական իրավունքի դպրոցի նախահեղափոխական շրջանի մի շարք ներկայացուցիչների կարծիքով՝ օրենքի իմաստի և արդարության սկզբունքի միջև հակասության դեպքում դատավորները պետք է հիմնվեն այդ սկզբունքի վրա և հարցը լուծեն նշված սկզբունքի հաշվառմամբ՝ խղճի թելադրանքով: Այսպես, ըստ Ի. Ա. Պոկրովսկու. «Դատավորի դերի նման ընկալման դեպքում վերջինս, ըստ էության, ձեռք կբերեր վերօրինական բնույթ, որը կարտահայտվեր նրանում, որ եթե արդարությունն իրականում հակասում է գրված օրենքին, ապա պետք է դատել արդարությանը համապատասխան»²: Բնական է, որ իրավունքի պոզիտիվիստական մոտեցման շատ հեղինակներ չընդունեցին Ի. Պոկրովսկու մոտեցումը: Նրանցից, օրինակ, Գ. Շերշենևիչը գրում էր, որ «արդարադատությունը կամ ըստ նպատակահարմարության սկզբունքի իրավունքի նորմի կիրառումը ոչնչացնում է հրապարակված ընդհանուր կանոնների ողջ նշանակությունը: Օրինականության սկզբունքի դեմ առարկությունն առարկություն է հենց իր՝ նորմի դեմ: Օրինականության սկզբունքի վրա հարձակում նշանակում է պնդել վերականգնել այն, ինչը նորմը կոչված էր վերացնել»³:

Հայաստանի Հանրապետությունում, ի տարբերություն դատական նախադեպը չընդունած ՌԴ իրավական համակարգի, այսօր սահմանափակ ձևով, փաստորեն, գործում է ազատ իրավունքի տեսությունը, որի համաձայն ստորադաս դատարանը պարտավոր է հաշվի առնել ՀՀ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները կամ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ և 10-րդ հոդվածներ): Իրավամեկնաբանման նախադեպի գոյությունը Հայաստանում կարող է աստիճանաբար իրավական համակարգը տանել դեպի դատական նախադեպի ընդունման, եթե, իհարկե, ներդրվի օրենքի և իրավունքի համանմանության կիրառման անհնարի-նության դեպքում վճիռները բարեխղճության, ողջամտության և արդարության

² См. у Покровский И.А. Основные проблемы гражданского права. М., 1998, էջ 96-97,

³ См. у Шершеневич Г.Ф. Общая теория права. Вып. 1-4: М., 1910-1912. Вып. 4., էջ 712:

պահանջներից ելնելով կայացնելու վերաբերյալ մեր առաջարկը: Իհարկե, դրան գուցահեռ անհրաժեշտ կլինի ապահովել դատավորների կրթության բարձր մակարդակ և նրանց առաջխաղացման ճիշտ կազմակերպում, որն իր հերթին կապահովի և՛ արդարություն, և՛ անաչառություն, և՛ իրավունքի գերակայություն: Չէ՞ որ. «...դատավորը գործը ճիշտ լուծելու համար պետք է ուսումնասիրի հասարակությունում առկա բոլոր չափորոշիչները՝ կանոնները և սկզբունքները, որոնք բարոյական և քաղաքական մշակույթի տարրերից են և գոյություն ունեն՝ անկախ իրավական ինստիտուտներում դրանց ամրագրումից»⁴:

Պոզիտիվիստական դիրքերից վերլուծելով դատական հայեցողության՝ հասկացության բնորոշման ռուս գիտնականների տեսակետները՝ կարելի է եզրակացնել, որ հրապարակում եղած բնորոշումներից ամենաընդունելին Ա.Բարակի և Ա.Բոնների սահմանումներն են: Ըստ Ա.Բարակի՝ դատական հայեցողությունը երկու կամ ավելի այլընտրանքների միջև՝ օրենքի վրա հիմնված ընտրություն կատարելն է, երբ այդ այլընտրանքներից յուրաքանչյուրն օրինական է⁵: Ըստ Ա.Բոնների՝ դատական հայեցողության էությունն այն է, որ համապատասխան դեպքերում դատարանին լիազորություն է վերապահվում ընտրել գործի առավել ճիշտ լուծում՝ ելնելով օրենսդրի կողմից որոշակի նպատակներ հետապնդող օրենքի ընդհանուր դրույթներից, գործի կոնկրետ հանգամանքներից, ինչպես նաև իրավունքի սկզբունքներից, հասարակության և բարոյականության օրենքներից⁶:

Իրավաբանական գրականության մեջ նաև կարծիք է արտահայտվել այն մասին, որ դատական հայեցողությունը տեսակների է բաժանվում՝ ըստ դատական միասնական պրակտիկա ապահովող գործոնների: Այդ առումով առանձնացվում են դատական հայեցողության հետևյալ տեսակները՝ հայեցողություն՝ ըստ իրավունքի նորմի մեկնաբանության, և հայեցողություն՝ ըստ գնահատողական (բազմանշանակ) նորմի կիրառման, հայեցողություն՝ իրավունքի կոլիզիաները կիրառելու դեպքում, և հայեցողություն՝ իրավունքի բացերը հաղթահարելու կապակցությամբ:

Խորհրդային իրավագիտությունում, ընդհանուր առմամբ, դատական հայեցողությունը հատուկ և համալիր քննարկման առարկա չի դարձել, ճի՞շտ է, տեսության մեջ ուսումնասիրվել են դատական հայեցողության առանձին հարցեր, գրվել են հոդվածներ⁷, սակայն մի շարք խնդիրներ դուրս են մնացել գիտական քննարկումներից: Տեսական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական հայեցողության հետազոտությունն ընթացել է հիմնականում վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզման, ներքին համոզմունքի ձևավորման վրա

⁴ Տե՛ս **Ա. Ս. Ղաֆարյան**, Դատական հայեցողություն, էջ 68-69:

⁵ Տե՛ս **Барак А.** Судебное усмотрение. Изд. НОРМА, М., 1999, էջ 36:

⁶ Տե՛ս **Боннер А.Т.** Применение закона и судебное усмотрение // Советское госуправление. 1979, N 6, էջ 36:

⁷ Տե՛ս **Комиссаров К.И.** Судебное усмотрение в гражданском процессе // Советское государство и право, 1969, N 4. Боннер А.Т. Применение закона и судебное усмотрение // Советское государство и право, 1979, №6, Пашкевич И. 2. 390 К. Syrie exob ycopiiia // Coseicxoe Tcjjia: Erso i nano, 19B2, N 1 և այլն:

ազդող գործոնների, դատավարական որոշումների՝ որպես իրավակիրառ մարմնի հայեցողության իրականացման միջոցի ուսումնասիրության ուղղությամբ: Մյուս կողմից՝ իրավագիտությունում, հատկապես՝ վարչական իրավունքի մասնագետների կողմից, լուրջ աշխատանքներ են կատարվել վարչական հայեցողության ուսումնասիրության ոլորտում: Նշված համատեսական բնույթի հետազոտությունները դատական հայեցողության ուսումնասիրության համար կարող են ծառայել որպես մեթոդաբանական հենք⁸:

Հետխորհրդային երկրների իրավունքի տեսությունում և դատական իրավունքում մեծ հետաքրքրություն առաջացավ դատական հայեցողության հիմնախնդրի նկատմամբ: Բանն այն է, որ ԱՊՀ երկրների նոր Սահմանադրություններում իշխանության բաժանման սկզբունքի ամրագրմամբ դատարանը վերածվեց իշխանության ինքնուրույն կրողի: Հասարակական կյանքում դատական իշխանության դերի և նշանակության բարձրացումը պահանջում է նորովի դիտարկել դատարանի լիազորությունները և դրանց շրջանակները:

Դատական հայեցողության ուսումնասիրության արդիականությունը կապված է նաև դատական նախադեպի հետ: Պատահական չէ, որ ամերիկյան և եվրոպական իրավաբանները, շատ դեպքերում՝ իրավափիլիսոփայական տեսանկյունից, հատուկ ուշադրություն են դարձնում դատական հայեցողության հարցերին, որը, կարծում ենք, առավելապես պայմանավորված է եղել դատական ակտերի՝ որպես իրավունքի աղբյուրի ճանաչմամբ:

Դատական հայեցողությունը քննարկվում է ինչպես իրավունքի տեսության դատավարագիտության շրջանակում, այնպես էլ դատական իրավունքում: Օրինակ՝ քաղաքացիական դատավարության ոլորտում դատական հայեցողության վերաբերյալ գրվել են թեկնածուական ատենախոսություններ⁹: Քրեական դատավարությունում ուսումնասիրվել է իրավակիրառ հայեցողության այնպիսի տեսակ, ինչպիսին է քննիչի հայեցողությունը, որտեղ նույնպես վերլուծվում են համատեսական բնույթի մի շարք հարցեր¹⁰: Աշխատանքներ են տարվում նաև սահմանադրական դատավարությունում դատական հայեցողության ուսումնասիրության ուղղությամբ¹¹: Դատական հայեցո-

⁸ Տե՛ս **Тихомиров Ю.А.** Административное усмотрение и право Ежегодник российского права. М., 2001 և այլն:

⁹ 1997թ. **Պապկով Օ.Ս.** «Դատական հայեցողությունը քաղաքացիական դատավարությունում» թեմայով պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն. Տե՛ս **Патков О.А.** Судейское усмотрение в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук. М. 1997: Սեկ տարի անց նույն թեմայով պաշտպանեց նաև Դ. Արուշենկոն (գիտական ղեկավար՝ Կ. Կոմիսարով): Տե՛ս **Абушенко Д.Т.** Судейское усмотрение в гражданском процессе. Дис. канд. юрид. наук. Екатеринбург, 1998:

¹⁰ Տե՛ս **Ярославский А.Б.** Усмотрение следователя при расследовании уголовных дел. Автореф. канд. юрид. наук. Волгоград. 2001: Տեսական բնույթի լիարվածության առումով հատկանշական է Պ. Մարֆիցինի՝ **«Քննիչի հայեցողությունը (քրեադատավարական ասպեկտը)»** դոկտորական ատենախոսությունը, որի մեկնադրությունը տպագրվել է ինտերնետում. Տե՛ս Մարֆицин П.Г. Усмотрение следователя (уголовно-процессуальный аспект). **Дис. д-ра. юрид. наук. Омск, 2003** www.lawtech.agava.ru/pub/busled/g1.htm:

¹¹ Տե՛ս **Кажлаев С.А.** Судебное усмотрение в деятельности Конституционного суда РФ. Проблемы процессуального права. Дата выпуска 20.02.2004/ <http://subscribe.ru/archive/law.russia.advice.process-/200402/20183932.html>.

դությունը քննարկման առարկա է դարձել նաև քաղաքացիական (լայն իմաստով) և քրեական իրավունքներում¹²:

ՀՀ օրենսդրության մեջ դատական հայեցողության օրենսդրական սահմանում տրված չէ: Սակայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի (18.02.2004 թ. 6-րդ հոդվածում տրվում է հայեցողական լիազորությունների բնորոշումը. «Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը»: Թեև նշված բնորոշումը վերաբերում է վարչական հայեցողությանը, սակայն այն կարելի է օգտագործել նաև դատական հայեցողության ուսումնասիրման ընթացքում:

Գիտության մեջ դատական հայեցողությունը հասկացվում է տարբեր կերպ: Դ. Չեչոտը դատական հայեցողությունը դիտում է որպես դատարանի ազատություն համապատասխան որոշման ընտրության հարցում¹³: Ըստ Կ. Կոմիսարովի՝ դատական հայեցողությունը դատարանին ընձեռված հնարավորությունն է. ելնելով կոնկրետ պայմաններից՝ ընդունել իրավունքի վերաբերյալ այնպիսի որոշում, որի հնարավորությունը բխում է օրենքի ընդհանուր և հարաբերական որոշակի դրույթներից¹⁴: Յ. Պոպկովը դատական հայեցողություն ասելով հասկանում է իրավական նորմերով կարգավորված, դատավարական ձևով իրականացվող հատուկ իրավակիրառ գործունեության տեսակ, որի դեպքում դատարանին լիազորություն է տրվում վիճելի իրավական հարցը լուծել՝ հիմք ընդունելով օրենսդրի հետապնդած նպատակները, իրավունքի սկզբունքները և օրենքի այլ ընդհանուր դրույթները, գործի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև ողջամտությունը, բարեղծությունը, արդարությունը և բարոյականությունը¹⁵: Ըստ Ասրոն Բառակի՝ հայեցողությունն իշխանությամբ օժտված անձի լիազորությունն է երկու և ավելի այլընտրանքների միջև ընտրություն կատարելու, որտեղ այլընտրանքներից յուրաքանչյուրն օրինական է¹⁶: Ինչպես տեսնում ենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում հայեցողական լիազորությունների բնորոշումը բավականին մոտ է Ա. Բառակի տված բնորոշմանը¹⁷:

Տեսության մեջ նշվում է, որ դատական հայեցողությունը բազմաշերտ երևույթ է, և դրա հասկացությունը անհրաժեշտ է բնորոշել հայեցողության առանձին տեսակները վերլուծելու ճանապարհով¹⁸:

¹² Տե՛ս **Степин А.Б.** Судебное усмотрение в частном праве (Вопросы теории и практики). Дисс. канд. юрид. наук. 2003, **Грачева Ю.В.** Судейское усмотрение в уголовном праве. Дисс. канд. юр. наук. М., 2002, **Рарог А.И., Грачева Ю.В.** Понятие, основание, признаки и значение судейского усмотрения в уголовном праве. Государство и. право, N 11, 2001, **Рарог А.И.** Усмотрение правоприменителя при квалификации преступлений. // Уголовное право, N1, 2000.

¹³ Տե՛ս **Чечот Д.М.** Административная юстиция (проблемы применения). Л., 1979, էջ 68:

¹⁴ Տե՛ս **Комиссаров К.И.** Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. Свердловск, 1971, էջ 26:

¹⁵ Տե՛ս **Папков О.А.** Судейское усмотрение в гражданском процессе. Дис. канд. юрид. наук, М., 1997, էջ 24:

¹⁶ Տե՛ս **Аарон Барак** Судейское усмотрение. Перевод с англ. М., 1999, էջ 299:

¹⁷ Տե՛ս Տեսության մեջ Ա. Բառակի դատական հայեցողության բնորոշումը ընդունվում է ոչ բոլորի կողմից: **Толчеев М.** Судейское усмотрение//Еженедельная газета эж-ЮРИСТ, N 26/2004, www.consultant.ru/review/ez2004-07-05.html.

¹⁸ Տե՛ս **Васильев Л.М.** Практика как критерий истины в уголовном судопроизводстве. Краснодар, 1993, էջեր 139- 140:

Տեսության մեջ առանձնացվում են դատական հայեցողության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են իրավական դիրքորոշումներ, դատական նախադեպեր, դատական պրակտիկայի ամփոփում, դատական նորմաստեղծ գործունեություն, երբ օրենսդրի սահմանած իրավական նորմը բավարար չէ վեճը լուծելու համար, և այն լրացվում է դատական պրակտիկայում. դատական հայեցողություն, որն անմիջապես բխում է օրենսդրության մեջ գնահատողական հասկացություններից և այլն: Յու. Տիխոմիրովը, հետևելով Ա. Բառակին, առանձնացնում է դատական հայեցողության այնպիսի տիպ, որը վերաբերում է փաստերի որոշմանը: Հայեցողության այս տեսակը դատական վարույթի ամենակարևոր հարցերից է, քանի որ դատարանում գտնվող վեճերի մեծ մասը վերաբերում են փաստերին¹⁹: Այսպիսով՝ իրավակիրառ պրակտիկայում դատական հայեցողությունը բավականին լայն հասկացություն է, քանի որ դատական հայեցողության մասին է խոսվում բոլոր այն դեպքերում, երբ առկա է իրավական նորմերի մեկնաբանում, օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառում, փաստական հանգամանքների գնահատում²⁰:

Ամփոփելով դատական հայեցողության բնորոշումները՝ առաջարկում ենք մեր հայեցակարգային մոտեցումը, ըստ որի՝ դատական հայեցողությունը բարդ ու բազմաշերտ հասկացություն է, որը ներառում է հետևյալ նվազագույն բաղադրիչները՝ բարձր իրավագիտակցության և իրավական մշակույթի մակարդակ, մեկնողական արվեստի (հերմենևտիկայի) տիրապետում, իրավաբանական տեխնիկայի և տրամաբանության կանոնների իմացություն և այլն:

Այսպիսով՝ դատական հայեցողությունը կամային-ինտելեկտուալ գործունեություն է, որն ուղղված է իրավական վեճերի լուծման համար դատական նորմի (իրավական դիրքորոշման, նախադեպի, դատական պրակտիկայի վերլուծության և ամփոփման) մշակման և կիրառման համար:

Դատական հայեցողության բնորոշումից պարզ է դառնում, որ այն պայմանավորված է, օրինակ, օրենսդրության մեջ բացերի կամ հարաբերական որոշակի դրույթների առկայությամբ (նշված հարցերն առանձին քննարկման առարկա են): Հարաբերական որոշակի դրույթները, արժեքավորվող հասկացությունները, օրենքի բացերն իրավական ոլորտում առաջացնում են անորոշություն, ինչն ավելի է խորանում, եթե դատական մարմինն ունի դատավարական նշանակություն ունեցող տվյալների պակաս: Անորոշության պայմաններում հայեցողության հիման վրա որոշում ընդունելիս հատուկ նշանակություն է ձեռք բերում իրավունքի սուբյեկտների օրինական շահերին վնաս հասցնելու ռիսկը: Ուստի անհրաժեշտ է քննարկել դատական հայեցողության և իրավակիրառ ռիսկի հարաբերակցության հարցը:

Հայեցողական լիազորությունների իրականացումը՝ որպես ռիսկային կամ չնորմավորված վարքագիծ²¹, կարող է հանգեցնել իրավակիրառ սխալների: Տեսությունում

¹⁹ Տե՛ս **Тихомиров Ю.А.** Теори компетенции. М., 2001, էջ 272:

²⁰ Տե՛ս **Bogdan M.**, Comparative Law. Kluwer. 1994, էջ 121-122:

²¹ Տե՛ս **Мамчун В.В.** Правоприменительный риск. Автореф. дис...канд. юрид. наук. Нижний Новгород, 1999, էջ 17:

նշվում է, որ իրավակիրառ սխալների²² առաջացման վրա ազդեցություն է ունենում նորմատիվ-իրավական բազայի ցածր որակը: Հատկապես մեծ ազդեցություն են ունենում ոչ հստակ տերմինները, հասկացությունները, միևնույն երևույթները տարբեր տերմիններով անվանելով և հակառակը՝ օրենսդրության մեջ մեծ թվով արժեքավորվող հասկացություններ չափից ավել անհարկի օգտագործելը: Վերջիններս թողնվում են իրավակիրառողի հայեցողությանը, ինչն էլ երբեմն դառնում է սխալ որոշում կայացնելու պատճառ:

Պետք է համաձայնել, որ իրավակիրառ սխալի հնարավորությունը պայմանավորված է հայեցողության ինստիտուտի գոյությամբ: Դա բացատրվում է նրանով, որ իրավական հայեցողությունը միշտ կապված է սուբյեկտիվիզմի, իրականացվող գնահատման և գործողությունների ազատության հետ²³: Այս ամենը նշանակում է, որ դատական հայեցողությունն այն իրավական ինստիտուտներից է, որի նախատեսումը և կիրառումը պահանջում է գիտականորեն հիմնավորված, հավասարակշռված և գրագետ մոտեցում, և նույնիսկ՝ զգուշություն:

Թեև մեզանում դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, համընդհանուր ճանաչում չի ստացել, սակայն նախադեպի գիտական և պաշտոնական ընդունումն օբյեկտիվ և նույնիսկ՝ բնական գործընթաց է: Դատական նախադեպի իրավական հիմքերի ամրագրման ուղղությամբ պետական իշխանության կողմից արդեն որոշ քայլեր արվում են: Կարելի է նշել, որ դատական նախադեպը լրացուցիչ լիցք է հաղորդում դատական հայեցողության խնդրի նկատմամբ ունեցած հետաքրքրության բարձրացման և ուսումնասիրման հարցում: Ժամանակակից իրավագիտությունում դատական հայեցողությունն ուսումնասիրվում է տարբեր հարթություններում, ինչը վկայում է այդ հասկացության բազմաբովանդակ, բազմաշերտ և բարդ լինելու մասին:

²² Գիտության մեջ միասնական մոտեցում չկա իրավակիրառ այս հասկացության և իրավախախտման հասկացության վերաբերյալ: Հիմնականում առանձնացվում են իրավակիրառման դիսկրիմինացիայի վերաբերյալ երեք մոտեցումներ. Առաջին՝ որպես օբյեկտիվորեն հակառակ արարք, որպես բարեխիղճ մոլորության կամ անզգուշության արդյունք, որպես իրավական նորմի ցանկացած շեղում՝ անկախ անձի մեղավորությունից: Տեսության մեջ բուռն վեճերի տեղիք է տվել հատկապես դատական սխալի, քննիչի սխալի և իրավախախտման հարաբերակցության հարցերը: Այս մասին մանրամասն տե՛ս **Назаров А. Д.** Влияние следственных ошибок на ошибки суда. М., 2003, Шейфер С.А. Доказательства и доказывание по уголовным делам: проблемы теории и правового регулирования. Тольятти, 1997, Зайцев И.М. Устранение судебных ошибок в гражданском процессе. Саратов, 1985, **Соловьев А.Б.** Доказывание в досудебных стадиях уголовного процесса России. Научно-практ. пособие. М., 2002, **Дугин А.Т.** Проблемы борьбы с уголовно-процессуальными нарушениями при расследовании преступлений средствами прокурорского надзора. Автореф. канд. юрид. наук. М., 1995 և այլն:

²³ Տե՛ս **Мурсалимов К.Р.** Правоприменительные Мурсалимов К.Р. Правоприменительные ошибки. Проблемы теории. Автореф. дис. канд. юрид. наук Нижний Новгород, 2000, էջ 21:

THE CONCEPT, ESSENCE AND ROLE OF THE JUDICIARY IN THE FORMATION OF JUDICIAL PRECEDENT AND JUDICIAL PRACTICE

NALBANDYAN ANAHIT

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law at the National Academy of Sciences of the Republic of Armenia

Summary. In this article, the author has analyzed in detail the substantive concept, essence, characteristic features of the judiciary, as well as its role and importance in the processes of formation and development of judicial precedent and judicial practice.

Such a status of the judiciary is due to the fact that it is considered as an independent and autonomous branch of government and is endowed with appropriate functional powers:

Keywords: judicial power, rule-making function, state power, judicial precedent, judicial practice, judicial discretion.

ПОНЯТИЕ, ПРИРОДА И РОЛЬ СУДЕБНОЙ ВЛАСТИ В ПРОЦЕССЕ СОЗДАНИЯ ПРЕЦЕДЕНТОВ И СУДЕБНОЙ ПРАКТИКИ

НАЛБАНДЯН АНАИТ

*Соискатель Института Философии, социологии
и права Национальной академии наук РА*

Аннотация. В этой статье автор подробно проанализировал содержательное понятие, сущность, характерные особенности судебной власти, а также ее роль и значение в процессах формирования и развития судебного прецедента и судебной практики.

Подобный статус судебной власти обусловлен тем, что она рассматривается как независимая и самостоятельная ветвь государственной власти и наделена соответствующими функциональными полномочиями.

Ключевые слова: судебная власть, нормотворческая функция государственная власть, судебный прецедент, судебная практика, судебное усмотрение.

Հոդվածը գրախոսվել է 23.09.2025
Ներկայացվել է տպագրության 30.09.2025

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Շուշանիկ Վարդերեսյան

*ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՊԾ ԵՔԳ,
ավագ պարեկ, ոստիկանության ավագ լեյտենանտ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ
DOI:10.63925/18294847-2025.op20-09*

Համառոտագիր: Սույն հոդվածը նպատակ ունի ոչ միայն վերլուծել պետական կառավարման գոյություն ունեցող ձևերը, այլև հասկանալ դրանց ազդեցությունը հասարակության վրա՝ թե որքան են դրանք նպաստում քաղաքացիների իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության, տնտեսական կայունության և ընդհանուր բարեկեցության ապահովմանը: Ամբողջ աշխարհում փոփոխվող աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակները հաճախ ստիպում են պետություններին հարմարվել նոր մարտահրավերներին ու վերափոխել իրենց կառավարման մոդելները՝ հետագա կայունության և համաշխարհային մրցունակության համար:

Այդ պատճառով, հոդվածի շրջանակներում կարևոր է բացահայտել, թե ինչպիսի արտաքին և ներքին գործոններ են ազդում պետության կառավարման մեթոդների ընտրության վրա:

Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են առկա կառավարման համակարգերը կարողանում արձագանքել ժամանակակից մարտահրավերներին, և թե ինչպիսին են լինելու այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն, որպեսզի մեր օրվա պայմաններում պետական կառավարման ձևերը լինեն արդյունավետ ու կայուն:

Բանալի բառեր: Պետական կառավարում, կառավարման համակարգ, պոլիտեիա, արիստոկրատական կառավարում, դեմոկրատիա, նախագահական հանրապետություն:

Ներածություն. Պետական կառավարման ձևը որոշում է այն, թե ինչպես պետք է կազմակերպվեն պետության գործառույթները, ինչպես են ներկայացվում վարչական մարմինները, թե ինչպես են մշակվում քաղաքական ու սոցիալական նախաձեռնությունները, և ինչպիսի մեխանիզմներով է ապահովվում հանրային ծառայությունների մատուցումը: Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտություն է առաջացել պարբերաբար վերանայել պետական կառավարման ձևերն ու կառուցվածքները՝ հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացումները, գլոբալիզացիան և հասարակական պահանջները:

Հիմնական հետազոտություն. Ներկայումս մենք ապրում ենք թվային դարում, որտեղ

տեղեկատվության տարածման արագությունը և կոմունիկացիայի նոր ձևերը փոխել են ինչպես հասարակության, այնպես էլ պետական կառավարման գործառույթները:

Կառավարման ձևերի փոփոխությունը կապված է նաև երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունների հետ, որոնք նպաստում են նոր գործիքների ու մեթոդների ներդրմանը: Կառավարման ձևերը կարող են լինել դիկտատորական կամ դեմոկրատիկ, դաշնային կամ միացյալ՝ կախված երկրի համախմբման մակարդակից ու կառավարման կառուցվածքից:

Այսօր շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, առկա է օրենսդրական ու կառավարման համակարգի արդիականացման գործընթաց, որը ներառում է որոշակի փոփոխություններ՝ թե՛ պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, թե՛ քաղաքացիների մասնակցության մակարդակի բարելավման նպատակով:

Արդյունքում՝ պետական կառավարման արդի ձևերը պետք է կարողանան ավելի մոտիկ կապ հաստատել քաղաքացիների հետ, ապահովել թափանցիկություն և մասնակցություն, ինչն էլ այսօր դառնում է ոչ միայն անհրաժեշտություն, այլև հանրային պահանջ:

Պետական կառավարումը՝ իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի կարևորագույն մաս և բնորոշվում է վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միննույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ¹:

Կառավարման ընթացքում սուբյեկտիվ գործոնը սերտաճվում է օբյեկտիվ գործոններին, կառավարման ներքին տրամաբանությունը՝ կառավարվող օբյեկտի փոփոխության և գործունեության տրամաբանությանը: Այս դիալեկտիկայի էությունը սուբյեկտի օբյեկտիվացման և օբյեկտի սուբյեկտիվացման մեջ է:

Կառավարման օրենքները, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և նրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք, ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության:

Պետական կառավարման օբյեկտիվ օրենքների համապատասխանելիությունն իրական կյանքին չափորոշվում են կառավարչական հարաբերություններում սուբյեկտի բազմազան գործողություններով դրսևորված այն էականորեն նշանակալի արդյունքներով, որոնք օժտված են պարբերական կրկնողությամբ: Սոցիալական

¹ Տե՛ս Քալաշյան Վ., «Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները և առաջնահերթությունները», Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003թ., 81 էջ:

միջավայրի վիճակից, այդ թվում՝ հասարակական համակարգի կառուցվածքից կախվածության մեջ գտնվող կառավարչական պրոցեսի վերլուծությունն ինֆորմացիոն մոտեցման հետևողական կիրառման դեպքում հանգեցնում է պետական կառավարման կառուցվածքային և գործառնության յուրահատուկ օրենքների բացահայտմանը:

«Կառավարում» կամ «իշխում» հասկացությունը քաղաքական գիտության կարևորագույն կատեգորիաներից է: «Քաղաքագիտության առարկան է»՝ Ըստ Ն. Լասուելի՝ «իշխանությունն ու դրա կրողները», ըստ Ռ. Դալի՝ «իշխանության, տիրապետման կամ հեղինակության» իրականացումը, ըստ Դ. Իստոնի՝ բուն քաղաքականությունը «արժեքների իշխանական բաշխումն է»²:

Իշխանությունն այն առանցքն է, որի շուրջ ձևավորվում և ամրագրվում են քաղաքական գիտությունների ուսումնասիրության տարբեր օբյեկտներն ու ուղղությունները:

Իսկ ինչպիսի՞ն են լինում իշխանության ձևերը, այսինքն, մեր բնորոշմամբ՝ քաղաքական կառավարման ձևերը, առաջնահերթ պետք է հենց դա հստակեցնել:

«Կառավարություն» տերմինը վերաբերում է այն ինստիտուտներին ու գործընթացներին, որոնց շրջանակներում սովորաբար ընդունվում են կոլեկտիվ ու, դրա հետ մեկտեղ, որպես կանոն, իրականացման համար պարտադիր որոշումներ:

Քաղաքական համակարգը կամ ռեժիմն ավելի լայն հասկացություններ են. ներառում են ոչ միայն իշխանության մեխանիզմները և պետության ինստիտուտները, այլև այն կառույցներն ու գործընթացները, որոնց միջոցով պետությունը համագործակցում է հասարակության հետ³:

Հասարակության կառավարման մինչ օրս ամենաարդյունավետ ինստիտուտը եղել է պետությունը: «Պետությունը քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտն է, որը կազմակերպում, ուղղորդում և վերահսկում է մարդկանց, հասարակական խմբերի, դասակարգերի ու ասոցիացիաների համատեղ գործունեությունն ու հարաբերությունները: Պետությունը նշանակալի է նրանով, որ նրա ձեռքում են կենտրոնացված իշխանությունն ու ռեսուրսները, ինչն էլ հնարավորություն է տալիս կառավարելու ու նպատակաուղղված կարգավորելու սոցիալական հարաբերությունները: Պետությունը քաղաքական իշխանության հատուկ կազմակերպություն է, որն ունի սուվերենիտետ և իր հրամանների համապարտադիր բնույթ»⁴:

Մշտապես քաղաքական մտածողների ուշադրության կենտրոնում է եղել այն հարցը, թե ինչո՞վ է տարբերվում կառավարման մի ձևը մյուսից: Դեռևս Ք.ա. 4-րդ դարում Արիստոտելը նախաձեռնեց քաղաքական ռեժիմների դասակարգման մեզ հայտնի առաջին փորձը:

18-րդ դարի սկզբներին շրջանառության մեջ դրվեց երկրները միապետությունների ու

² Տե՛ս Мельвилъ А. Ю. էջ 324-328:

³ Տե՛ս Նույն տեղում՝ էջ 331-335:

⁴ Տե՛ս С. В. Решетникова, էջ 123:

հանրապետությունների, ինքնակալությունների ու սահմանադրական ռեժիմների բաժանման պրակտիկան:

20-րդ դարում ի հայտ եկան նոր, առավել յուրօրինակ դասակարգումներ, որոնցից «Սառը պատերազմի» ժամանակահատվածում երկրագնդի քաղաքական քարտեզը բաժանված էր «Երեք աշխարհների», որում համաշխարհային քաղաքականությունը հանգեցվում էր ժողովրդավարության ու ամբողջատիրության միջև հակամարտության:

Այսօր այդ դասակարգումը հնացած է՝ մասնավորապես կապված այնպիսի քաղաքական գործընթացների հետ, ինչպես կոմունիզմի փլուզումը, Արևելյան Ասիայի հզորացումը և քաղաքական իսլամի կայացումը: Այսօր դեռևս պարզ չէ, թե ինչ են նշանակում այդ փոփոխությունները՝ արևմտյան լիբերալ դեմոկրատիայի համաշխարհային հաղթարշավ, թե՞ ժամանակակից աշխարհի հետագա քաղաքական ֆրագմենտացիա⁵:

Ժամանակակից պետություններին բնորոշ է կառավարման երկու ձև՝ հանրապետություն և միապետություն⁶:

Պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին», «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքներով նույնպես ձևավորվեց և մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը գործում էր պետական կառավարման մի այնպիսի «հիֆրիդային» համակարգ, որն իր մեջ ներառում էր ինչպես միայն խորհրդային (սովետական) կառավարմանը, այնպես էլ նախագահական և խորհրդարանական կառավարմանը բնորոշ հատկանիշներ:

Նախատեսվում էին, մասնավորապես, նախագահի և փոխնախագահի պաշտոններ (ինչը հատկանշական է նախագահական կառավարման ձևի համար) և վարչապետի պաշտոն (ինչը բնորոշ է կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերին): Ավելին, նախարարների խորհրդի (կառավարության) նախագահի պաշտոնի առկայության պայմաններում, «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, հենց Հանրապետության նախագահն էր ղեկավարում կառավարության գործունեությունը և նախագահում կառավարության նիստերին:

Պատմության ընթացքում մեծ հետաքրքրություն է ներկայացրել քաղաքական կյանքի և հատկապես պետության տիպաբանության խնդիրը: Պետության առավել վաղ և թերևս հայտնի տիպաբանությունն իրականացրել է Արիստոտելն իր «Պոլիտիկա» աշխատության մեջ (Ք.ա. 4-րդ դ.). հունական պոլիսների ուսումնասիրությամբ նա տարբերակում է պետության ճիշտ և սխալ ձևեր: Ճիշտ է համարում այն պետությունները, որոնց իրական նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ սխալ է

⁵ Տե՛ս Хейвуд, Э., էջ 28:

⁶ Տե՛ս Додонов В. Н., Ермаков В. Д., Крылова М. А., էջ 91:

համարում այն պետությունները, որոնք մղված են միայն կառավարիչների բարիքի ապահովմանը: Ըստ Արիստոտելի՝ պետական կարգն այն է, երբ տիրապետում է օրենքով հաստատված իշխանությունը: Համընդհանուր բարիքի չափանիշից բացի կիրառում է նաև կառավարումն իրականացնող անձանց թվի չափանիշը. մե՞կն է կառավարում, մի քանի՞սը, թե՞ շատերը⁷:

Ճիշտ կառավարման ձևերին է դասվում միապետությունը (թագավորությունը), արիստոկրատիան (լավագույների կառավարումը) և պոլիտեան (շատերի կառավարումը), որոնք հղված են համընդհանուր բարիքին: Յուրաքանչյուր ճիշտ ձևին հակադրում է մեկ սխալ ձև. տիրանիա (հղված միայն կառավարողի բարիք), օլիգարխիա (հղված կառավարող հարուստների բարիք) և դեմոկրատիա (հղված կառավարող բազում աղքատների բարիք) (Аристотель):

Պետական կառավարման ձևերը բարդ ու բազմաբնույթ են, սակայն հիմնականում դրանք կարելի է բաժանել մի քանի հիմնական կատեգորիաների, որոնք կախված են պետության կառավարման բնույթից և հասարակության պահանջներից: Որպես նման տիպերի օրինակներ՝ կարելի է նշել և՛ ժամանակակից, և՛ պատմական համակարգեր:

Դեմոկրատիան այնպիսի պետական կառավարման ձև է, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն ընտրում է իր առաջնորդներին ազատ ընտրություններով, և այն իրականացվում է բազմաթիվ տարբեր ձևերով:

Դեմոկրատական կառավարման ձևերը ենթադրում են ազատություն, հավասարություն, օրենքի գերակայություն և քաղաքացիների մասնակցություն պետական գործընթացներին: Դեմոկրատիան կարող է լինել ուղիղ կամ միջնորդավորված՝ կախված նրանից, թե քաղաքացիները վերականգնում են իրենց իշխանությունն անմիջապես (ուղիղ ժողովրդավարություն) կամ ընտրում են ներկայացուցիչներ, ովքեր կառավարում են նրանց փոխարեն (միջնորդավորված ժողովրդավարություն)⁸: Օրինակ՝ Միացյալ Նահանգների նախագահական համակարգը կամ Հայաստանի խորհրդարանական համակարգը:

Ապարատային կամ բյուրոկրատական կառավարման ձև: Այս տեսակը հատուկ է այնպիսի համակարգերին, որտեղ պետության պաշտոնյաներն ամենակարևոր գործոններն են: Ապարատային կառավարմանը բնորոշ է կոշտ կանոնակարգերի պահպանումը, և պաշտոնյաները պատասխանատու են ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական ու տնտեսական հարցերի լուծման համար: Մա սովորաբար կապված է շատ կառուցվածքային և վարչական գործընթացների հետ, որոնք պետք է հետևեն դրված կանոններին: Այստեղ ավելի կարևոր է աշխատանքի կազմակերպումը, քան քաղաքական գործիչների կամ քաղաքացիների ցանկությունները⁹:

⁷ Տե՛ս Сморгунов Л. В., էջ 93:

⁸ Տե՛ս Ա. Զալիյան, Պետական կառավարման համակարգերի տեսակներն ու առանձնահատկությունները Եր. 2021 էջ 47:

⁹ Տե՛ս Ա. Զալիյան, Մոտորումներ պետական կառավարման բարեփոխումների և պետական ծառայության զարգացման մասին Եր. 2020 էջ 11:

Ազգային կամ միանձնյա կառավարման ձև (Դիկտատուրա): Այս կառավարման ձևը ենթադրում է, որ պետությունը ղեկավարում է մեկ անձ, որի իշխանությունը չի սահմանափակվում ոչ մի օրենքով կամ հաստատությամբ:

Դիկտատուրայում իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած է մեկ մարդու ձեռքում, և քաղաքացիների իրավունքն ու ազատությունները սահմանափակվում են:

Իշխանության ղեկավարը որոշումներ ընդունում է առանց հանրային քննարկման կամ ընտրական ընթացակարգերի¹⁰:

Նախագահական կառավարում: Նախագահական համակարգը բնորոշ է այն երկրներին, որտեղ պետության նախագահը կատարում է ն՝ գործադիր, ն՝ աջակցող դերեր, այնուամենայնիվ, կարող է նաև լինել սահմանափակված խորհրդարանական վերահսկողությամբ:

Նախագահական կառավարման ժամանակ նախագահի լիազորությունները լինում են ավելի լայն, քան խորհրդարանական համակարգերում:

Նախագահը շատ հաճախ ընտրվում է ժողովրդի կողմից, և նրա իշխանությանը չի գուցորդում խորհրդարանը կամ այլ մարմին:

Խորհրդարանական կառավարման ձևում իշխանության մեծամասնությունը խորհրդարանի ձեռքում է:

Այս համակարգում կառավարության ձևավորումն ու գլխավորի նշանակումը հիմնականում կախված են խորհրդարանական ընտրություններից: Նախագահի պաշտոնը կարող է լինել հիմնականում խորհրդանշական կամ սահմանափակ, մինչդեռ կառավարության ղեկավարումն իրականացնում է վարչապետը, որն ընտրվում է խորհրդարանի կողմից:

Քաղաքական համակարգի երկու հիմնական խմբերի բաժանումը, մի շարք հատկանիշներով պայմանավորված, քաղաքական համակարգերի հետազոտման հնարավորություն չէր տալիս: Միաչափ չափանիշները միավորում էին քաղաքական համակարգի տիպերի պարունակային կողմը: Ուստի առաջացան քաղաքական համակարգի տարբեր բնութագրական գծերի համադրման հիմքով տիպաբանություններ: Տիպերի դասակարգման չափանիշների քանակից ելնելով՝ առանձնացվում են *երկչափ և բազմաչափ* կոորդինատային համակարգեր:

Երկչափ կոորդինատային համակարգի լավ տարբերակ է առաջադրում **Ռ.Դալը**՝ այն դնելով պոլիարխիայի էմպիրիկ հիմքում, որը բավական պարզ է և էմպիրիկ համեմատական վերլուծության հիմնական հասկացությունների և հիպոթեզների համար լավ միջոց է: Դալի տիպաբանությունը դասվում է ապրիորի (փորձի վրա չհիմնված) և կոնցեպտուալ տիպաբանությունների շարքին: Այն առաջադրվում է «Պոլիարխիա, Մասնակցություն և ընդդիմություն» գրքի (1971) առաջին մասում¹¹:

¹⁰ Տե՛ս Ա.Զալինյան, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» գիտական աշխատությունների ժողովածու, Եր. 2021 էջեր 10-21:

¹¹ Տե՛ս Дэлъ Р., էջ 427-455:

Դալը իր քաղաքական համակարգի իդեալական տիպերը կերտում է երկու չափանիշների հիման վրա: Առաջինը վերաբերում է թույլատրելի ընդդիմությանը կամ քաղաքական մրցակցությանը: Երկրորդը վերաբերում է իշխանության համար հրապարակային մրցակցության գործընթացի մեջ բնակչության մասնակցությանը:

Երկու չափանիշներն էլ դիտարկվում են որպես փոփոխականներ և արտահայտվում են համապատասխանաբար թույլատրելի ընդդիմության և քաղաքական մրցակցության աստիճանով և հրապարակային մրցակցության համակարգին մասնակցելու մարդկանց համամասնությամբ:

Համակարգերի տիպերը բաժանվում են այս չափանիշների առկայության կամ բացակայության հիմքով:

Համաձայն առաջարկած չափորոշիչների՝ առանձնացվում է քաղաքական համակարգի չորս տիպ: Եթե ընդդիմություն և քաղաքական մրցակցություն չկա կամ մոտ է զրոյին, իսկ հրապարակային պայքարին մասնակցելու իրավունք ունեցողների համամասնությունը փոքր է, ապա այդ համակարգը «փակ գերիշխանություն» է:

Փոքր մրցակցության և մեծ մասնակցության դեպքում խոսքը վերաբերում է «ներառող գերիշխանությանը»: Մեծ մրցակցության և փոքր մասնակցության համադրումը «մրցակցային օլիգարխիան» է: Իսկ զգալի մրցակցության և մասնակցության դեպքում առաջանում է «պոլիարխիան»: Սովորաբար հնչեցվող դեմոկրատական քաղաքական համակարգին համապատասխանում է պոլիարխիա հասկացությանը: Իրական քաղաքական համակարգերը Դալի սխեմայի մեջ տեղադրելիս թերևս ուղղանկյան մեջ կենտրոնական դիրքում կհանգրվանեն¹²:

Քաղաքական համակարգի տիպաբանության կառուցման որոշ դեպքերում կիրառվում են նաև ընդհանուր հասարակությանը վերաբերող ցուցանիշներ՝ տնտեսական զարգացում, սոցիալ-տնտեսական անհավասարություն, սոցիալական և մշակութային դեֆորմացվածություն: Նման տիպավորման վառ օրինակ է առաջարկում Արենդ Լեյպհարտը: Նա անդրադառնում է կայուն քաղաքական դեմոկրատիայի վերլուծությանը: Ըստ նրա՝ կայուն դեմոկրատիայի պայմաններում բնակչության դիֆերենցացման գործոնը բացատրվում է քաղաքական էլիտայի վարքով:

Հասարակական կառուցվածքում սեզմենտավորումը (հատվածավորումը) և ենթամշակութային պառակտումները կարող են կոմպենսացվել քաղաքական էլիտայի ջանքերով: Այդպիսի իրավիճակ է առկա Նիդեռլանդներում, Բելգիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում, ուր էլիտաները գործում են համատեղ, որ սոցիալական դիֆերենցվածության դերը նվազեցնեն:

Էլիտաները նաև կիրառում են ենթահամակարգերի արժեքները սեփական հեղինակության բարձրացման համար, ուստի և մեծանում է հավանականությունը, որ էլիտաների միջև պայմանավորվածությունը կընդունվի բնակչության կողմից:

¹² Տե՛ս Նույն տեղում՝ էջ 427-455:

Ըստ այդմ՝ Լեյպհարտը կառուցում է դեմոկրատական համակարգերի իր տիպաբանությունը: Նա կիրառում է երկու չափանիշ. հասարակության կառուցվածքը միատա՞րր է, թե՞ պլյուրալիստական, Էլիտայի վարքը թշնամակա՞ն է, թե՞ կոալիցիոն:

Արդյունքում՝ առաջ է քաշում 4 տիպ: Միատարր սոցիալական կառուցվածք և քաղաքական մշակույթ ունեցող դեմոկրատիան թերևս ստաբիլ կլինի: Այդ պայմաններում բազմաքանակ կոալիցիաներ են կազմվում հասարակության տարբեր մակարդակներում:

Լեյպհարտը հավանական է համարում բողոքի այլ ձևերի ի հայտ գալը (ապաքաղաքականացված դեմոկրատիա):

Կոալիցիոն համակարգերում երկակի ֆունկցիաներ են առկա: Մի կողմից՝ մեծ է հավանակությունը պառակտման, իսկ մյուս կողմից՝ տարբեր ենթահամակարգերի Էլիտաների համագործակցմամբ հնարավոր է կայունության հաստատում: Մա կոչվում է համագործակցային դեմոկրատիա, երբ Էլիտաները գործում են ողջ հասարակության արժեքների հիմքով առաջնորդվելով և պատրաստակամ են պահպանել երկրի ամբողջականությունը: Համագործակցությունը կերտվում է վստահության և կոմպրոմիսի հիմքով:

Կենտրոնախույս համակարգերում անկայունության վտանգը մեծ է, ինչը կապված է պլյուրալիստական արժեկողմնորոշման և Էլիտաների անհամագործակցային ուղղվածության հետ¹³:

Բլոնդելը քաղաքական կառավարման ձևերի իր դասակարգումն է առաջարկում, որն առանձնացվում է մեծ թվով փոփոխականների առկայությամբ: Խմբավորման համար նա օգտագործում է 3 փոփոխականներ՝ քաղաքական մրցակցություն, Էլիտայի կառուցվածք և բնակչության քաղաքական մասնակցություն: Քաղաքական մրցակցությունը գնահատվում է բաց կամ փակ լինելու հանգամանքով, ինչը կապված է ընդդիմության գործառնման հնարավորության հետ: Էլիտայի կառուցվածքի առանձնացումը կատարվում է Էլիտայում ենթախմբերի առկայության և ինքնուրույնության հիմքով, ըստ այդմ՝ տարբերակում է մոնոլիտ և դիֆերենցացված Էլիտաներ: Քաղաքական մասնակցությունը բնութագրվում է քաղաքական կյանքում բնակչության ընդգրկվածության աստիճանով, ըստ որի՝ բաժանում է ինկլյուզիվ (ներառող) և էքսկլյուզիվ (բացառող) համակարգեր:

Այս փոփոխականների համադրմամբ առաջ է քաշում քաղաքական համակարգի 6 տիպ՝ ավանդական, էգալիտար-ավտորիտար, ավտորիտար-բյուրոկրատական, ոչ էգալիտար ավտորիտար, մրցակցող-օլիգարխիա, լիբերալ դեմոկրատական:

Ավանդական համակարգը բնութագրական է միապետական ռեժիմներին, ուր իշխում է փակ մոնոլիտ ընտրանին, իսկ բնակչության մասնակցությունը քաղաքական գործընթացներին բացառված է: Միապետի չտարանջատված իշխանություն առկա է

¹³ Տե՛ս Նույն տեղում՝ էջ 427-455:

միայն վեց երկրում՝ Բահրեյն, Բրունեյ, Օման, Քաթար, Սաուդյան Արաբիա, ԱՄԷ, իսկ Սվազիլենդում դեռևս առկա է «պառլամենտ»:

Ավտորիտար բյուրոկրատական համակարգի օրինակ կարող են ծառայել 1970-80-ականների Լատինամերիկյան զինվորական ռեժիմները (Չիլի, Արգենտինա, Ուրուգվայ), ուր իշխում է ուղղակի կամ անուղղակի զինվորական ռեժիմը, բնակչության մասնակցությունը խիստ սահմանափակված է, և մեծ է պետության բյուրոկրատական ապարատի դերը:

Մրցակցող օլիգարխիայի համակարգը լայն տարածում ունի անցյալում: Քանի որ շատ երկրներում էլիտաների մրցակցությունը նախորդել է բնակչության քաղաքական մասնակցությանը: Այսօր դա գոյություն ունի այն երկրներում, ուր իշխանության համար պայքարում բնակչությունն ընդհանուր առմամբ ազդեցություն չունի: Օրինակ՝ Տոնգոյում և Արևմտյան Սամոայում կուսակցություններ չկան, իսկ օրենսդիր իշխանության մարմինները ձևավորվում են տարբեր հայտնի կլանների կողմից:

Էզալիտար ավտորիտար համակարգին կարելի է դասել նախկին սոցիալիստական ձամբարի երկրները, ուր առկա էր հարաբերականորեն մոնոլիտ ընտրանի, բնակչությունը մոբիլիզացվում էր ռեժիմին աջակցելու համար՝ քաղաքական մասնակցության զանգվածային որոշակի ձևերով: Գերիշխում էր սոցիալական հավասարության գաղափարը: Այսօր այս տիպին են դասվում Չինաստանը, Հյուսիսային Կորեան, Կուբան:

Ոչ էզալիտար ավտորիտար համակարգերն առկա էին այն երկրներում, ուր հաստատվել էին ֆաշիստական ռեժիմներ (Գերմանիա, Իսպանիա, Իտալիա):

Լիբերալ դեմոկրատական համակարգեր առկա են ժամանակակից եվրոպական երկրներում (Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում, Ֆրանսիայում և այլն), ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Ճապոնիայում, Նոր Զելանդիայում:

Այս բաժանումները ցույց են տալիս պետության կառավարման ձևերի բազմազանությունը և դրանց տարբերությունները: Ամեն մի կառավարման ձև ունի իր առանձնահատկությունները, որոնք որոշվում են յուրաքանչյուր երկրի մշակույթով, պատմությամբ և քաղաքական համակարգով:

Եզրակացություն

Ամփոփելով պետական կառավարման ձևերի ազդեցությունը հասարակության վրա հոդվածի վերաբերյալ աշխատանքը՝ գալիս եմ հետևյալ եզրահանգումներին.

1. Կառավարման համակարգը մեծ ազդեցություն է թողնում հասարակության կյանքի բոլոր կողմերի վրա. այն ձևավորում է մարդկանց արժեքները, հնարավորությունները, տնտեսական և սոցիալական պայմանները: Ահա մի քանի հիմնական ուղիներ, թե ինչպես է դա դրսևորվում.

2. Պետական կառավարման ձևերը տարբեր կերպ կարող են ապահովել երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունությունը: Դեմոկրատական համակարգերն ավելի մեծ ճկունություն են ապահովում, որտեղ քաղաքացիներն ու

ժողովրդավարական ինստիտուտները կարող են կանխել իշխանության չարաշահումը, մինչդեռ դիկտատուրաները կամ բյուրոկրատական համակարգերն ավելի կենտրոնացված են, բայց կարող են բերել կառավարման ծանրաբեռնվածության կամ չարդարացված ուժի կիրառման:

3. Քաղաքացիական ազատություններ և իրավունքներ.

Ժողովրդավարական համակարգերում մարդիկ սովորաբար ունեն խոսքի, մամուլի, հավաքների ազատություն, ընտրելու և ընտրվելու իրավունք: Իսկ ավտորիտար համակարգերում այդ ազատությունները սահմանափակված են, ինչը կարող է հանգեցնել վախի մթնոլորտի և պասիվության:

4. **Տնտեսական զարգացում և սոցիալական հավասարություն.** Կառավարման արդյունավետ համակարգերը հնարավորություն են տալիս խթանել ներդրումներ, աշխատատեղեր ստեղծել և ապահովել ավելի հավասար բաշխում: Մյուս կողմից՝ կոռումպացված կամ ոչ թափանցիկ կառավարումը խոչընդոտում է տնտեսական աճին և խորացնում սոցիալական անհավասարությունը:

5. **Կրթություն և մշակույթ.** Կառավարության քաղաքականությունները որոշում են կրթական համակարգի որակը, մշակույթի աջակցությունը և գիտելիքի տարածման հնարավորությունները: Ազատ և աջակցող միջավայրում զարգանում են ստեղծագործությունն ու նորարարությունը:

6. **Անվտանգություն և արդարություն.** Իրավական պետությունում գործում է օրենքի գերակայություն, ինչը մեծացնում է վստահությունը պետության նկատմամբ: Իսկ թույլ կամ անարդար կառավարման համակարգերը հաճախ բերում են անապահովության ու անարդարության զգացողության:

7. **Հասարակական ակտիվություն և վստահություն.** Եթե կառավարման համակարգը բաց է ու հաշվետու, ապա մարդիկ ավելի շատ են ներգրավվում հասարակական ու քաղաքական կյանքում: Իսկ փակ ու ճնշող համակարգերը հանգեցնում են թերահավատության, օտարացման ու հասարակական պասիվության:

Հետևապես՝ կառավարման համակարգը ոչ միայն որոշում է քաղաքական կառույցների գործառնությունը, այլև ուղղակիորեն ձևավորում է մարդկանց առօրյա կյանքը, հասարակության արժեքներն ու ապագան:

Այս եզրահանգումներն ընդգծում են, որ պետական կառավարման ձևը ոչ միայն ձևավորում է երկրի քաղաքական համակարգը, այլև ազդում է հասարակության զարգացման, պետական կայունության և քաղաքացիական ազատությունների վրա:

THE CONTEMPORARY MAIN FORMS OF PUBLIC ADMINISTRATION

VARDERESYAN SHUSHANIK

*Senior patrolman, senior lieutenant of the RA Ministry
of Internal Affairs Police, applicant of the Institute
of Philosophy, Sociology and Law of the National Academy
of Sciences of the Republic of Armenia*

Summary: This article aims not only to analyze the existing forms of state governance, but also to understand their impact on society - to what extent they contribute to the protection of citizens' rights, social justice, economic stability and general well-being. Changing geopolitical and economic situations around the world often force states to adapt to new challenges and transform their governance models for further stability and global competitiveness.

Therefore, within the framework of the article, it is important to identify what external and internal factors influence the choice of state governance methods.

Today, forms of state governance have become not only a target topic in discussions related to the state system, but also have a key importance in development processes.

The study of the topic is important, as it provides an opportunity to understand how existing governance systems are able to respond to modern challenges, and what steps need to be taken to ensure that forms of state governance are effective and sustainable in our current conditions.

Keywords: Public administration, form of state, forms of government, monarchy, politeia, aristocratic democracy, presidential republic.

ВЛИЯНИЕ ФОРМ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ НА ОБЩЕСТВО, ПРЕИМУЩЕСТВА И НЕДОСТАТКИ

ВАРДЕРЕСЯН ШУШАНИК

*Старший патрульный, старший лейтенант
полиции МВД РА, соискатель Института
философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения*

Аннотация: Целью данной статьи является не только анализ существующих форм государственного управления, но и понимание их влияния на общество - в какой степени они способствуют защите прав граждан, социальной справедливости, экономической стабильности и всеобщему благосостоянию. Изменение геополитической и экономической ситуации в мире часто заставляет государства адаптироваться к новым вызовам и трансформировать свои модели управления для будущей стабильности и глобальной конкурентоспособности. Поэтому в рамках статьи важно выявить, какие внешние и внутренние факторы влияют на выбор методов государственного управления.

Формы государственного управления сегодня стали не только целевой темой дискуссий, связанных с государственным устройством, но и имеют ключевое значение в процессах развития.

Изучение темы важно, поскольку дает возможность понять, как существующие системы управления способны реагировать на современные вызовы, и какие шаги необходимо предпринять, чтобы сделать формы государственного управления эффективными и устойчивыми в современных условиях.

Ключевые слова: Государственное управление, Форма государства, Формы управления, Монархия, Полиция, Аристократическая демократия, Президентская республика.

*Հոդվածը գրված է 19.09.2025
Ներկայացվել է տպագրության 24.09.2025*

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՑԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ֆանարջյան Լիլիթ

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան,

«Երբադույս» ՓԲ ընկերության տնօրենի խորհրդական

DOI: 10.63925/18294847-2025.op20-10

Ամփոփագիր: Իրավական համակարգի անցումային և կայուն վիճակների տարբերակումն անհրաժեշտ է իրավունքի զարգացման դինամիկայի ընկալման համար: Անկայուն (անցումային) շրջանում իրավական համակարգի բաղադրիչները (օրենքը, իրավագիտակցությունը, իրավական ինստիտուտները) փոփոխության են ենթարկվում՝ արձագանքելով սոցիալական, քաղաքական, տնտեսական փոփոխություններին: Այս շրջանը բնորոշվում է արժեքային փոփոխություններով, հակասություններով և լեգիտիմության խնդիրներով, որոնք առաջանում են նոր իրավական կարգավորումների ձևավորման ընթացքում:

Անցումային իրավական համակարգի կարևոր առանձնահատկություններն են՝ կառուցվածքային տրանսֆորմացիան՝ երբ իրավական համակարգի բաղադրիչները ենթարկվում են որակական փոփոխությունների՝ հարմարեցվելով նոր հասարակական պահանջներին, իրավական ճգնաժամը և հակասությունները, քանի որ անցման շրջանում առաջանում են իրավական անորոշություն, նորմերի բխումներ և իրավակարգավորման խնդիրներ, լեգիտիմության ճգնաժամ, որտեղ նոր իրավական կարգավորումների ընկալումն ու ընդունումը ժամանակ են պահանջում, ինչը հանգեցնում է հասարակության և պետության միջև լարվածության, իրավական համակարգի դանդաղ հարմարվողականությունը, քանի որ քաղաքական ու սոցիալական փոփոխություններն ավելի արագ են տեղի ունենում, քան իրավական համակարգի ադապտացիան, նոր իրավական ինստիտուտների ձևավորումը, քանի որ անցումային շրջանում ձևավորվում են նոր իրավական երևույթներ և ինստիտուտներ, որոնք որոշակի ժամանակում կարող են դառնալ կայուն իրավական կարգավորման մասը:

Այսպիսով՝ իրավական համակարգի անցումն անխուսափելի գործընթաց է, որը պայմանավորված է հասարակության փոփոխություններով և ուղեկցվում է ինչպես իրավական կառույցների վերակազմավորմամբ, այնպես էլ իրավակարգավորման ճգնաժամով:

Բանալի բառեր: իրավական համակարգ, անցումային շրջան, կայունություն, իրավագիտակցություն, սոցիալական փոփոխություններ, օրենքի գերակայություն, լեգիտիմություն, իրավական ռեֆորմ, իրավունքի սկզբունքներ, սահմանադրական կարգ:

Ներածություն

Իրավական համակարգի հասկացության ուսումնասիրությունը կարևոր է՝ հասկանալու դրա փոփոխական բնույթն ու զարգացման փուլերը: Իրավական համակարգը դինամիկ երևույթ է, որը ձևավորվում և փոփոխվում է հասարակական հարաբերությունների զարգացմանը համապատասխան: Իրավական համակարգի փոփոխությունը հատկապես ակնառու է անցումային շրջաններում, երբ հասարակությունը նոր սոցիալական, տնտեսական և քաղաքական պայմանների ազդեցությամբ վերակառուցում է իր իրավական կառուցվածքը:

Հոդվածում վերլուծվում են իրավական ոլորտում անցումային շրջանի սկսման պայմանները, ինչպես նաև իրավական համակարգերի հիմնարար փոփոխությունները՝ հաշվի առնելով անցումային իրավական համակարգի նշանների բացահայտումը:

Անցումային շրջանում իրավական համակարգը ենթարկվում է կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխությունների՝ նոր հասարակական իդեալներին և ռազմավարություններին հարմարվելու նպատակով: Այս գործընթացում կարևոր դեր ունեն իրավական համակարգի բաղադրիչները, որոնք վերակազմավորվում են՝ ապահովելով իրավական իրականության վերափոխումը:

Այս ուսումնասիրության նպատակն է բացահայտել անցումային շրջանի իրավական համակարգի առանձնահատկությունները, դրա ձևավորման մեխանիզմները և գործոնները, որոնք պայմանավորում են իրավական համակարգի կայունացում կամ ձգնաժամային զարգացում:

Հիմնական հետազոտություն

«Իրավական համակարգ» հասկացության սահմանման համար կարևոր է «կայուն ժամանակաշրջանի իրավական համակարգ» և «անկայուն (անցումային) շրջանի իրավական համակարգ» կատեգորիաների ճշտգրիտ որոնումը: Հասարակության զարգացման անցումային էվոյուցիոն փուլում օրենքը, իրավագիտակցությունը և իրավական համակարգի այլ բաղադրիչները շարունակում են գոյություն ունենալ, բայց դրանք այլևս նախկինում եղած երևույթները չեն. անցումային պայմանները ծնում են նոր իրավական երևույթներ կամ գոնե բացահայտում դրանք: Իրավական համակարգի վերափոխման սկզբնական խթանը, որպես կանոն, արտաքին միջավայրի փոփոխություններն են՝ չնայած նրան, որ արտաքին միջավայրի փոփոխությունները կարող են տեղի ունենալ՝ անկախ իրավականից: Փոփոխվող սոցիալական միջավայրում անփոփոխ իրավական համակարգի երկարաժամկետ գոյությունն ուղղակի անհնար է, քանի որ վերջիններս առաջացնում են իրավական համակարգի բաղադրիչների ֆունկցիոնալ փոփոխություններ:

Հասարակությունը մի որակական վիճակից մյուսը կարող է տեղափոխվել միայն սոցիալական կյանքի բոլոր ոլորտների վրա ազդող համակարգային վերափոխումների միջոցով: Հասարակության նոր կարիքների առաջացմանն ի պատասխան՝ ժամանակին և հաջողակ իրավական կարգավորման դեպքում հիմնարար սոցիալական վերափոխումները կարող են նաև ընդհանրապես չսկսվել, քանի որ այս դեպքում հիմք չկա

ճգնաժամային իրավիճակի համար, որը ենթադրում է կործանարար երևույթների զանգված, որոնք խաթարում են զարգացման կայունությունը:

Իրավական համակարգում անցումային շրջանում իրավական համակարգի թիրախային կոդմոնոքոնումն առաջին հերթին փոխվում է հասարակության նոր իդեալներին և անցումային ռազմավարությանը համապատասխան: Անցումային երևույթներն առանց բացառության ներթափանցում են իրավական համակարգի բոլոր բաղադրիչներ՝ փոխելով դրանց բովանդակությունն ու կառուցվածքը: Իրավական համակարգի ներքին կառուցվածքային տարբերակումը մեծանում է բաղադրիչի կազմում նոր տարրերի առաջացման պատճառով (մինչդեռ բաղադրիչի ընդհանուր կազմը մնում է նույնը, քանի որ անցումային իրավիճակը չի վերացնում դրական իրավունքը, իրավագիտակցությունը, իրավական ձևավորման և իրավական իրականացման գործընթացները՝ որպես այդպիսին, այլապես իրավական համակարգը կկործանվեր):

Այս փոփոխությունների սկզբնական ելակետը երբեմն համարվում է օրենքի գերակայությունը¹: Սակայն անցումային գործընթացն ի սկզբանե առաջանում է որպես գաղափար, որը մարմնավորված է հասարակության իրավական գիտակցության մեջ: Հետևաբար, իրավական համակարգի առաջին բաղադրիչը, որն արտացոլում է հասարակության որակական փոփոխությունները, *իրավագիտակցությունն է*:

Անցումային շրջանում իրավական համակարգի գրեթե բոլոր բաղադրիչները՝ բաղադրիչների միջև կապի մեթոդը, վերարտադրության տեսակը և մոտիվացիայի մոդելները, փոխվում են: Հասարակական կյանքի պատմականորեն ձևավորված իրավական ազդեցության հատուկ ձևերը մարում են, փոխվում են պետության և հասարակության օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության առաջնահերթությունները: Իրավական բազմաթիվ երևույթներ կորցնում են իրենց նախկին նշանակությունը: Այս առումով դժվար է համաձայնել այն կարծիքի հետ, որ անցումային շրջանում իրավական համակարգի և իրավունքի գործառույթները կարող են փոխարինվել այլ գործառույթներով²: Ցանկալի է հասկանալ սոցիալապես նշանակալի օբյեկտի գործառույթները՝ որպես նրա գործողության հիմնական, մշտական ուղղություններ: Միայն իրավական համակարգի գործառույթների կայունության վրա կենտրոնանալով կարելի է խուսափել այս հայեցակարգն իրավական համակարգի խնդիրներով, ժամանակավոր սուբյեկտիվ ուղեցույցներով փոխարինելուց: Օրենքի և որպես ամբողջության՝ իրավական համակարգի գործառույթները հաստատուն են եղել իրենց ստեղծման օրվանից: Ժամանակի ընթացքում գործառույթների փոփոխությունները ենթադրում են միայն դրանց ծավալի ընդլայնում կամ նեղացում, այլ ոչ թե նորերի առաջացում կամ հների մահ:

¹ St' u Berman H.J. Law and Revolution. The Formation of the Western Legal Tradition. Cambridge and London, 1983. էջ 34.

² St' u Питер Г. Соломон. Проблемы развития правового строя в постсоветской России. М., 1997. էջ 50.

Իրավական համակարգի բաց լինելու շնորհիվ նորարարությունները մշտապես բարձրացնում են վերջինիս բազմազանության աստիճանը: Նոր երևույթներ ի հայտ գալը տեղի է ունենում շարունակաբար, բայց ամեն նոր երևույթ չէ, որ կարող է որակապես դեֆորմացնել հասարակության իրավական իրականությունը: Հետևաբար, անցումային շրջանի իրավական համակարգի բովանդակությանը և օրինաչափությունների որոշմանը պետք է նախորդի իրավական ոլորտում անցման պատճառների վերլուծությունը: Իրավական համակարգի անցման սկզբնական պայմանների բնութագրումը թույլ կտա պատասխանել այն հարցին, թե ինչու է իրավական համակարգի միատարր վիճակը կորցնում կայունությունը:

Սոցիալական համակարգերի ուսումնասիրության կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցման կողմնակիցները՝ Թ. Փարսոնսը և Ռ. Բելլան, առանձնացնում են իրավական համակարգի միատարր վիճակի փոփոխությունների երկու հիմնական պատճառ՝ համակարգերի բաղադրիչ կազմի աճող տարբերակման անհավասարակշռության միտումները և լարվածությունը, որն առաջանում է սոցիալական համակարգի նորմատիվ և կառուցվածքային տարրերի միջև³: Տվյալ դեպքում հեղինակները չեն անդրադարձել սոցիալական համակարգի բարդության կարևորության ճանաչման և նույն բարդության մեջ վտանգավոր միտումների հայտնաբերման հակասությանը: Խնդիրը համակարգի բարդության սահմանի հստակ չափանիշների բացակայությունն է:

Իրավական համակարգի տարբերակումը մեծացնում է նրա զգայունությունն արտաքին միջավայրի ազդեցության նկատմամբ և ապահովում շրջակա միջավայրին հարմարվելու ավելի մեծ կարողություն: Այնուամենայնիվ, նման տարբերակումը չպետք է ենթադրի անհամատեղելի, տիպաբանորեն տարասեռ իրավական երևույթների համակեցություն: Ըստ Վ.Ֆ. Վենդայի՝ «Եթե համակարգը գոյություն ունեցող կառույցի պայմաններում հասել է իր առավելագույն արդյունավետությանը, ապա դրանց հետագա աճը հնարավոր է միայն համակարգի կառուցվածքի փոփոխության դեպքում»⁴: Ցավոք, հայտնի անցումային իրավական համակարգերի բոլոր ելակետերը վկայում են այն մասին, որ նախորդ իրավական համակարգերի դրական ռեսուրսներն ու պոտենցիալ հնարավորությունները պարզապես չէին կարող արդյունավետ խթան լինել հասարակության նոր կարիքների լուծման համար:

Յու. Գ. Էրշովը նշում է անցումային շրջանի սկիզբը՝ որպես նոր տեսակի երևույթների զարգացման «հիմնական նախադրյալների առաջացում»⁵: Նկատենք, որ նոր երևույթների ձևավորման նախադրյալները դեռևս իրենք երևույթները չեն, ավելին, նրանք ի վիճակի չեն որակապես վերափոխելու շրջապատող իրականությունը, քանի դեռ չկան անընդհատ վերարտադրվող նոր ինստիտուտներ, որոնք հակադրվում են հներին:

³St' u Parsons T. The Evolution of Societies. New Jersey, 1977. էջ 31.

⁴St' u Венда В.Ф. Волны прогресса. М., 1989. էջ 39.

⁵St' u Ершов Ю.Г. Человек. Социум. История (социально-философские проблемы теории исторического процесса). Свердловск, 1990. էր 83.

Օրինակ՝ գյուղացիների ճորտատիրության, հրապարակային մահապատիժների վերացումը, երդվյալ ատենակալների իրավունքների ընդլայնումը, օրենսդիր մարմինների ստեղծումը, «Կոոպերատիվ գործընկերային արհմիությունների մասին» հրամանագրի ընդունումը (1917 թ. մարտ), «Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների կոմիտեների մասին» օրենքը (1917 թ. ապրիլ), որը նախատեսված է աշխատանքային վեճերը լուծելու համար⁶, Ռուսաստանի ժամանակավոր կառավարության որոշումը, որով հայտարարվեց, որ «ռուսական պետությունը կառավարող պետական կարգը հանրապետական է», և հռչակեց Ռուսաստանի Հանրապետությունը⁷(1917 թվականի սեպտեմբերի 1), Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում ընդունված՝ Հայաստանի անկախության մասին հռչակագիրը (1990 թվականի օգոստոսի 23) իրավական համակարգի բաղադրիչների պարզ բարելավման մասին չէ, քանի որ հռչակված նպատակներն ավելի խորն են հասարակության իրավական հիմքերի որակական զարգացման մեջ: Ինչպես նշել է Ա. Ի. Պրիգոժինը. «Անցումային գործընթացն իր բովանդակությամբ ներառում է անցյալի, նրա ժխտված տարրերի հաղթահարում, նոր նպատակներ ու իդեալներ առաջ քաշելը և դրանց ուղղությամբ շարժվելու ուղիների մշակումը»⁸: Այսպիսով՝ իրավական համակարգի արմատական վերափոխման սկզբնական օղակն արժեքային փոփոխությունն է. նոր նպատակների ազդեցության տակ նրա հիմնական բաղադրիչները նորովի են վերակառուցվում՝ համախմբելով և առաջացնելով սոցիալական հարաբերությունների նոր տեսակ: Իրավական համակարգի նոր թիրախային կողմնորոշումը դրսևորվում է նոր հիմնարար օրենսդրական ակտերի ընդունմամբ և սոցիալական համակարգի էական փոփոխություններով, ինչը վկայում է այն մասին, որ այս համակարգը հաղթահարել է այն սահմանային շեմը, որից անցնում է անցումային: Այս սահմանից այն կողմ իրավական համակարգը դադարում է վերարտադրել իր նախկին արտաքին միջավայրը և ինքն իրեն: Նախկին բոլոր փոփոխությունները չեն փոխում իրավական համակարգի որակը, այլ ընդհանուր, համակարգային մասշտաբով պատրաստվում են այս որակական փոփոխությանը: Ի տարբերություն բոլոր սոցիալական երևույթների՝ իրավական համակարգի զարգացման շրջադարձային պահերին (հատկապես անցման սկզբնական փուլում) իրավական համակարգը թույլ է տալիս որոշել այն պահը, երբ անհաշտ հակասություն է առաջանում հնացած իրավական համակարգի և սոցիալական նոր կարիքների միջև: Այս հակասության լուծումը տեղի է ունենում, երբ հին իրավական համակարգը հասարակության նոր պահանջները բավարարելու համար դառնում է անընդունելի, սպառվում է նրա ստեղծագործական էներգիայի պաշարը, թուլանում է համակարգի կարողությունն աջակցելու նոր

⁶ Ст. в Вестник Временного правительства. 1917. 14 сент.

⁷ Ст. в Российское законодательство X-XX вв. Т. 9. Законодательство эпохи буржуазно- демократической революции. М., 1994. էջ 129.

⁸ Ст. в Пригожин А.И. Перестройка: переходные процессы и механизмы. М., 1990. էջ 55.

սոցիալական երևույթներին: Հնացած իրավական երևույթներից մի քանիսը վերացվում են, որոշ մասն արմատապես փոխակերպվում է, մյուսները հասցվում են զարգացման բարձր աստիճանի, իսկ որոշ մասն էլ ստեղծվում է առաջին անգամ: Եվ քանի որ անցումային գործընթացը ենթադրում է առաջացման և անհետացման միասնություն, իրավական համակարգի նոր որակը մինչև անցումային շրջանի ավարտը գոյություն ունի ոչ թե որպես հաստատված նյութ, այլ որպես պոտենցիալ հնարավորություն: Անցումային իրավական համակարգի նոր որակը կարող է որոշվել նրա նպատակային կոդմոնորոշմամբ, արտաքին միջավայրի վրա իրավական ազդեցության միջոցներով և մեթոդներով, սակայն այդ որակի առկայությունը բավականին անորոշ է, հակասական: Այն դեռ պետք է հաստատվի, ամբողջությամբ դրսևորվի, ստանա ավարտուն ձև և սոցիալական արդարացված իմաստ, այսինքն՝ անցման սկզբում հռչակված նոր իրավական համակարգը դեռ պետք է ձևավորվի, ձեռք բերի ամբողջականություն:

Իրավունքի անցման գործընթացն իրականացվում է այնպիսի հակասական վիճակով, որը քայլ է հնի տարրերի հաղթահարման համար և, միևնույն ժամանակ, հանդես է գալիս որպես նոր որակի հատկությունների կրող: Այսպիսով՝ իրավական համակարգի անցումային որակը հին և նոր հատկությունների ինքնատիպ համադրություն է, որոնք միասին կազմում են նորը, և, այնուհետև, երբ արդեն ձեռք է բերվել մարդու և հասարակության նոր կենսամակարդակ, բարձրացել է տվյալ հասարակության կյանքի որակը, իրավական համակարգը կորցնում է իր անցումային հատկանիշները: Անցման սկզբնական փուլում որքան քիչ զարգացած է իրավական համակարգի էությունը, այնքան ավելի պակաս սահմանված և կայուն են ընդունված նորմատիվ իրավական ակտերը: Եվ հակառակը, որքան սուբյեկտը զարգացած լինի, այնքան ավելի հասուն, կանոնակարգված ու կայուն կլինեն իրավունքի ձևերը:

Իրավական լայնածավալ բարեփոխումների գործընթացում բացահայտվում է բարեփոխումներին խոչընդոտող կործանարար գործոններ՝ ստեղծելով իրավական հակասություններ և խաթարելով իրավական համակարգի կայուն զարգացման պայմանները: Ուստի իրավական ոլորտում անցման հիմնական հատկանիշներից անհրաժեշտ է նշել իրավական համակարգի ճգնաժամը, քանի որ անցումային գործընթացի սկիզբը և անցումային գործընթացների ողջ շրջանը չեն կարող լինել առանց կոնֆլիկտների և առանց ճգնաժամի: Եթե նախկին իրավական համակարգը բավականաչափ զարգացած և կայուն է, ապա այն կարող է տեղափոխվել այլ որակական վիճակ՝ միայն իր վիճակի ժամանակավոր էական վատթարացման գնով: Իրավական համակարգի նոր որակի անցնելու գործընթացը լի է տարբեր կոնֆլիկտային իրավիճակներով, քանի որ անցումային շրջանում ջրի երես են դուրս գալիս նախկին իրավական համակարգից ժառանգած բոլոր չլուծված իրավական խնդիրները, անհամապատասխանությունը, իրավական նորմերի անգործությունը, բացերի ավելացումը, օրենքների բախումը, իրավակարգավորման ինտենսիվությունը: Իրավական համակարգի ճգնաժամի առաջին դրսևորումն այն է, որ չնայած կարգավորող ջանքերին՝ սոցիալական գործընթացների զարգացումը հասնում է մի կետի, որտեղ սպառնում է դրա

գոյությանը: Իրավական համակարգը, կորցնելով իր նախկին արդյունավետությունն ու հակաճգնաժամային կարգավորման կարողությունը, անցումային պայմաններում կարողանում է իր դրական գործողությունն իրականացնել սահմանափակ սահմաններում: Ավելին, անցումային շրջանի իրավական համակարգը կարելի է բնութագրել որպես անկայուն: Դրա համար ոչ՝ ներքին բնական գործոններ կան, ոչ՝ էլ արտաքին բարենպաստ պայմաններ: Այնուամենայնիվ, անցումային գործընթացները երկար ժամանակ տարաձայնություններ են առաջացնում և քայքայում նախկին լավ գործող իրավական համակարգը, ինչը հանգեցնում է անկայունության և ամբողջական իրավական անհավասարակշռության: Իրավական համակարգի բոլոր բաղադրիչների փոխկախվածությունն այնպիսին է, որ դրանցից նույնիսկ մեկի հիմնարար փոփոխությունը պահանջում է հարևան բաղադրիչների փոփոխություններ՝ դրանով իսկ խաթարելով ամբողջ համակարգի կայունությունը, և համակարգային կապերը դառնում են անհավասարակշիռ, սակայն չեն կորչում, իսկ իրավական արժեքներն արժեզրկվում են:

Անցումայնությունն առաջացնում է գիտակցության և վարքի ձևերի արտասովոր տարբերություններ, անորոշություն, իրավական նորմով սահմանված ստանդարտից սուբյեկտների վարքագծի զանգվածային շեղում:

Քրեական իրավունքի գիտության մեջ հանցագործությունը դիտվում է որպես շեղված վարքի տեսակ: Բայց անցումային շրջաններում հասարակությունն ինքն է շեղվում՝ շեղվելով գործող օրենքի նորմերից, ամբողջությամբ ձեռք չբերելով նորերը: Նման հասարակության մեջ հանցագործությունների թիվը բազմապատկվում է: Ըստ Պ. Մորոկինի՝ եթե 1914 թվականին Մոսկվայում կատարված զինված կողոպուտների ու սպանությունների թիվը վերցնենք 100 միավոր, ապա 1918-1919 թթ-ին դրանք համապատասխանաբար 2850 և 1060 էին⁹, հանցավորության աճը մեծապես պայմանավորված էր նրանով, որ սոցիալական պրակտիկան ձևավորում է որոշ սոցիալական մեխանիզմներ, որոնք հակասում են գործող օրենսդրությանը դրանց օրինականացումից շատ առաջ:

Անցումային շրջանում իրավական համակարգը կարողանում է պահպանել իր համակարգային որակները, ինչը հնարավորություն է տալիս նույնականացնել իր գոյության փաստը: Անցումային իրավական համակարգի կառուցվածքային կայունությունը պաշտպանում է այն լիակատար ոչնչացումից: Իրավական համակարգի էվոյուցիոն զարգացման հայեցակարգը թույլ է տալիս նույնիսկ անհավասարակշիռ իրավական համակարգին շահավետ իրավական ազդեցություն գործադրել անցումային շրջանում՝ պահպանելով հարաբերական օրենքն ու կարգը հասարակության մեջ: Անցման էվոյուցիոն ձևով սոցիալական կյանքը շարունակում է ձևավորվել իրավական հարաբերություններում, որոնք համակարգված կերպով վերարտադրում են նոր իրավական կառուցվածքը:

⁹ St' u Сорокин П. К вопросу об эволюции и прогрессе // Вестник психологии, криминальной антропологии и гипнотизма. Т. 8. Вып. 3. Берлин, 1922. էջ. 34.

Անցումային իրավական համակարգի հաջորդ տարբերակիչ առանձնահատկությունն է դրա կառուցվածքային անավարտությունը: Մինչև անցումային շրջանի ավարտն իրավական համակարգը չի կարող ընկալվել որպես լիովին ավարտված, տիպաբանորեն ամբողջական, լիարժեք ձևավորված և կայացած: Ներքին անկարգության և անցումային անհամապատասխանության ժամանակ իրավական համակարգն առաջ է բերում փոխադարձաբար բացառող իրավական նորմերի միաժամանակյա գործողություն, որն իր հերթին չի հանգեցնում հարաբերությունների ամբողջական կարգավորմանը: Իրավունքը, համեմատած պետության հետ, ավելի պահպանողական է և շատ ավելի կայուն, քան քաղաքականությունը: Պետությունն ավելի արագ արձագանքում է հասարակական կյանքի պահանջներին ընթացիկ քաղաքականության, այլ ոչ թե իրավական կարգավորման միջոցով: Սա հանգեցնում է իրավական համակարգի ուշացման, դանդաղության, հետ մնալու նոր տիպաբանական բնույթի դինամիկ զարգացող հարաբերություններին: Ինչպես գրել է Դագելը. «Օրենքը կամ «առաջ է գնում» (այն դեպքերում, երբ հաստատվում են նորմեր, որոնց համար հասարակությունը պատրաստված չէ նյութապես կամ գաղափարապես), կամ հակասում է հասարակության զարգացման օրենքներին (եթե դրանք սխալ են ընկալվում օրենսդիրի կողմից), կամ ամենից հաճախ հետ է մնում զարգացող սոցիալական հարաբերություններից, իսկ հետո դրանց կարգավորման մեջ բացեր են առաջանում»¹⁰:

Անցումային շրջանի իրավական համակարգի հաջորդ առանձնահատկությունն այն է, որ այն ոչ լեգիտիմ է անցումային սկզբնական փուլում, իսկ հետագա փուլերում ապրում է լեգիտիմության ճգնաժամ:

Լեգիտիմությունն այն ոչ իրավական կատեգորիաներից է, որն ակտիվորեն օգտագործվում է իրավական գիտության կողմից՝ բնութագրելու իրավական ազդեցության սոցիալական հիմնավորումը: Ռուսական գիտական աշխատության հեղինակները նշում են, որ տվյալ դեպքում լեգիտիմությունը խառնվում է «իրավական գիտակցության» հասկացությանը և փաստացի փոխարինվում դրանով: Ռ.Զ. Լիվշիցը գրել է. «Օրենքի լեգիտիմությունն ամենաընդհանուր ձևով նշանակում է դրական վերաբերմունք հասարակության անդամների կողմից դրա նկատմամբ, աջակցություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ իրավաբանական անձանց կողմից»¹¹, Ն.Վ. Վարլամովը և Ն.Բ. Պախոլենկոն օգտագործեցին մեկ այլ արտահայտություն. «Լեգիտիմությունն ինքնաարդարացումն է իշխանության մեջ գտնվողների աչքում՝ իշխանության հանրային ճանաչմանը հասնելու համար, վստահություն՝ իր ղեկավարության պահանջների օրինականության և արդարացիության նկատմամբ»¹²: Իսկապես, իրավունքը, լինելով հասարակության նյութական և հոգևոր կարիքները

¹⁰ Տե՛ս Դագել П.С. Диалектика правового регулирования общественных отношений // Правоведение. 1971. №1. էջ. 53.

¹¹ Տե՛ս Լившиц Р.З. О легитимности закона // Проблемы ценностного подхода в праве: традиции и обновление. М., 1996. էջ 18-19.

¹² Տե՛ս Варламова Н.В., Пахоленко Н.Б. Между единогласием и волей большинства (политико- правовые аспекты консенсуса). М., 1997. էջ 35.

բավարարելու միջոց, ճանաչման կարիք ունի: Իրավական համակարգի լեգիտիմությունը կարելի է հասկանալ նաև որպես դրա վավերականություն, օրինականություն և արդարացիություն բնակչության մեծամասնության տեսակետներում:

Անցումային շրջանի առաջին փուլում իրավական համակարգի ոչ լեգիտիմության կոնսենսուսի առաջացումը, սոցիալական զարգացման ուղղության, պետության կառուցվածքի, նախկին հասարակական-քաղաքական համակարգի նկատմամբ բացասական վերաբերմունքի վերաբերյալ, միջոց չէ, որ ենթադրում է իրավական համակարգի արդարացի ճանաչում: Այսպիսով՝ անցումային շրջանի տարբեր փուլերում կարող են անհամապատասխանություններ առաջանալ իրավական զարգացման վերաբերյալ հանրային կոնսենսուսի և իրավական համակարգի օրինականության միջև:

Անցումային շրջանում սոցիալական տրամադրություններն աչքի են ընկնում կտրուկ պառակտումներով, երկբևեռությամբ: Մի բևեռում տրանսֆորմացիոն գործունեության էլֆորիա է, մյուսում՝ իրականացվող սոցիալական հարաբերություններից հրաժարվելը կամ սոցիալական ապատիա: Ավելին, եթե հասարակության բարեփոխման առաջին փուլերում բարեփոխումներին աջակցում է բնակչության հստակ մեծամասնությունը, ապա արմատական փոփոխությունները խորանալուն պես բարեփոխումների որոշ կողմնակիցներ վերադառնում են նախկին իդեալները դավանելուն, իսկ ոմանք ընկնում են ապատիայի մեջ, և իրավական համակարգի նման լեգիտիմությունն ստացվում է, որ սկզբունքորեն թերի և պատրանքային կլինի:

1999 թվականի կեսերի դրությամբ Ռուսաստանի քաղաքացիների երեք քառորդը հավանություն չի տվել Դաշնային ժողովի, երկրի նախագահի և կառավարության օրինաստեղծ գործունեությանը, բնակչության միայն 5%-ն է կարծում, որ գործող օրենքներն արտահայտում են իրենց շահերը և ի վիճակի են իրենց իրական իրավական պաշտպանությունն ապահովել¹³:

Ա.Ֆեոտին, բնութագրելով Ուկրաինայի իրավական համակարգը, նշել է, որ վերջին տարիներին Ուկրաինայի մի շարք իրավական ակտեր մասնավորեցման, հարկերի, գնազոյացման և սոցիալական քաղաքականության վերաբերյալ առաջացրել են քաղաքացիների սուր դժգոհությունը՝ կապված նրանց իրական վիճակի վատթարացման հետ¹⁴: Այս միտումը նկատվում է ամենուր, որտեղ իրականացվել են լիբերալ բարեփոխումներ՝ առանց հաշվի առնելու բնակչության տարբեր շերտերի շահերը, շուկայական մեխանիզմների աստիճանական ներդրումը և փոխհատուցման միջոցների մշակումը:

Եթե անցումային շրջանի առաջին փուլում իրավական համակարգի լեգիտիմությունն իրավական պատրանք է (քանի որ փորձ է արվում գնահատել իրավական

¹³ St' u Ajani G. By Chance and prestige: Legal Transplants in Russia and Eastern Europe // American journal of Comparative Law. 1999. Vol. 43. No. 1. էջ 95.

¹⁴ St' u A. Фьюти. Комментарий к Конституции Украины // Конституционное право: Восточноевропейское обозрение. 1996. №3. էջ 18.

իրականության որակապես նոր տարրերը հնացած իրավական դոկտրինայի տեսանկյունից), ապա անցման հաջորդ փուլերում հնարավոր է դառնում իրավական համակարգին հարաբերական կեսի կամ պաշտոնապես ընդունելի մեծամասնության աջակցությունը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական տեքստի ընդունմանը կողմ է քվեարկել քվեարկությանը մասնակցած ընտրողների 58,4%-ը¹⁵: Եվ ամբողջ երկիրն ստացել է Հիմնական օրենք, որի օգտին քվեարկել է ընտրողների միայն մեկ քառորդը: Այսպիսով՝ անցումային շրջանում ընդունված սահմանադրությունն ինքնին չի կարող լեգիտիմ լինել: Բացի այդ՝ լեգիտիմությունը ոչ իրավական հասկացություն է և, հետևաբար, չպետք է ենթարկվի ֆորմալ իրավական պահանջների: Իրավական արմատական բարեփոխումների գործընթացը միշտ կապված է լեգիտիմության ճգնաժամի հետ: Լեգիտիմության հայեցակարգի տեսանկյունից անցումային շրջանի հիմքը ձևավորվում է երկու փոխկապակցված գործընթացներով՝ նախկին իրավական համակարգի լեգիտիմացման և նորի լեգիտիմացման գործընթացով: Իրավական համակարգի լեգիտիմության ճգնաժամը պայմանավորված է տրանսֆորմացիոն գործունեության բռնի ձևերով, որոնք հաճախ օգտագործվում են արմատական բարեփոխիչների կողմից: Սակայն օրինականության բացակայության դեպքում իրավական համակարգը բնակչության կողմից չի կարող լեգիտիմ ընկալվել, հետևաբար, իրավունքի իրական օրինականությունը հնարավոր է միայն իրական օրինականության պայմաններում: Իրավաբանական սուբյեկտները չպետք է մշտապես հանդիպեն օրենքի տառի և դրա գործնական կիրառման միջև անհամապատասխանության: Նախկին համակարգի ոչ լեգիտիմությունը չի կարող արդարացնել իրավական նորմերի զանգվածային խախտումները, հեղաշրջումները և զինված բախումները, այլապես մեկ ոչ լեգիտիմ իրավական համակարգը կփոխարինվի մեկ այլ ոչ լեգիտիմ համակարգով: Եվրոպայում փոխակերպումների փորձը ցույց է տալիս, որ անցումային կառավարությունը ցանկություն ունի օրինականացնել իր գործողությունները դրանց իրականացումից հետո: Իրավական համակարգի իրական լեգիտիմությունը հնարավոր է միայն ժողովրդավարական ռեժիմում, երբ հասարակական ամենալայն շերտերն ազատ և գիտակցաբար մասնակցում են օրինաստեղծ գործընթացին, և յուրաքանչյուր անհատի երաշխավորված է սոցիալական ինքնաիրացում: Անցումային պետությունները, պայմանավորված բնակչությունից որոշակի օտարվածությամբ, սահմանափակում են քաղաքացիների առօրյա խնդիրների լուծմանն ակտիվ մասնակցության հնարավորությունները, ինչը հանգեցնում է երևակայական լեգիտիմացման: Քանի որ բարեփոխումների սոցիալական բազան ընդլայնվում է, օրենքի աջակցությունը լայն տարածում կստանա՝ դրանով իսկ բարձրացնելով իրավական համակարգի հեղինակությունն ու արդյունավետությունը:

Հաշվի առնելով անցումային շրջանի իրավական համակարգի բացահայտված ընդհանուր առանձնահատկությունները՝ այն կարելի է սահմանել որպես իրավական

¹⁵ См. в Бюллетень ЦИК. 1993. №7. էջ 5.

համակարգ, որն ապահովում է սոցիալական տեսակի փոփոխություն կառուցվածքային անավարտությամբ և լեգիտիմության ու գործողության մեխանիզմի ճգնաժամով: Որևէ հայեցակարգ սահմանելը, առավել ևս՝ նոր հայեցակարգ, որը նոր է մտնում արդեն կայացած կատեգորիաների համակարգ, բարդ խնդիր է: Ակնհայտ է, որ անհնար է առաջարկել անցումային իրավական համակարգի այնպիսի սահմանում, որը բանավեճ չառաջացնի և կրնդունվի անվերապահորեն: Ձևակերպված սահմանումը կարելի է համարել «աշխատանքային», որը կհղկվի և կզարգանա իրավական ոլորտում անցման մասին գիտելիքների ընդլայնմամբ:

Այս առումով, անցումային շրջանում իրավական համակարգում հակասությունների կտրուկ սրումը չպետք է անակնկալ էֆեկտ ստեղծի և անակնկալի բերի բարեփոխված հասարակությանը: Իրավական անկազմակերպվածությունն օբյեկտիվորեն կանխորոշված է հիմնարար սոցիալական վերափոխումներով և կազմում է սոցիալական խոշոր փոփոխությունների անբաժանելի մասը: Անցման էվոլյուցիոն ձևը կարող է զգալիորեն մեղմել հակասությունների սրումը: Իրավական համակարգը որոշակի հասարակության զարգացման ամենադրամատիկ անցումային ժամանակաշրջաններում մնում է կայուն և ապահովում է իր կառուցվածքում կայունության և դինամիկայի տարրերի համադրություն:

Եզրակացություն

Իրավական համակարգի զարգացման անցումային փուլերում նկատվում են ինչպես մարտահրավերներ, այնպես էլ հնարավորություններ: Չնայած անկայունությանը՝ անցումային իրավական համակարգերը հնարավորություն են տալիս վերափոխել հին իրավական կարգավորումները՝ ստեղծելով նոր, ավելի արդյունավետ համակարգ, որը կհամապատասխանի հասարակության զարգացման նոր փուլին: Իրավական համակարգի բարեփոխումների հաջողության համար անհրաժեշտ է իրավունքի և սոցիալական կյանքի ներդաշնակեցված զարգացում, ինչպես նաև իրավական նոր արժեքների և ինստիտուտների ամրապնդում:

Իրավական համակարգի վերափոխումը պայմանավորված է ոչ միայն արտաքին սոցիալական փոփոխություններով, այլև իրավագիտակցության մակարդակի վերափոխմամբ, որը նոր հիմքեր է ձևավորում իրավական նոր կարգավորման համար: Այս գործընթացում որոշակի գործառույթներ ժամանակավոր փոփոխության են ենթարկվում, բայց իրավական համակարգի հիմնական բաղադրիչները՝ օրենքը, իրավագիտակցությունը և իրավական ինստիտուտները, շարունակում են գոյություն ունենալ պահպանելով համակարգի շարունակականությունը:

Անցումային իրավական համակարգը բնորոշվում է կառուցվածքային անավարտությամբ և իրավական կարգավորման անկայունությամբ, ինչը ժամանակի ընթացքում հանգեցնում է նոր իրավական կարգի ձևավորմանը: Անցումային շրջաններում հասարակական կյանքը դեռևս շարունակում է զարգանալ իրավական հարաբերությունների միջոցով, իսկ իրավական համակարգի էվոլյուցիան հնարավոր

է միայն այն դեպքում, եթե դրա բաղադրիչներն ընդունակ են ադապտացվել հասարակության փոփոխվող պահանջներին:

Ի վերջո, իրավական համակարգի անցման գործընթացն իր մեջ ներառում է ոչ միայն իրավական ռեֆորմների իրականացում, այլև հասարակության ամբողջական վերափոխում, որի ընթացքում նոր սոցիալական արժեքներն ու հարաբերությունները փոխակերպվում են իրավական ինստիտուտների և նորմերի: Այսպիսով՝ իրավական համակարգի կայունությունը վերականգնվում է այն ժամանակ, երբ հասարակության նոր սոցիալական իրականությունը և դրա իրավական կարգավորումը ներդաշնակվում են՝ ապահովելով իրավական համակարգի նոր որակի կայուն զարգացում:

CONCEPT AND ESSENCE OF THE LEGAL SYSTEM OF THE TRANSITIONAL REGION

FANARJYAN LILIT

*Lawyer of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Adviser to the Director of JSC “Erkagluys”*

Annotation: The difference between transitional and stable states of the legal system is necessary for understanding the dynamics of the development of law. In the unstable (transitional) period, the components of the legal system (law, legal consciousness, legal institutions) undergo changes, reacting to social, political and economic changes. This period is characterized by value changes, contradictions and legitimacy problems that arise during the formation of new legal norms. Important features of the transitional legal system are: structural transformation, when the components of the legal system undergo qualitative changes, adapting to new social requirements; legal crisis and contradictions, because in the transition period there are legal uncertainties, collisions of norms and problems of legal regulation; crisis of legitimacy, when perception and acceptance of new legal norms require time, which leads to tension in relations between the society and the state; slow adaptation of the legal system, since political and social changes occur faster than adaptation of the legal system; formation of new legal institutions, because in the transition period new legal phenomena and institutions are formed, which in a certain period can become part of stable legal regulation. Thus, the transition of the legal system is an inevitable process caused by changes in society and accompanied by both the reorganization of legal structures and the crisis of legal regulation.

Key words: Legal system, Transition period, Stability, Legal awareness, Social changes, Supremacy of law, Legitimacy, Legal reform, Law principles, Constitutional order.

ПОНЯТИЕ И СУТЬ ПРАВОВОЙ СИСТЕМЫ ПЕРЕХОДНОГО РЕГИОНА

ՓԱՆԱՐԴՋՅԱՆ ԼԻԼԻՏ

Адвокат Палаты адвокатов РА,

Советник директора ЗАО «Еркаглуйс»

Аннотация: Различение переходных и стабильных состояний правовой системы необходимо для понимания динамики развития права. В нестабильный (переходный) период компоненты правовой системы (право, правосознание, правовые институты) претерпевают изменения, реагируя на социальные, политические и экономические изменения. Этот период характеризуется ценностными изменениями, противоречиями и проблемами легитимности, возникающими при формировании новых правовых норм. Важными особенностями переходной правовой системы являются: структурная трансформация, когда компоненты правовой системы претерпевают качественные изменения, адаптируясь к новым социальным требованиям; правовой кризис и противоречия, поскольку в переходный период возникают правовая неопределенность, коллизии норм и проблемы правового регулирования; кризис легитимности, когда восприятие и принятие новых правовых норм требуют времени, что приводит к напряженности в отношениях между обществом и государством; медленная адаптация правовой системы, поскольку политические и социальные изменения происходят быстрее, чем адаптация правовой системы; формирование новых правовых институтов, поскольку в переходный период формируются новые правовые явления и институты, которые в определенный период могут стать частью стабильного правового регулирования. Таким образом, транзит правовой системы — неизбежный процесс, обусловленный изменениями в обществе и сопровождающийся как реорганизацией правовых структур, так и кризисом правового регулирования.

Ключевые слова: Правовая система, Переходный период, Стабильность, Правосознание, Социальные изменения, Верховенство закона, Легитимность, Правовая реформа, Правовые принципы, Конституционный порядок.

Հոդվածը գրախոսվել է 12.09.2025
Ներկայացվել է տպագրության 26.09.2025

Оգտագործված գրականության ցանկ

- Ajani G. *By Chance and prestige: Legal Transplants in Russia and Eastern Europe* // *American journal of Comparative Law*. 1999. Vol. 43. No. 1. P. 95.
- Berman H.J. *Law and Revolution. The Formation of the Western Legal Tradition*. Cambridge and London, 1983. P. 34.
- Parsons T. *The Evolution of Societies*. New Jersey, 1977. P. 31.
- А. Фьюти. Комментарий к Конституции Украины // *Конституционное право: Восточноевропейское обозрение*. 1996. №3. С. 18.
- Бюллетень ЦИК. 1993. №7. С. 5.
- Варламова Н.В., Пахоленко Н.Б. *Между единогласием и волей большинства (политико- правовые аспекты консенсуса)*. М., 1997. С. 35.
- Венда В.Ф. *Волны прогресса*. М., 1989. С. 39.
- Вестник Временного правительства*. 1917. 14 сент.
- Дагель П.С. *Диалектика правового регулирования общественных отношений* // *Правоведение*. 1971. №1. С. 53.
- Ершов Ю.Г. *Человек. Социум. История (социально-философские проблемы теории исторического процесса)*. Свердловск, 1990. С. 83.
- Лившиц Р.З. *О легитимности закона* // *Проблемы ценностного подхода в праве: традиции и обновление*. М., 1996. С. 18-19.
- Питер Г. Соломон. *Проблемы развития правового строя в постсоветской России*. М., 1997. С. 50.
- Пригожин А.И. *Перестройка: переходные процессы и механизмы*. М., 1990. С. 55.
- Российское законодательство X-XX вв. Т. 9. Законодательство эпохи буржуазно- демократической революции*. М., 1994. С. 129.
- Сорокин П. *К вопросу об эволюции и прогрессе* // *Вестник психологии, криминальной антропологии и гипнотизма. Т. 8. Вып. 3. Берлин, 1922. С. 34*

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ В СФЕРЕ ПРОТИВОДЕЙСТВИЯ ДОМАШНЕМУ НАСИЛИЮ: ОПЫТ КАЗАХСТАНА И ЗАРУБЕЖНЫХ СТРАН

АКИМЖАНОВ ЕРИК

*Начальник факультета профессиональной
подготовки Костанайской академии МВД
Республики Казахстан им. Ширакбека Кабылбаева
кандидат юридических наук, полковник полиции
DOI: 10.63925/18294847-2025.op20-11*

Аннотация. Домашнее насилие продолжает оставаться острой социальной проблемой в Республике Казахстан, так и во всем мире. В данной статье анализируются правовые, институциональные и культурные аспекты противодействия домашнему насилию. Особое внимание уделяется оценке эффективности действующих механизмов защиты прав жертв, реализации законодательных инициатив, а также роли государственных и неправительственных организаций в решении данной проблемы. Также рассматриваются социально-экономические факторы, способствующие возникновению насилия в семье, и предлагаются конкретные меры, направленные на усиление профилактики и совершенствование правоприменительной практики.

Ключевые слова: домашнее насилие, бытовое насилие, семейно-бытовое насилие, противодействие, криминализация.

Развитие Республики Казахстан, как демократического государства неотделимо от постоянного совершенствования законодательства и укрепления правопорядка, основанного на признании и защите фундаментальных социальных ценностей. К числу таких ценностей относятся защита жизни и здоровья человека и гражданина, обеспечение условий для его достойного существования и развития в безопасном обществе. В то же время наличие противоправных проявлений в любом обществе неизбежно порождает напряженность и недоверие к государственным институтам. Это связано с тем, что обеспечение безопасности, защита прав и свобод граждан, а также эффективная борьба с преступностью являются ключевыми задачами любого современного правового, демократического и социального государства.

В Казахстане борьба с домашним насилием регулируется рядом законодательных актов. Ключевым документом является Закон Республики Казахстан «О профилактике бытового насилия», принятый в 2009 году [1]. Данный закон определяет формы насилия в семье и меры по его предотвращению, а также устанавливает правовые механизмы защиты жертв.

Президент Республики Казахстан Касым-Жомарт Токаев в своих выступлениях в

период с 2023 по 2024 годы неоднократно подчеркивал необходимость ужесточения мер ответственности за случаи домашнего насилия. В ходе брифинга, посвященного вопросам профилактики насилия в семейной сфере, состоявшегося в январе текущего года, он выразил поддержку за усиление ответственности за семейно-бытовое насилие [2].

А.М. Алибекова отмечает, что «существует необходимость дальнейшего реформирования норм административного и уголовного законодательства с целью защиты конституционных прав и свобод потерпевших в результате противоправных деяний в сфере семейно-бытовых отношений путем криминализации специальной нормы об ответственности за семейно-бытовое насилие» [3, С. 211].

За 2024 год в Казахстане полиция получила около 100 тысяч сообщений о семейном насилии. Были выданы 72 тысячи защитных предписаний, а по 16 тысячам дел приняты судебные решения. Женщинам и детям, пострадавшим от насилия, помогли кризисные центры. Сейчас в стране работает 69 таких учреждений, где помощь получили более 5,5 тысячи человек [4].

Как отметил Е. Карин, значительно снизилось количество фактов семейно-бытового насилия, так с начала 2025 года поступило на 20,5% меньше сообщений о бытовом насилии по сравнению с таким же периодом 2024 года. Также снизилось количество тяжких и особо тяжких бытовых преступлений. По итогам пяти месяцев 2025 года снизилась регистрация особо тяжких на 44% и тяжких преступлений в сфере семейно-бытовых отношений 29% [5].

Сфера противодействия домашнему насилию в Республике Казахстан претерпела значительные изменения.

Во-первых, в мае 2023 года в ст. 106-107 Уголовного кодекса Республики Казахстан были внесены поправки, ужесточающие наказание за причинение тяжкого и среднего вреда здоровью в случаях, когда жертва находится в материальной или иной зависимости от виновного лица. Это изменение законодательства прямо затрагивает проблему домашнего насилия.

Во-вторых, в июле 2023 года была изменена процедура регистрации заявлений о домашнем насилии: вместо заявительной системы была внедрена выявительная система.

В-третьих, 15 апреля 2024 года был подписан Закон «О внесении изменений и дополнений в некоторые законодательные акты Республики Казахстан по вопросам обеспечения прав женщин и безопасности детей». Принятый Закон ужесточает ответственность за совершение насильственных действий в отношении женщин и детей, включая случаи внутрисемейного насилия, с целью обеспечения их защиты от лиц, осуществляющих «абьюз», а именно:

- криминализированы умышленное причинение легкого вреда здоровью (ст. 108-1 УК РК) и побои (ст.109-1 УК РК);

- ужесточена ответственность за умышленное причинение средней тяжести (отменено наказание в виде ограничения свободы, стало только лишь лишение свободы сроком до

трёх лет) и тяжкого вреда здоровью (отменено наказание в виде ограничения свободы, стало только лишь лишение свободы сроком от трёх лет до восьми лет);

- истязание (ст.110 УК РК): исключено наказание в виде ограничения свободы, стало только лишение свободы на срок до трех лет (санкцию увеличили с двух до трех лет);

- изнасилование в отношении несовершеннолетнего (ст. 120 ч. 3 УК РК): лишение свободы на срок от пятнадцати до семнадцати лет, было заменено на срок от семнадцати до двадцати лет. В отношении малолетних исключена санкция, касательно лишения свободы на срок 20 лет, осталась только - пожизненное лишение свободы;

- за неисполнение или ненадлежащее исполнение обязанностей по воспитанию несовершеннолетних, соединенное с жестоким обращением (содержал наказание в виде административного ареста на десять суток, было увеличено до двадцати суток);

- предусмотрены новые принципы брачно-семейного законодательства, основанные на укреплении института брака и семьи, отцовства, материнства и детства, а также принцип обеспечения нравственного и духовного воспитания детей в духе уважения к общечеловеческим, национальным, традиционным, культурным и семейным ценностям;

- созданы правовые основы функционирования контакт-центра по вопросам семьи, защиты прав женщин и детей, в роли которого будет выступать юридическое лицо, определяемое уполномоченным органом в сфере информатизации [6].

Несмотря на наличие законодательной базы, существует ряд проблем в ее применении. Одной из основных является недостаточное использование мер правоприменения, таких как защитное предписание и административные санкции в отношении агрессоров. Препятствия включают недостаточную осведомленность жертв о своих правах, а также культурные и социальные стереотипы, сдерживающие обращение за помощью.

Культурные и социальные нормы играют значительную роль в распространении домашнего насилия в Казахстане. Традиционные патриархальные взгляды на семью и гендерные роли могут способствовать тому, что многие виды насилия воспринимаются внутри семьи как «нормальные». В некоторых случаях женщины и дети подвергаются насилию из-за экономической зависимости или страха общественного осуждения, в случае, если они обратятся за помощью.

